

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն    Հ Ա Ն Դ Ե Ս

---

---

2005

4

---

---

Հրատարակվում է  
Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի  
գիտական խորհրդի որոշմամբ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլխավոր խմբագիր՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ  
ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՀ նախագահի առաջին օգնական  
ՀՀ նախագահի օգնական  
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի  
նախագահ

ՎԱՐԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ  
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
(պատասխանատու քարտուղար)

ԷՂՈՒՐԴ ՕՐԴՅԱՆ  
ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ  
ՄԵԼՍ ՄՎՐՏՈՒՄՅԱՆ  
ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ  
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
հոգեբանական գիտությունների դոկտոր  
հոգեբանական գիտությունների դոկտոր  
քաղաքագիտության դոկտոր  
փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»  
Երևան

**ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЕ**

*Главный редактор:*

**Армен Арутюнян** доктор юридических наук, профессор

*Совет редакторов:*

**Армен Геворгян** первый помощник президента РА  
**Виген Саргсян** помощник президента РА  
**Манвел Бадалян** председатель Совета гражданской службы РА  
**Ваге Степанян** доктор юридических наук, профессор  
**Гагик Арутюнян** доктор юридических наук, профессор  
**Гарник Сафарян** доктор юридических наук, профессор  
**Юрий Суварян** доктор экономических наук, профессор  
**(ответственный секретарь)**  
**Эдуард Ордян** доктор экономических наук, профессор  
**Грант Аванесян** доктор психологических наук  
**Мелс Мкртумян** доктор психологических наук, профессор  
**Гарик Керян** доктор политических наук  
**Мариам Маргарян** кандидат философских наук, доцент

---

*Public Administration Academy of the  
Republic of Armenia*

**PUBLIC ADMINISTRATION**

*Chief editor:*

**Armen Harutyunyan**, doctor of Sciences (Law), Professor

*Board of editors:*

**Armen Gevorgyan** chief assistant to the President of the RA  
**Vigen Sargsyan** assistant to the President of the RA  
**Manvel Badalyan** president of Civil Service Council of the RA  
**Vahe Stepanyan** doctor of Sciences (Law), Professor  
**Gagik Harutyunyan** doctor of Sciences (Law), Professor  
**Garnik Safaryan** doctor of Sciences (Law), Professor  
**Yuri Suvaryan** doctor of Sciences (Economics), Professor  
**(responsible secretary)**  
**Eduard Ordyan** doctor of Sciences (Economics), Professor  
**Hrant Avanesyan** doctor of Sciences (Psychology)  
**Mels Mkrtyunyan** doctor of Sciences (Psychology), Professor  
**Garik Keryan** doctor of Sciences (Political Sciences)  
**Mariam Margaryan** doctor of Philosophy, Docent

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **Հանրային կառավարում 6**

### **Վարդան բոսանջան**

#### **Արթուր Թասանջան**

*Հանրային ծառայությունների գործողությունների կարգավորումը  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ..... 6*

## **Իրավագիտություն 18**

### **Արսեն Հարությունյան**

*Նախագահական իշխանությունը ՋԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ*

*ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ..... 18*

### **Արսնու Գեղամյան**

*ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅՅԵՍՎԱՐԳԸ..... 24*

### **Լիլիթ Ղազարյան**

*ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄ..... 37*

## **Տնտեսագիտություն (կառավարում) 51**

### **Արսև Գրիգորյան**

*ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 51*

## **Հոգեբանություն 65**

### **Սպեկտան Հարությունյան**

*ՍՈՑԻԱԼԻԶԱՑՈՒՄ-ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ (ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶԱՑՈՒՄ) ՈՐՊԵՍ*

*ԵՐԿԱԿԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՈՒՂՈՒ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ..... 65*

### **Սրբուհի Գեղորգյան**

*ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԺԱՍՆԱԿԱԿԻՑ*

*ՎԻՃԱԿԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 77*

### **Էլիսա Ասրիան**

*ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՆ ՈՐՊԵՍ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ*

*ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ..... 88*

## **Քաղաքագիտություն 96**

### **Տիգրան Թորոսյան**

*ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՈՐՊԵՍ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ*

*ՏՐԱՆՏՈՐՄԱՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ..... 96*

### **Սարիս Սարգսյան**

*ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՂ..... 111*

## **Գրքերի տեսություն 123**

## **Հուշագիր հեղինակին 125**

## СОДЕРЖАНИЕ

<b>Публичное управление</b>	<b>6</b>
<b>В. БОСТАНДЖАНЫЯН</b> <b>А. ТАМАЗЯН</b> <i>РЕГУЛИРОВАНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ОБЩЕСТВЕННЫХ УСЛУГ В СФЕРАХ НАТУРАЛЬНОЙ МОНОПОЛИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ</i> .....	6
<b>Юридические науки</b>	<b>18</b>
<b>А. АРУТЮНЯН</b> <i>ПОСЛЕДНИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПРЕЗИДЕНТСКОЙ ВЛАСТИ В МИРЕ</i> .....	18
<b>А. ГЕГАМЯН</b> <i>КОНЦЕПЦИЯ ЕВРОПЕЙСКОГО КОНСТИТУЦИОННОГО ПРАВА</i> .....	24
<b>Л. КАЗАРЯН</b> <i>КОНСТИТУЦИОННОСТЬ КАК ПРАВОВОЙ РЕЖИМ ФУНКЦИОНИРОВАНИЯ ДЕМОКРАТИЧЕСКОГО ГОСУДАРСТВА</i> .....	37
<b>Экономика (управление)</b>	<b>51</b>
<b>А. ГРИГОРЯН</b> <i>ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЕСТЕСТВЕННЫХ МОНОПОЛИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ</i> .....	51
<b>Психология</b>	<b>65</b>
<b>С. АРУТЮНЯН</b> <i>СОЦИАЛИЗАЦИЯ-ИНДИВИДУАЛИЗАЦИЯ – КАК ДВУЕДИНЫЙ ПРОЦЕСС В КОНТЕКСТЕ ЖИЗНЕННОГО ПУТИ ЧЕЛОВЕКА</i> .....	65
<b>С. ГЕВОРКЯН</b> <i>СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ИССЛЕДОВАНИЙ ПРОБЛЕМЫ КАТЕГОРИИ ВЗАИМОДЕЙСТВИЯ В СОЦИАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ</i> .....	77
<b>Э. АСРИЯН</b> <i>ПОЛИТИЧЕСКИЙ МИФ КАК СРЕДСТВО ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ НА ИЗБИРАТЕЛЯ</i> .....	88
<b>Политология</b>	<b>96</b>
<b>Т. ТОРОСЯН</b> <i>ИНОВАЦИЯ НАУКИ КАК ОСНОВНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ПОСТСОВЕТСКОЙ ТРАНСФОРМАЦИИ</i> .....	96
<b>М. МАРГАРЯН</b> <i>ПРАВЯЩАЯ ЭЛИТА КАК ОЛИЦЕТВОРИТЕЛЬ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ</i> .....	111
<b>Обзор книг</b>	<b>123</b>
<b>Памятка автору</b>	<b>125</b>

# CONTENTS

<b>Public Administration</b>	<b>6</b>
<hr/> <hr/>	
V. BOSTANJYAN A. TAMAZYAN <i>REGULATION OF PUBLIC SERVICES IN THE SPHERES OF NATURAL MONOPOLIES OF THE REPUBLIC OF ARMENIA</i> .....	6
<b>Law</b>	<b>18</b>
<hr/> <hr/>	
A. HARUTYUNYAN <i>THE LAST TRENDS OF THE PRESIDENTIAL POWER DEVELOPMENT IN THE WORLD</i> .....	18
A. GEGHAMYAN <i>EUROPEAN CONSTITUTIONAL LAW CONCEPT</i> .....	24
L. GHAZARYAN <i>CONSTITUTIONALITY AS A LEGAL REGIME OF THE FUNCTIONING OF A DEMOCRATIC STATE</i> .....	37
<b>Economics (management)</b>	<b>51</b>
<hr/> <hr/>	
A. GRIGORYAN <i>PROBLEMS OF STATE REGULATION OF NATURAL MONOPOLIES IN THE REPUBLIC OF ARMENIA</i> .....	51
<b>Psychology</b>	<b>65</b>
<hr/> <hr/>	
S. HARUTYUNYAN <i>SOCIALISATION-INDIVIDUALISATION AS A DUAL PROCESS IN THE CONTEXT OF FELONG WAY OF A PERSON</i> .....	65
S. GEVORKYAN <i>MODERN STATE RESOUCH OF PROBLEM INTERACTION IN SOCIAL PHYCOLOGY</i> .....	77
E. ASRIYAN <i>PSYCHOLOGICAL ASPECTS OF INTERACTION OF THE POLITICAL MYTH IN THE ELECTION CAMPAIGN</i> .....	88
<b>Political science</b>	<b>96</b>
<hr/> <hr/>	
T. TOROSYAN <i>SCIENCE TRASNFORMATION AS AN IMPORTANT ELEMENT OF POST-SOVIET TRANSITION</i> .....	96
MARIAM MARGARYAN <i>RULING ELITE AS AN INCARNATOR OF THE POLITICAL CULTURE</i> .....	111
<b>The review of books</b>	<b>123</b>
<hr/> <hr/>	
<b>Instruction to the author</b>	<b>125</b>
<hr/> <hr/>	

**ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՁՅԱՆ**

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

**ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՁՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու*

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ  
ՄԵՆԱՇՆՈՐՅԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

Ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը համընթաց անցումային երկրներում բավականին բարդանում է պետական կառավարման գործընթացը՝ կապված պետական գործառույթների վերափոխման, կարգավորող կառուցակարգերի վերակառուցման և մի շարք այլ գործոնների հետ: Օբյեկտիվ մի շարք օրինաչափությունների ազդեցությամբ ընդլայնվելով՝ պետական կառավարման համակարգն ընդունում է այնպիսի շրջանակ, որն իր էությամբ և բովանդակությամբ շատ ավելին է, քան պետական կառավարման ավանդական պատկերացումները: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ կառավարման այս ձևը ստացել է «հանրային կառավարում» անվանումը: Այլ կերպ ասած, այս հասկացությունը. «... իր բովանդակությամբ ավելի լայն ու տարողունակ է, քան պետական կառավարումը և, որպես երևույթ, հանրային կառավարումը հիմնականում բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումը էվոլյուցիոն զարգացման շնորհիվ վերաճել է հանրային կառավարման» [1, էջ 5]:

Կառուցվածքային առումով հանրային կառավարումը, բացի պետական կառավարման համակարգից, ներառում է նաև քաղաքացիական հասարակության անբաժանելի մասը կազմող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ տեղական ինքնակառավարումը, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտը, որն, իր հերթին, պայմանականորեն կարելի է բաժանել պետական-կառավարչական (պաշտպանություն, ոստիկանություն, ազգային անվտանգություն և այլն) և տնտեսական բնույթի ծառայությունների: Տնտեսական բնույթի հանրային ծառայությունները հատուկ նշանակություն են ձեռք բերում հատկապես շուկայական հարաբերությունների

պայմաններում և հիմնականում հանդես են գալիս բնական մենաշնորհների տեսքով: Վերջիններիս պետական կարգավորման համակարգը համեմատաբար կարճ պատմություն ունի մեր հանրապետությունում, ինչը հիմնականում պայմանավորված էր մրցակցային դաշտի օրենսդրական կանոնակարգման դանդաղ ընթացքի, այս ոլորտների մասնավորեցման արագ տեմպերի և նմանատիպ այլ գործոնների առկայության հետ, որի արդյունքում բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգը, ըստ էության, դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Տվյալ պարագայում, հասկանալի է, ի հայտ են գալիս մի շարք հիմնախնդիրներ, որոնց հնարավորինս արագ լուծումը ժամանակի հրամայական պահանջն է, իսկ դրանց լուծման արդյունավետությունից էլ հիմնականում կախված կլինեն այս համակարգի հետագա գործունեության արդյունքները և սպառողների շահերի ու իրավունքների պաշտպանվածության մակարդակը: Այս առումով, որպես հրատապ կամ արդիական հիմնախնդիրներ, կարծում ենք, անհրաժեշտ է առանձնացնել բնական մենաշնորհի ոլորտների և այդ ոլորտներում գործունեության տեսակների շրջանակի հստակ սահմանումը, ոլորտի պետական կարգավորման էության ու բովանդակության և կարգավորող մարմնի կարգավիճակի ու գործառույթների հստակեցումը:

Բնական մենաշնորհի ոլորտների և այդ ոլորտներում գործունեության տեսակների շրջանակի առումով, ՀՀ գործող օրենսդրությամբ որպես բնական մենաշնորհի կամ հանրային ծառայությունների<sup>1</sup> ոլորտներ ամրագրված են՝

- էներգետիկայի բնագավառը, այդ թվում՝ էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերը,
- ջրային համակարգը, այդ թվում՝ խմելու, ոռոգման, տեխնիկական, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը,
- հեռահաղորդակցության, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը [2]:

Ինչ վերաբերում է բնական մենաշնորհի ոլորտներում կարգավորման ենթակա գործունեության տեսակներին, հարկ է նշել, որ դրանք օրենսդրորեն սահմանված են միայն էլեկտրաէներգետիկայի բնագավառի համար, և որոնց ցանկում, մասնավորապես, ներառվել են հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ դրանց համակցված արտադրությունը), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական

<sup>1</sup> «Հանրային ծառայություններ» ասելով այսուհետ նկատի կունենանք այս հասկացության ներ իմաստը կամ բնական մենաշնորհների կողմից մատուցվող տնտեսական բնույթի հանրային ծառայությունները:



գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայությունների մատուցումը, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցումը կամ վերականգնումը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցումը, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայությունների մատուցումը (այս ցանկից բացառություն է կատարված միայն ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման այն համակարգերի համար, որոնց դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ-ը) [3]:

Չնայած գործունեության որոշակի տեսակների սահմանմանը, այդուհանդերձ, նշված ցանկից չի երևում, թե գործունեության այս տեսակներից որո՞նք են հանդիսանում բնական մենաշնորհներ, որի արդյունքում հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող մարմնի իրավասության տակ են ընկնում ինչպես էներգետիկայի բնագավառի, այնպես էլ ջրային համակարգի և հեռահաղորդակցության ոլորտի գործունեության բոլոր տեսակները: Բնականաբար, նման իրավիճակը խիստ բացասական ազդեցություն է թողնում ոլորտի պետական կարգավորման համակարգի կայացման գործընթացի վրա, քանի որ նախ նշված ոլորտների գործունեության մրցակցային տեսակները (կարգավորման խստության, լիցենզավորման և այլ տեսանկյուններից) գրեթե գտնվում են նույն դաշտում, ինչ-որ բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության տեսակները՝ միաժամանակ խտրական պայմաններում գտնվելով նաև մրցակցային դաշտում գործող սուբյեկտների համեմատությամբ, երկրորդ՝ տվյալ մոտեցումն օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ է ստեղծում իրականում մրցակցային հանդիսացող գործունեության տեսակները բնական մենաշնորհի կարգավորման ոլորտից դուրս բերելու և մրցակցային դաշտ տեղափոխելու առումով, և երրորդ՝ իրականում մրցակցային հանդիսացող գործունեության տեսակների զծով սակագնային (թեկուզև անուղղակի ձևով) կարգավորումը խաթարում է այդ գործունեության ոլորտում գնագոյացման շուկայական կառուցակարգը՝ գործնականում արհեստականորեն բարձր մակարդակի վրա պահելով համապատասխան ծառայությունների սակագները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետության բնական մենաշնորհի ոլորտների և դրանց բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության տեսակների շրջանակն աչքի է ընկնում մի կողմից ծայրահեղ «խորությամբ»՝ այն ոլորտներում, որոնք օրենսդրորեն սահմանվել են որպես բնական մենաշնորհի ոլորտներ (այսինքն՝ ընդգրկելով այդ ոլորտներում գործունեության գրեթե բոլոր տեսակները), իսկ մյուս կողմից՝ զգալի «նեղությամբ», այն իմաստով, որ Հայաստանում բնական մենաշնորհի ոլորտ կարող են հանդիսանալ նաև այն-

պիսիները, որոնք մրցակցային են այլ (հատկապես՝ մեծ տարածք ունեցող) երկրներում: Հետևաբար, շատ կարևոր է օրենսդրորեն հստակ ամրագրել, որ Հայաստանում բնական մենաշնորհի գործունեության տեսակներ են հանդիսանում էներգետիկայի բնագավառի, ջրային համակարգի և հեռահաղորդակցության ոլորտի ոչ մրցակցային ծառայությունները, ինչպես նաև, հիմք ընդունելով «բնական մենաշնորհ» հասկացության դասական սահմանումը<sup>1</sup>, երկաթուղային փոխադրումները, ավիակարգավարական (ավիադիսպետչերական) ծառայությունները, ոչ եթերային (մալուխային) հեռախոսակապի և Երևանի հեռուստաաշտարակի ծառայությունները, ինչպես նաև փոստային կապի բնագավառի ոչ մրցակցային ծառայությունները (մասնավորապես՝ փոստային կապի ազգային օպերատորի և պետական սուրհանդակային կապի ծառայությունները):

Բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգի կայացման ու կատարելագործման տեսանկյունից առաջնային լուծում պահանջող հիմնահարց է այս ոլորտների պետական կարգավորման էության և բովանդակության հստակեցումը, որը կարևոր նշանակություն ունի հատկապես պետական կարգավորման մարմնի գործառույթների, լիազորությունների և իրավասությունների ճիշտ սահմանման տեսանկյունից: «Բնական մենաշնորհների կարգավորում» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է որպես պետական քաղաքականության մի մաս, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը [4]:

Նման սահմանումը, ելնելով բնական մենաշնորհի ոլորտների առանձնահատկություններից, կարծում ենք, ոչ միայն լիարժեք չի արտահայտում այս ոլորտների պետական կարգավորման էությունը, այլև պարունակում է որոշ սկզբունքային թերություններ և հակասություններ: Մասնավորապես, կարգավորվող անձանց համար գործունեության միատեսակ պայմանների ստեղծման նպատակի ամրագրումը սկզբունքորեն հակասում է ոչ միայն բնական մենաշնորհի տարբեր ոլորտների, ինչպես նաև նույն ոլորտում իրականացվող գործունեության տարբեր տեսակների յուրահատուկ կարգավորման անհրաժեշտության գաղափարին, այլև

<sup>1</sup> Ըստ այդ սահմանման՝ բնական մենաշնորհն ապրանքային շուկայի այնպիսի վիճակն է, որի դեպքում պահանջարկի բավարարումը՝ պայմանավորված արտադրության մասշտաբի արդյունավետությամբ, ձեռնտու է մրցակցության բացակայության պայմաններում, իսկ բացառիկ իրավունքով մատակարարվող ապրանքները (ծառայությունները, աշխատանքները) փոխադարձ փոխարինելի չեն:

արտերկրում և Հայաստանում կիրառվող պրակտիկային: Մյուս կողմից, ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը նույնպես չի կարող կարգավորման հատուկ կամ ընդգծված նպատակ հանդիսանալ, առավել և՛ բնական մենաշնորհի առանձին ոլորտներում կատարված ապապետականացման գործընթացների ֆոնի վրա, քանի որ ռեսուրսների արդյունավետ օգտագործումն արդեն իսկ ենթադրում է նվազագույն ծախսերով առավելագույն օգուտի ստացման ռազմավարություն: Այս դեպքում սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովման խնդիրը, որն իրականում պետք է դրված լինի կարգավորող մարմնի գործառույթների հիմքում, կնդվի հետին պլան՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Այսինքն՝ խոսքը պետք է գնա ոչ միայն սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման, այլև հասարակական առավելագույն օգուտի ապահովման մասին, որի արտացոլումն էլ կլինի բնակչության բոլոր խավերի համար բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատչելի ծառայությունների մատուցման ապահովումը:

Բացի այդ, նշված խնդրի առումով հակասություն է առաջանում նաև սահմանված նպատակի և գործնականում կիրառվող պրակտիկայի միջև, թեկուզ այն պատճառով, որ շահույթի նորմայի սահմանման (սահմանափակման) ճանապարհով կարգավորվող սակագների հաստատումն արդեն իսկ սահմանափակում է բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից առավելագույն օգուտի ստացման հնարավորությունը և այդպիսի նպատակ հետապնդելու մղումը: Այստեղ հարկ է նշել նաև ակնհայտ այն փաստը, որ տվյալ ոլորտներում «գործում» է առավելագույն շահույթի սահմանափակման օբյեկտիվ կառուցակարգը՝ կապված այն հանգամանքի հետ, որ բնական մենաշնորհների կողմից մատուցվող հանրային ծառայությունների սպառումը, ըստ էության, երաշխավորված և կայուն է, ինչն էլ առաջնային է դարձնում ոչ թե առավելագույն, այլ կայուն շահույթի ստացման նպատակը:

Այս առումով, կարծում ենք, բնական մենաշնորհի ոլորտներում պետական կարգավորման նպատակները պետք է բխեն այդ կարգավորման սկզբունքներից, որոնցից հատկանշական պետք է համարել հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող գործունեություն իրականացնող անձանց և սպառողների շահերի հավասարակշռումը, բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասարակական շահերի գերակայության ապահովումը, ըստ անհրաժեշտության կարգավորման տարբերակված մեթոդների, սկզբունքների և մոտեցումների կիրառումը, բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության տեսակներն աստիճանաբար (հնարավորության առկայության դեպքում) մրցակցային ոլորտ տեղափոխումը և մրցակցության խթանումը, բնական մենաշնորհի ոլորտներում ներդրումների խրախուսումը և անվտանգության ապահովումը, ի շահ հասարակության՝

ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը, ինչպես նաև հասարակության համար կարգավորման թափանցիկության ապահովումը:

Բնական մենաշնորհների պետական կարգավորման բովանդակության առումով, կարծում ենք, անհրաժեշտ է սահմանել, որ այն կայանում է բոլորի համար հասկանալի և հստակ «խաղի կանոնների» ստեղծման, բնական մենաշնորհների զարգացման ռազմավարական ուղղությունների հստակ ամրագրման և այդ ուղղություններով պետական աջակցության ու կարգավորվող անձանց բնականոն գործունեության ապահովման մեջ: Այսինքն՝ տվյալ հարցում միայն բնական մենաշնորհների ինքնուրույնության սահմանափակումները և դրանց մանարամասն կանոնակարգումը չի կարող տալ այն արդյունքը, որը պետք է ակնկալել ոլորտում իրականացվող համակարգային վերափոխումների հետևանքով: Ուստի, անհրաժեշտ է վերաիմաստավորել բնական մենաշնորհների պետական կարգավորման համակարգի կազմակերպման մոտեցումները, ինչպես նաև կատարելագործել դրանց իրականացման կառուցակարգերը:

Բնականաբար, տվյալ գործընթացն անհրաժեշտ է սկսել բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման մարմնի կարգավիճակի հստակեցումից, որի առումով ներկայումս գոյություն ունեցող իրավիճակը չի կարելի քիչ թե շատ բավարար համարել՝ կապված որոշակի հանգամանքների հետ: Մասնավորապես, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում բնական մենաշնորհի կամ հանրային ծառայությունների ոլորտում պետական կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (Հանձնաժողով), որը գործում է ինչպես նշված օրենքով, այնպես էլ ճյուղային օրենքներով նրան վերապահված լիազորությունների հիման վրա և ինքնուրույն է իր իրավասությունների շրջանակում: Այսինքն՝ համաձայն օրենքի մեր հանրապետությունում պետք է գործի կարգավորող մեկ մարմին, այնինչ՝ իրականում բնական մենաշնորհի ոլորտներում գործունեության առանձին տեսակների գծով կարգավորող գործառույթներ են իրականացնում նաև պետական այլ մարմիններ: Այստեղ կարևոր է նշել, որ խոսքը չի գնում ընդհանուր առմամբ կարգավորող գործառույթների մասին, առավել ևս՝ բնական մենաշնորհի ոլորտներում գործունեության մրցակցային տեսակների մասով (բնականաբար, այս դեպքում տարբեր մարմիններ կարող են ունենալ իրենց ամրակցված կարգավորող լծակներ): Տվյալ դեպքում խոսքը գնում է այնպիսի գործառույթների մասին, որոնք կամ հանդիսանում են Հանձնաժողովի գործառույթների բաղկացուցիչ մասը, կամ կանխորոշում (էականորեն ազդում) են Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումների վրա, կամ էլ հնարավորություն չեն տալիս Հանձնաժողովին՝ որոշումների ընդունման ժամանակ համակողմանի հաշվի առնել հարակից ոլորտների իրավիճակը և որոշման կայացման համար էական հանդիսացող հանգամանքները:

Գործառույթների մասով առկա հիմնահարցերը, մեր կարծիքով, կայանում են հետևյալում:

Եթե Հանձնաժողովի ձևավորման ժամանակ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթները գրեթե ամբողջությամբ և անփոփոխ փոխանցվեցին կարգավորող հիմնական մարմնին՝ Հանձնաժողովին, ապա դրանից հետո ընդունված այլ օրենքներում (օրինակ՝ ՀՀ ջրային նոր օրենսգրքում, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում և այլն) պետական կառավարման համապատասխան լիազորված մարմինների գործառույթներում և լիազորություններում ամրագրվեցին այնպիսիները, որոնք, ըստ էության, պետք է վերագրվեին հենց այս Հանձնաժողովին: Այս հանգամանքը, որում, կարծում ենք, քիչ դեր չխաղացին նաև համապատասխան պետական մարմինների գերատեսչական շահերի ազդեցությունը, որոշակի անհաշվելիչ շրջանում ամրագրված առաջացրեցին Հանձնաժողովի կարգավորման ոլորտի և նրա կարգավորող գործառույթների և իրավասությունների միջև:

Մյուս կողմից, սպառողներին էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարումը (ծառայությունների մատուցումը) կատարվում է Հանձնաժողովում գրանցման ենթակա մատակարարման պայմանագրերի համաձայն (որոնցով մատակարարը պարտավորվում է այդ պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մատակարարել էներգիա, բնական գազ, իսկ սպառողը՝ ընդունել դա և վճարել դրա դիմաց) [5], սակայն այդ պայմանագրերի կատարման հսկողության գործառույթը դրված է միայն պայմանագրի կողմերի վրա, ինչն, ըստ էության, սպառողների լայն շրջանակին գործնականում դարձնում է գրեթե անպաշտպան:

Բացի այդ, ջրային համակարգում Հանձնաժողովին զուգահեռ գործում են միանգամից մի քանի պետական և խորհրդատվական մարմիններ, և չնայած Հանձնաժողովին է վերապահված ոչ մրցակցային ջրամատակարարման կարգավորող հիմնական գործառույթները, այդուհանդերձ, մյուս մարմինները նույնպես օժտված են այնպիսի լիազորություններով, որոնք կարող են ազդեցություն ունենալ Հանձնաժողովի գործունեության և նրա կողմից ընդունվող որոշումների վրա: Մասնավորապես, ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված է այնպիսի մարմինների ձևավորում, ինչպիսիք են՝ Ջրի ազգային խորհուրդը, Ջրի ազգային խորհրդի վեճեր լուծող հանձնաժողովը, Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը (ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն), ջրավազանային կառավարման (տարածքային) մարմինները և Ջրային համակարգերի կառավարման մարմինը, որոնց լիազորությունները և գործառույթները բավականին շատ են «խաչաձևվում» [6]:

Մասնավորապես, ըստ ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ Հանձնաժողովը պետական կառավարման գործառույթներ իրականացնող անկախ մարմին է, որը մշակում և իրականացնում է ջրային հարաբերություններում սակագնային քաղաքականությունը և ոչ մրցակցային ջրամատակարարներին տալիս է ջրային համակարգերի օգտագործման

թույլտվությունները՝ ՀՀ ջրային օրենսգրքի դրույթներին համապատասխան: Վերջինս կարևորվում է այնքանով, որքանով ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունները բնական մենաշնորհի հանդիսացող սուբյեկտներին Հանձնաժողովի կարգավորման ոլորտում ներգրավելու պարտադիր պայմաններից մեկն է (ինչը Հանձնաժողովը չի կարող միայնակ որոշել), իսկ ՀՀ ջրային օրենսգրքում կարգավորման այլ սկզբունքներ կամ մեթոդներ նախատեսված լինելու դեպքում Հանձնաժողովը պարտավոր է լինելու առաջնորդվել հենց այս օրենսգրքով և ոչ թե «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով, քանի որ օրենսգիրքն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան ցանկացած օրենք: Նշված թույլտվությունների «կշիռը» հստակ պատկերացնելու համար բավական է ուշադիր ընթերցել ՀՀ ջրային օրենսգրքի համապատասխան դրույթները, համաձայն որոնց՝

- յուրաքանչյուր ոչ մրցակցային ջրամատակարար պարտավոր է ունենալ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն,
- այդ թույլտվությունը ներառում է ջրային այն համակարգի նկարագրությունը, որի միջոցով պետք է իրականացվի ոչ մրցակցային ջրամատակարարումը, իսկ ոչ մրցակցային ջրային համակարգը համարվում է տվյալ ջրային համակարգի անբաժանելի մասը,
- յուրաքանչյուր ջրային համակարգի օգտագործման թույլտվությամբ սահմանվում և ամրագրվում է ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգի օգտագործման իրավունքը, մատուցվող ծառայությունների սակագները, մատուցվող ծառայությունների որակին ներկայացվող պահանջները և այլն,
- ջրային համակարգի օգտագործման թույլտվությունը պետք է համապատասխանի օրենսգրքի, ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և համապատասխան ջրավազանային կառավարման պլանների պահանջներին,
- Հանձնաժողովը համապատասխան պետական կառավարման մարմիններին հնգօրյա ժամկետում պետք է ծանուցի քննարկվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության հայտի մասին, իսկ այդ մարմինները, ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, պետք է ապահովեն հայտի քննարկումն ու կարծիքների տրամադրումը և այլն:

Սա, իր հերթին, նշանակում է, որ ջրային ոլորտում Հանձնաժողովի համար, անկախ իր կամքից և հիմնավորվածությունից, գերակա են դառնում ոչ թե բնական մենաշնորհի հանդիսացող ջրային համակարգերի սակագնային կարգավորումը (ինչն այս Հանձնաժողովի առաջնահերթ խնդիրն ու գործառույթն է), այլ ընդհանուր առմամբ ջրային համակարգերի կառավարումը՝ այն էլ միայն ոչ մրցակցային ջրամատակարարների մասով և նշված մարմինների հետ համատեղ: Հասկանալի է, որ այս պարագայում արդյունավետ սակագնային կարգավորման մասին ավելորդ է դառնում խոսելը՝ հիմնավոր կասկածի տակ դնելով նաև Հանձնաժողովի անկախ մարմին լինելու իրական հնարավորությունը:

Կազմակերպական և լիազորությունների առումով շատ ավելի անհասկանալի իրավիճակ է ձևավորվել հեռահաղորդակցության և փոստային կապի ոլորտներում, որտեղ, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, Հանձնաժողովն ընդհանրապես որևէ լիազորություն կամ գործառույթ չունի: Մասնավորապես, «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով հեռահաղորդակցության ծառայությունների համար հատկացված ռադիոհաճախականության տիրույթի բաշխման և հեռահաղորդակցության արբանյակների ուղեծրային դիրքերի օգտագործման կարգավորման, ինչպես նաև օգտագործման կարգի և պայմանների հաստատման գործառույթը (ինչը պետության բացառիկ իրավունքն է) դրված է այս բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության վրա: Նույն օրենքի 16-րդ հոդվածով նրան է վերապահված նաև բացառիկ իրավունքով մատուցվող հեռահաղորդակցության ծառայությունների սակագների հաստատման լիազորությունը, իսկ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով բոլոր լիազորությունները և գործառույթները վերապահված են ՀՀ կառավարությանն ու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը: Եթե փոստային կապի ոլորտում նման իրավիճակն ինչ-որ տեղ հասկանալի է (այն իմաստով, որ փոստային ծառայությունները գործող օրենքներով ներկայումս չեն դիտարկվում որպես բնական մենաշնորհի ծառայություններ), ապա հեռահաղորդակցության ոլորտի մասով այս իրավիճակն ընդհանրապես հասկանալի չէ և ուղղակիորեն մատնանշում է բնական մենաշնորհի ոլորտների կարգավորման բնագավառում մեկից ավելի պետական մարմինների գոյության մասին:

Վերը շարադրվածը, կարծում ենք, արդեն իսկ բավական է համոզվելու համար, որ բնական մենաշնորհների պետական կարգավորման կառուցակարգի կատարելագործման առաջնահերթ ուղիներից մեկը պետք է կայանա մեկ միասնական, գործառութային անկախությամբ, անհրաժեշտ լծակներով, լիազորություններով, իրավունքներով ու պարտականություններով օժտված անկախ պետական մարմնի ստեղծման մեջ: Նշենք նաև, որ մեկ միասնական պետական մարմին ասելով պետք է հասկանալ ոչ միայն կազմակերպական, այլև բնական մենաշնորհների կարգավորման համապատասխան գործառութների իրականացման առումով միակ կառուցվածքային միավորը: Դա կարելի է կատարել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի բազայի վրա, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում հիշատակված օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ, իսկ որ ավելի նպատակահարմար կլինի՝ մշակել և ընդունել նոր օրենք: Վերջինս պետք է ունենա այնպիսի տրամաբանություն, ըստ որի Հանձնաժողովի լիազորությունները տարածվեն բնական մենաշնորհի հանդիսացող բոլոր ոլորտների և սուբյեկտների վրա՝ անկախ դրանց ռազմավարական կամ այլ բնույթից, Հանձնաժողովի կողմից կայացվող որոշումների վրա բացառվեն ուղղակի կամ անուղղակի ներգործության հնարավորություններ:

րը, իսկ բնական մենաշնորհի ոլորտներում կիրառվող կարգավորող գործառնություններն ունենան գերակա նշանակություն՝ նաև այդ ոլորտներում գործունեության մրցակցային տեսակների պետական կարգավորման տեսանկյունից: Այս մարմնի վրա պետք է դրվեն նաև բոլոր տեսակի հարցերի լուծման պատասխանատվությունը՝ բացառությամբ միմիայն դատական կարգով լուծման ենթական հարցերի:

Պետական կարգավորման մեկ միասնական մարմնի ստեղծումը շահավետ է նաև տնտեսական և տեղեկատվական առումներով. նախ՝ հնարավորինս նեղանում է կառավարչական պետական մարմնի ֆինանսավորման անհրաժեշտությունը և փոքրանում է պետական բյուջեից համապատասխան հատկացումների կատարման չափերը (պետական մյուս մարմինների աշխատակազմերի օպտիմալացման արդյունքում), երկրորդ՝ տեղի է ունենում տեղեկատվական հոսքերի կենտրոնացում և պարզեցում ու համեմատաբար էժանանում է այդ հոսքերի կառավարման գործընթացը, երրորդ՝ հնարավորություն է ստեղծվում ձևավորելու և վարելու բնական մենաշնորհի ոլորտներում մասնագիտացված վիճակագրություն, չորրորդ՝ հնարավորություն է ստեղծվում այդ մարմնի ֆինանսավորման աղբյուրներում ներառել նաև հենց բնական մենաշնորհներից գանձվող միջոցների մի մասը և այլն: Այդ նպատակներով անհրաժեշտ ծախսերը սահմանված կարգով կարող են մտցվել բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների ինքնարժեքի մեջ, ընդ որում՝ այստեղ ևս առկա է որոշակի սահմանափակումների կիրառման հնարավորություն՝ ծախսերի կամ ինքնարժեքի արհեստական մեծացում թույլ չտալու համար: Մյուս կողմից, դրամական միջոցների փոխանցման կառուցակարգից բացի, համապատասխան օրենքում պետք է արտացոլվի նաև բնական մենաշնորհների պետական կարգավորման մարմնի և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների հետ փոխհարաբերությունների կառուցակարգերը:

Ընդ որում, շատ կարևոր է, որ բնական մենաշնորհների կարգավորման մարմնի ոչ միայն իրավունքներն ու պարտականությունները, այլև նրա բոլոր գործառնությունները, աշխատանքի մեթոդները, ընթացակարգերը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և մյուս մարմինների հետ փոխհարաբերությունները և էական նշանակություն ունեցող մյուս պայմանները սահմանվեն բացառապես օրենքով և հնարավորինս քիչ տեղ թողնվի իրավական այլ ակտերով (առավել ևս՝ այս մարմնի ընդունած ակտերով) «խաղի կանոնների» սահմանմանը: Այս հանգամանքը կարևորվում է ոչ միայն պետական կարգավորման կայունության ապահովման, խտրական մոտեցումների բացառման, այլև հակակոռուպցիոն ռազմավարության ու համապատասխան քաղաքականության իրականացման տեսանկյունից:

Ակնհայտ է, որ բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման հիմնախնդիրների շրջանակը չի սահմանափակվում վերը



նշվածներով, իսկ ներկայացված մոտեցումներն էլ չեն հավակնում քննարկված հիմնահարցերի առումով վերջնական լուծումների պարունակմանը: Ուստի, այս տեսանկյունից շատ կարևոր է համապատասխան վերլուծությունների և ուսումնասիրությունների իրականացումը, ինչպես նաև դրանց արդյունքների բաց, հրապարակային ու թափանցիկ քննարկումների կազմակերպումը, ինչն էլ, կարող է զգալիորեն նպաստել բացահայտված հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը և, ի վերջո, բնական մեծաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգի կայացմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Սուվարյան Յու.*, Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր, Երևան, ԱՌՏ, 2004 թ.:
2. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2004/7 (306):
3. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2001/10 (142):
4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2004/7 (306):
5. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2001/10 (142):
6. ՀՀ ջրային օրենսգրքի 8-12-րդ և 38-43-րդ հոդվածները, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2002/24 (199):

**VARDAN BOSTANJYAN**

*Doctor of Sciences (Economics), Professor*

**ARTUR TAMAZYAN**

*Ph.D. of Economics*

**REGULATION OF PUBLIC SERVICES IN THE SPHERES OF  
NATURAL MONOPOLIES OF THE REPUBLIC OF ARMENIA**

In the Republic of Armenia, the system of state regulation of natural monopolies has relatively short history, which is basically due to the slow course of legislative regulation of competitive environment, speedy privatisation of these spheres and the existence of other similar factors.

In this regard, the article deals with the concepts of *public management* and *state regulation of natural monopolies*, also, range of activities in these spheres, elucidates the existing level of legislative regulation and ways of improvement, as well as the functions, powers of the government agency involved in the regulation of activities of natural monopolies, also, issues relating to the clarification and improvement of regulation mechanisms.

**АРМЕН АРУТЮНЯН**

*Доктор юридических наук, профессор*

## **ПОСЛЕДНИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПРЕЗИДЕНТСКОЙ ВЛАСТИ В МИРЕ**

Анализ характерных черт различных моделей института президента должен осуществляться с точки зрения динамики своего поступательного развития. И здесь очень многое зависит не только от содержания и логики конституционно-правовых форм, но и от реалий политической и экономической жизни каждого государства. Именно этим объясняется тот факт, что одни и те же модели института президента по конституциям разных стран создают на практике совершенно непохожие институты. Такими примерами могут служить США и страны Азии, Африки, Латинской Америки, где институт президента, в основном скопированный с США, нередко превращается в диктатуру личной власти, или институты президента многих постсоветских стран, основанные на концепции института президента Франции, которые уже вызвали к жизни новый термин "сверхпрезидентство" [1].

Тенденцией последних десятилетий стало относительное усиление исполнительной власти. Это было обусловлено тем, что общество в условиях несогласованности интересов политических партий, нестабильной экономической и социальной ситуации нуждалось в авторитарной исполнительной власти. Проблема усугубляется еще и тем, что в условиях быстро меняющихся ситуаций, за которыми не успевает парламент, исполнительная власть более способна адекватно действовать, исходя из требований ситуации.

В этих условиях в странах, где президент не входит в систему исполнительной власти, но является достаточно сильной фигурой, идет процесс усиления в первую очередь президентской власти, которая при определенных условиях может замкнуть на себе остальные ветви власти. Такое расширение президентской власти выявляет две тенденции: либо отождествлять исполнительную власть с институтом президента, либо признавать наличие самостоятельной президентской власти. На наш

взгляд, второй подход более приемлем, ибо при всем желании, юридически невозможно отождествить институт президента с исполнительной властью в таких странах, как Россия, Армения, Грузия, Украина и т.п., ибо конституции этих стран однозначно не признают президента главой исполнительной власти.

В условиях западноевропейских стран с их высокой политической культурой, наличием традиций парламентской демократии, усиление президентской или исполнительной властей приводило к изменению только государственного режима при сохранении формы правления и политического режима. Примером может послужить Британия XIX и XX вв. Сохраняясь как парламентская монархия и демократическое государство, она претерпела ряд изменений в смысле государственного режима, перейдя от парламентаризма к кабинетному правлению [2, с. 10].

Однако в условиях постсоветских республик, стран Азии, Африки или Южной Америки, в условиях слабости системы сдержек и противовесов вследствие слабого развития социального и политического плюрализма, недостаточного уровня политической культуры и правосознания, усиление президентской власти иногда доводит централизацию государственной власти в одних руках до такого уровня, что не приходится говорить о разделении властей. Режим постепенно переходит к авторитаризму и все чаще слышатся утверждения о наличии выборных монархий.<sup>1</sup>

Такое положение дел заставляет говорить о наличии президентской власти, стоящей над другими ветвями власти, контролирующей их и в конечном счете замыкающей их на себя. Иными словами, президентская власть подавляет остальные ветви государственной власти и подменяет их собой. Такая ситуация просматривается, например, в Туркмении и Азербайджане. Примечателен и тот факт, что в странах с низкой политической культурой и правосознанием, отсутствием гражданского общества объективные тенденции усиления президентской власти в условиях глубокого общественного кризиса и необходимости проведения кардинальных реформ в сфере экономики (объективные факторы) дополняются субъективными, когда очень многое зависит от личных качеств президента, его личной приверженности демократии.

Усиление же президентской власти во многих постсоветских странах приводит не просто к изменению государственного режима, как в европейских странах, а изменению политического режима и формы правления. Это происходит за счет того, что в фактических отношениях высших органов государственной власти президентская власть заменяет собой исполнительную власть, полностью контролирует ее формирование, руководит ею и полностью контролирует законодательную, судебную и избирательную власти.

---

<sup>1</sup> Примером может послужить Азербайджан, где президентскую власть «посредством выборов» передали от отца сыну.

Справедливости ради надо сказать, что тенденция эволюции президентской власти в мире меняется.

В западноевропейских странах в условиях стабильной политической, экономической и социальной ситуации наблюдается постепенная тенденция к "реставрации" роли парламента, который в условиях стабильности не считает нужным делегировать исполнительной или президентской власти ряд полномочий, которые в условиях общественного кризиса, политических разногласий, сложных международных условий делегировала, ибо была необходимость в дееспособной и мобильной президентской или исполнительной власти, способной оперативно и адекватно отвечать на требования жизни. Однако условия изменились, и парламент все больше и больше отвоевывает свои прежние позиции. Примером может служить Финляндия, которая постепенно от полупрезидентской формы правления перешла к парламентской, что в первую очередь связано с пересмотром полномочий президента республики.

В 1992-1995 гг. в Финляндии произошла широкая конституционная реформа. Все преобразования были направлены на изменение соотношения властей, на усиление прав парламента и Государственного Совета за счет прав президента, на изменение порядка выборов президента и характера его ответственности.

Данная реформа прежде всего усилила роль парламента, поставив его на первое место в системе государственных органов. Так, теперь четко определяется, что назначение премьер-министра и формирование кабинета должно осуществляться главой государства по согласованию с председателем Эдускунты и лидерами фракций. А распускать Эдускунту и назначать выборы президент может только по инициативе премьер-министра...[3, с. 17]. Меняется и суть политико-правового развития стран Африки. Начавшийся процесс демократизации обусловлен прежде всего внутренними причинами – глубоким экономическим и политическим кризисом, в котором эти страны оказались к концу 80-х годов. Существовавшая здесь в течение длительного времени тоталитарная модель организации общества доказала свою нежизнеспособность, не смогла обеспечить ни экономического, ни социального прогресса. Как показали политические события последних лет на Африканском континенте, его народы видят в переходе к демократии одно из основных условий выхода из кризиса [4, с. 117]. Реформа политического режима несомненно сказывается и на государственном режиме, где глава государства имел гипертрофированную роль. Расширяется компетенция парламента, усиливаются позиции судебной власти и декларируется, что организация государственной власти строится на принципе разделения властей. Таковы тенденции государственных реформ африканских стран, где однако пока еще сохраняется присущая этим странам модель

президентской власти, которую мы более подробно проанализируем в дальнейших параграфах данной главы.

Аналогичные процессы наблюдаются и в странах Латинской Америки, однако и тут приходится констатировать пока еще только тенденцию развития государственного режима, а посему и президентской власти.

Заслуживает внимания и эволюция конституционных основ государственной организации стран Восточной Европы. После признания принципа разделения властей представительные учреждения в этих странах, особенно парламенты, стали занимать все более важное место в системе государственных органов. Были восстановлены или учреждены посты президентов республик.

Взаимоотношения президента и парламента строятся на следующих принципах: президент наделен правом отлагательного вето в отношении законов, принятых парламентом. Вето преодолевается большинством в 2/3 голосов в присутствии не менее половины депутатов Сейма (Польша), большинством голосом общего числа депутатов Народного Собрания (Болгария), либо при повторном принятии закона в соответствии с обычной законодательной процедурой (Венгрия, Румыния). В Венгрии, Румынии и Болгарии, по примеру Франции, президент вправе также до подписания закона направить его в Конституционный Суд для проверки конституционности последнего. В Болгарии, Румынии, Венгрии и Чехии президент обладает правом досрочного роспуска парламента, но лишь в строго определенных случаях.

Что же касается взаимоотношений между президентом и правительством, то главу правительства определяет президент, которому и поручает формирование последнего. Глава и члены правительства нуждаются в доверии парламента. Последний должен одобрить и программу деятельности правительства. Президент может созывать заседания правительства и председательствовать на них. Однако ни в одной из этих республик президент не рассматривается в качестве главы исполнительной власти. Он стоит на страже демократической деятельности всей государственной структуры (абз. 1 ст.29 Конституции Венгерской Республики), следит за надлежащим функционированием государственных властей и осуществляет посредничество между ними (абз.2 ст.80 Конституции Румынии) [5, с. 130-132].

Сказанное позволяет считать, что в восточно-европейских странах наблюдается некоторое движение в сторону полупрезидентских республик, особенно в тех из них, где президент избирается всеобщим голосованием. Аналогичную тенденцию мы встречаем в большинстве стран бывшего СССР (Российская Федерация, Республика Армения, Эстония, Литва, Грузия и т.п.).

Рассмотренные тенденции конституционного развития в странах Африки, Латинской Америки, Восточной Европы и бывшего СССР показывают существенные сдвиги в государственном строе этих стран в

направлении его демократизации. Однако авторитарное прошлое, низкая политическая культура и правосознание, особенности посттоталитарной психологии общества, привыкшей персонифицировать власть, незрелость социального и политического плюрализма очень часто приводят к несовпадению конституционного права и политической действительности. Этим странам еще присуща конфронтационность отношений между различными политическими силами, переходящая зачастую в политический экстремизм, стремление использовать те или иные институты государственности в односторонних политических интересах.

## ЛИТЕРАТУРА

1. *Stephen Holmes*, Superpresidentialism and it's problems, // EECR. Vol. 2. N 4. Fall 1993 / Vol. 3. N 1. Winter. 1994.
2. *Мозунова М. А.*, Скандинавские страны: центральные органы власти, указ.соч., М., юрид. лит., 1975.
3. Конституции государств, входящих в Европейский Союз, М., "БЭК", 1996.
4. *Юдин В. А.*, Новые тенденции конституционного развития стран Африки // Государство и право. 1992, N12.
5. *Ильинский И. П.*, Основные тенденции конституционного развития стран Восточной Европы // Государство и право. 1992, N6.

**ARMEN HARUTYUNYAN**  
*Doctor of Sciences (Law), Professor*

**RECENT TENDENCIES OF DEVELOPMENT OF  
PRESIDENTIAL POWER IN THE WORLD.**

Analysis of characteristic features of various models of the institute of president should be carried out from the view of dynamics of its development. Here much depends not only on the essence and logics of constitutional-legal forms, but also on the realities of political and economical life of every state. This explains the fact that the same models of the institute of president according to constitutions of different countries in practice create not similar institutes. Examples could be the USA and countries of Asia, Africa, Latin America, where, mainly copied from the USA, institute of the president often turns into the dictatorship of individual power, or institutes of president of many post-Soviet countries based on the concept of institute of president of France that have already brought to life the new term “superpresidentialism”.

The observed tendencies of constitutional development in the countries of Africa, Latin America, Eastern Europe and former USSR reveal vital movements in the state structure of these countries towards democratization. Though authoritarian past, low political culture and legal consciousness, specific features of post-totalitarian psychology of the society used to personify power, immaturity of social and political pluralism, often bring to incompatibility of constitutional law and political reality. These countries may also be characterised as having confrontation of relations between various political powers which often turns into political extremism, ambition to use any state institute in one-sided political interests.



**ԱՐՏՅՈՍ ԳԵՂԱՄՅԱՆ**

*ՀՀ ՊԿ ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության շրջանակներում նախադեպը չունեցող իրավական համակարգի ձևավորումը նոր ասպարեզ բացեց միջազգային հանրային իրավունքի և սահմանադրական իրավունքի դասական հայեցակարգերի տեսանկյունից եվրոպական վերազգային իրավական համակարգը գնահատելու և այս ոլորտում գիտական հետազոտությունների համար:

Ունի, արդյոք, Եվրոպական Միությունը սահմանադրություն կամ անհրաժեշտ է արդյոք Եվրոպական Միությանը սահմանադրություն, որքանով է իրավաչափ բացառապես պետությունների համար կիրառելի սահմանադրական իրավունքի չափանիշների և կատեգորիաների կիրառումը Եվրոպական Միության իրավունքի նկատմամբ. սրանք այն հարցադրումներն են, որտեղից պետք է սկսել Եվրոպական Միության իրավունքի՝ որպես ինքնիշխան լիազորություններով օժտված և ըստ բովանդակության արդեն որոշակի սահմանադրաիրավական պրակտիկա (սահմանադրական կարգ, իշխանության տարանջատում, իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ Եվրոպական Խորհրդարանի ձևավորումն անմիջական համաժողովրդական ընտրությունների միջոցով, քաղաքացիություն, մարդու և քաղաքացու իրավունքներ, դատական իշխանություն և այլն) ունեցող վերազգային քաղաքական կազմակերպության իրավական համակարգի ուսումնասիրությունը:

Եվրոպական համայնքների ձևավորումը և զարգացումը, Եվրոպական Միության ձևավորումը, Եվրոպական իրավունքի՝ որպես ինքնուրույն իրավական համակարգի ստեղծումը և ամրապնդումը բարդ ու բազմափուլ գործընթաց է [1, էջ 65]: Այդ համակարգի զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլը բնութագրվում էր վերազգային ինտեգրման միավորման ինքնիշխան լիազորությունների ծավալի աճով և պետականանման հատկանիշների ավելացմամբ, ինչն ուղեկցվում էր եվրոպական սահմանադրական իրավունքի հայեցակարգի ամրապնդմամբ: Գլխավորն այն է, որ ամբողջությամբ վերցրած այս գործընթացներն առաջընթաց բնույթ են կրում, որոնց զարգացման պատմությունը գրականության մեջ պարբերացվում է տարբեր չափանիշների հիման վրա [1, էջ 65]:

«Դեպի միացյալ Եվրոպա տանող շարժումը, օրինակ՝ Եվրոպական տնտեսական համայնքը, նոր հռոմեական կայսրության ծագման նախանշանն է՝ բոլոր այն առավելություններով, որոնք հատուկ են այդպիսի միությանը. մի ամբողջ մայրցամաք՝ պաշտպանության, ազատ առևտրի իմաստով» [2, էջ 193]:

Զնայած հայտնի հեղինակի վերոնշյալ համեմատությունը կամ կանխագուշակումը, միգուցե, զուրկ չէ օբյեկտիվ հիմքից, եթե համարենք, որ խոսքը վերաբերում է համեմատվող կազմավորումների արտաքին դրսևորումներին, այնուհանդերձ, Եվրոպական Միության ապագայի վերաբերյալ այդպիսի հեռանկարը քիչ հավանական է թվում, առավել ևս, երբ Հռոմեական կայսրության և Եվրոպական Միության համեմատությունն իրականացվում է Եվրոպական քաղաքական իշխանության նորովի կազմակերպման և գործունեության, դրա ստեղծման գործընթացի առանձնահատկությունների և էության բազմակողմանի, գիտական բացահայտման պրիզմայի միջոցով: Այսպես, ի տարբերություն Հռոմեական կայսրության, թե՛ Եվրոպական Միության և թե՛ Եվրոպական բոլոր համայնքների հիմնադրումը և շինարարությունն իրականացվել և իրականացվում են ամուր իրավական հիմքի վրա: Եվրոպական Միությունն իրավական հիմքերի վրա գործառնող քաղաքական կազմավորում է, որտեղ ժամանակակից ժողովրդավարական պետությունների նման գործում է իշխանությունների հորիզոնական տարանջատումը՝ ինստիտուտների միջև, և ուղղահայաց տարանջատումը՝ Եվրոպական Միության և անդամ-պետությունների միջև: Եվրոպական Միության ինստիտուտների, մարմինների, անդամ-պետությունների, ինչպես նաև Եվրոպական Միության և նրա քաղաքացիների միջև առաջացող հարաբերություններն ունեն սահմանադրական բովանդակություն և էություն, քանի որ դրանք սերտորեն կապված են հանրային իշխանության կազմակերպման և գործառության հետ: Ընդ որում՝ նշված հանրային իշխանության կողմն են հանդիսանում Եվրոպական համայնքները, որոնց ինստիտուտների կողմից ընդունված որոշումները և ակտերը Եվրոպական Միության բոլոր քաղաքացիների, իրավաբանական անձանց և անդամ-պետությունների համար օժտված են համապարտադիրությամբ: Եվրոպական համայնքների և Եվրոպական իրավունքի ձևավորումը համաժամանակյա և փոխկապակցված գործընթացներ են: Եվրոպական համայնքների և Եվրոպական իրավունքի հարաբերակցությունը կարելի է բնութագրել որպես ուղիղ և հակադարձ կապերի ամբողջություն: Այսինքն՝ Համայնքների ստեղծումը, դրանց լիազորությունների, նպատակների և խնդիրների, ինչպես նաև կառուցվածքի ամրագրումը պետք է արտացոլվի Եվրոպական իրավունքի նորմերում: Մյուս կողմից, Եվրոպական իրավունքի միասնական համակարգի ստեղծումն անհնար է առանց համապատասխան գործառույթների ինստիտուցիոնալացման, որը դրսևորվում է Եվրոպական համայնքների, դրանց ինստիտուտների և մարմինների ստեղծման

մեջ՝ որպես իրավունքի նյութական սուբստանցիա: Եվրոպական իրավունքը եվրոպական ինտեգրման կարևոր գործիքներից է [3, էջ 1]:

Հանրաճանաչ է, որ Եվրոպական համայնքների կամ Եվրոպական Միության իրավունքն ինքնուրույն իրավական համակարգ է: Ծագման սկզբնական շրջանում Եվրոպական համայնքների իրավունքն իրավաստեղծության ձևի տեսանկյունից գրեթե նույնանուն էր միջազգային իրավունքի հետ: Հետագա զարգացումն ընթացավ Եվրոպական համայնքների իրավունքը ներպետական իրավական համակարգերին բնորոշ հատկանիշներով օժտելու ճանապարհով: Այնուհանդերձ, ներկայումս Եվրոպական իրավունքն ինքնուրույն իրավական համակարգ է, որը տարբերվում է թե՛ միջազգային հանրային և թե՛ ներպետական իրավական համակարգերից:

Խոսելով Եվրոպական Միությունում սահմանադրական իրավունքի հայեցակարգի մասին՝ չի կարելի տեսադաշտից դուրս թողնել այն հեղինակների դատողությունները, որոնք, ելնելով սահմանադրականության դասական հիմքերից, ժխտում են Եվրոպական Միությունում սահմանադրական իրավունքի գոյության հնարավորությունը: Վերջիններս իրենց տեսակետը հիմնավորում են նրանով, որ «սահմանադրություն» և «պետություն» հասկացություններն անխզելիորեն միմյանց հետ կապված, փոխալայնամավորված երևույթներ են, և առանց պետության սահմանադրություն, հետևաբար՝ սահմանադրական իրավունք չի կարելի պատկերացնել:

Համաձայնելով վերը նշված հանրահայտ իրողության հետ, այնուհանդերձ, մեր կարծիքով, քննարկման առարկան այլ երանգ է ստանում Եվրոպական Միության կամ վերազգային իրավական համակարգի հարթությունում դիտարկելիս: Նախ՝ պետք է նկատի ունենալ, որ իրավունքն ընդհանրապես, և սահմանադրական իրավունքը՝ մասնավորապես, ոչ թե կարծրացած, այլ մշտական զարգացման մեջ գտնվող հարաճուն երևույթներ են: Հասարակության և պետության զարգացման ժամանակակից պայմաններում իրավական նորմերը հասարակական հարաբերությունների մյուս սոցիալական կարգավորողների ընդհանուր համակարգում ստանում են նոր դրսևորումներ կամ որակներ, ձևավորվում են հասարակական նոր հարաբերություններ, և դրանց իրավական կանոնակարգման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նաև իրավական նոր նորմեր, ինստիտուտներ և համակարգեր:

Եվրոպական համայնքների հիմնադրմամբ անդամ-պետությունների, ինչպես նաև անդամ-պետությունների և Համայնքների ինստիտուտների միջև ծնվեցին մինչ այդ պետությունների միջազգային համագործակցության պրակտիկայում նախադեպը չունեցող հարաբերություններ: Ըստ բովանդակության՝ դրանք սահմանադրաիրավական հարաբերություններ են, քանի որ ամրագրում են քաղաքական իշխանության կազմակերպման, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հիմունքները և այլն:

Եվրոպական իրավունքի շրջանակներում սահմանադրական իրավունքի ձևավորումն ունի իր առանձնահատկությունները, որպիսի հանգամանքն իր ազդեցությունն է թողել նաև ներկայումս Եվրոպական Միության ինստիտուտների և մարմինների գործառնության, մարդու և քաղաքացու իրավունքների, ինչպես նաև հասարակական մյուս հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման բովանդակության վրա:

Պատմականորեն վերազգային իրավական համակարգի<sup>1</sup> [4, էջ 105] առաջին աղբյուրը Քարածխի և պողպատի եվրոպական համայնքի հիմնադրման մասին 1951 թ. պայմանագիրն էր, որն իր բնույթով միջազգային էր, քանի որ դրա սուբյեկտային կազմի (Քարածխի և պողպատի եվրոպական համայնքի հիմնադիր պայմանագիրը կնքվել է արևմտաեվրոպական վեց պետությունների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Բենիլյուքսի պետությունների՝ Բելգիայի, Նիդեռլանդների և Լյուքսեմբուրգի, այսինքն՝ միջազգային հանրային իրավունքի սուբյեկտների կողմից), կարգավորման առարկայի, կնքման կարգի տեսանկյունից լիովին համապատասխանում էր դասական միջազգային պայմանագրի պահանջներին: Համապատասխանաբար, Եվրոպական Միության իրավունքը ծագման պահին առավելապես միջազգային իրավական ֆենոմեն էր՝ միջազգային հանրային իրավունքի բաղկացուցիչ մաս: Նման պայմաններում դեռ վաղ էր խոսել Քարածխի և պողպատի եվրոպական համայնքի իրավունքում սահմանադրական իրավունքի՝ որպես համասեռ իրավանորմերի համակարգի գոյության մասին:

Ինտեգրման գործընթացների հետագա զարգացման և ընդհանուր շուկայի սկզբունքները տնտեսության մյուս ճյուղերի վրա տարածելու ձգտումը պայմանավորեց նոր համայնքների ստեղծումը՝ նոր պայմանագրերի ընդունմամբ: Դրանք ստացան հիմնադիր պայմանագրեր անվանումը, որոնց հիման վրա ստեղծվել և գործառնում են Եվրոպական համայնքները և Եվրոպական Միությունը, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները: Հիմնադիր պայմանագրերը կարելի դիտարկել որպես Եվրոպական համայնքների սահմանադրություն:

Այդ պայմանագրերն են՝

1. Քարածխի և պողպատի եվրոպական համայնքի 1951 թ. պայմանագիրը (Փարիզի 1951թ. պայմանագիր),
2. Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի 1957 թ. հիմնադիր պայմանագիրը (Եվրատոմի պայմանագիր),

<sup>1</sup> Քննարկելով ժամանակակից աշխարհի իրավական կառուցվածքի հիմքերը՝ Ս. Յու. Կաշկինն առանձնացնում է երեք իրավական համակարգ՝ ներպետական իրավական համակարգ, միջազգային իրավունք և վերազգային կամ Եվրոպական միության իրավունք:

3. Եվրոպական տնտեսական համայնքի (հետագայում՝ Եվրոպական համայնք) հիմնադիր պայմանագիրը,
4. Եվրոպական համայնքների համար որոշ ընդհանուր ինստիտուտների մասին կոնվենցիան,
5. Միաձուլման պայմանագիրը,
6. Առաջին բյուջետային պայմանագիրը,
7. Միացման մասին առաջին պայմանագիրը (Դանիա, Իռլանդիա և Մեծ Բրիտանիա),
8. Բյուջետային երկրորդ պայմանագիրը,
9. Միացման մասին երկրորդ պայմանագիրը (Հունաստան),
10. Միացման մասին երրորդ պայմանագիրը (Իսպանիա և Պորտուգալիա),
11. Եվրոպական միասնական ակտը<sup>1</sup>,
12. Մասստրիխտի 1992 թ. պայմանագիրը՝ Եվրոպական Միության հիմնադրման մասին,
13. Եվրոպական տնտեսական տարածության վերաբերյալ համաձայնությունը,
14. Ամստերդամի պայմանագիրը,
15. Նիսի պայմանագիրը:

Հիմնադիր պայմանագրերի իրավաբանական բնույթի գնահատականների աստիճանական տրանսֆորմացիան՝ միջազգային իրավունքից դեպի սահմանադրական իրավունք, պատկերավոր արտացոլված է Եվրոպական համայնքների դատարանի որոշումներում: Իր գլխավոր նախադեպային որոշումներից մեկում՝ կայացված Van Gend en Loos գործով, Եվրոպական համայնքների դատարանը Եվրոպական տնտեսական համայնքը բնորոշում էր որպես «միջազգային իրավունքի նոր իրավակարգ, որի օգտին անդամ-պետությունները, թեկուզև սահմանափակ ուղորտներում, զիջել են իրենց ինքնիշխան իրավունքները» [5]:

Այնուհայտ է, որ Եվրոպական համայնքների դատարանի այս բնորոշման համաձայն՝ Եվրոպական իրավունքը հանդիսանում է միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս, չնայած «նոր իրավակարգ» արտահայտության օգտագործումն արդեն իսկ վկայում է այն էական առանձնահատկությունների առկայության մասին, որոնց գոյությունն արդեն 1960-ականներին նկատվել էր Եվրոպական համայնքների դատարանի կող-

<sup>1</sup> Չնայած իր անվանմանը՝ Եվրոպական միասնական ակտը ոչ թե նորմատիվ իրավական ակտ էր, այլ միջազգային պայմանագիր, որը, ի տարբերություն Եվրոպական համայնքների և Միության հիմնադիր մյուս պայմանագրերի, ունի ստորագրման երկու վայր և երկու ժամանակ. նախ՝ 1986 թ. փետրվարի 17-ին Լյուքսեմբուրգում այն ստորագրվեց 12 անդամ-պետություններից միայն 9-ի ներկայացուցիչների կողմից, իսկ ավելի ուշ՝ 1986 թ. փետրվարի 28-ին Հաագայում այն ստորագրեցին մյուս երեք պետությունների՝ Դանիայի, Հունաստանի և Իտալիայի ներկայացուցիչները:

մից և որոնց հետագա ընդլայնումը հիմք հանդիսացավ դատարանի կողմից Եվրոպական համայնքների իրավական համակարգի նոր բնորոշման համար: Այսպես, 1991 թ. դատարանը փոխեց իր գնահատականը՝ նշելով, որ «հիմնադիր պայմանագրերը ստեղծեցին նոր իրավակարգ, որի օգտին անդամ-պետություններն ամենալայն ոլորտներում սահմանափակել են իրենց ինքնիշխան իրավունքները, և որի սուբյեկտներ են հանդիսանում ոչ միայն անդամ-պետությունները, այլ նաև նրանց քաղաքացիները» [4, էջ 105]: Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադիր պայմանագիրը ստեղծեց իր սեփական իրավական համակարգը, որը հանդես է գալիս որպես անդամ-պետությունների իրավական համակարգերի բաղկացուցիչ մաս: Դատարանի մեկ այլ բնորոշման համաձայն՝ հիմնադիր պայմանագրերը «կազմում են Համայնքի սահմանադրությունը», և դրանում ամրագրված իրավական նորմերը ձևավորում են Համայնքի ներքին իրավունքի համակարգը [6, էջ 99]:

Այսպիսով, Եվրոպական Միության իրավունքն ինքնուրույն իրավական համակարգ է, որն ունի իրավական կարգավորման համալիր օբյեկտ, բաժանվում է տարբեր ճյուղերի և ինստիտուտների: Այդ իրավական համակարգի շրջանակներում սահմանադրական իրավանորմերի՝ որպես ենթահամակարգի կամ իրավունքի առանձին ճյուղի առկայությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

*1. Եվրոպական Միությանն ինքնիշխան լիազորությունների փոխանցման սահմանադրաիրավական ամրագրումն անդամ-պետությունների հիմնական օրենքներում:*

Նախ, Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության գոյության, նրանց կողմից նախկինում պետություններին պատկանող ինքնիշխան իրավունքների իրականացումը հիմնված է խիստ սահմանադրաիրավական հիմքի վրա: Եվրոպական Միության անդամ պետությունների սահմանադրությունները, հռչակելով պետության ինքնիշխան բնույթը, միաժամանակ հնարավոր են համարում քաղաքական իշխանության կազմակերպման վերպետական կամ վերազգային ձևերի գոյության, դրանց նարմիններին ազգային իշխանություններին հատուկ ինքնիշխան իրավասության տարրերով օժտելու հնարավորությունը<sup>1</sup> [7, էջ 56]: Եվրոպական առանձին պետությունների սահմանադրություններում այդպիսի դրույթներ էին պարունակվում դեռևս մինչև Եվրո-

<sup>1</sup> Հատկանշական է, որ նման դրույթներ պարունակվում են նաև աշխարհի այլ՝ ոչ «Եվրոպական» պետությունների սահմանադրություններում, օրինակ, Սալվադորի Հանրապետության 1962 թ. սահմանադրության 10-րդ հոդվածը պետությանը պարտավորեցնում է նպաստել Կենտրոնական Ամերիկյան Հանրապետության լիակատար կամ մասնակի վերականգնմանը՝ կոնֆեդերացիայի, ֆեդերացիայի կամ ունիտար պետության ձևով:

պական համայնքների ստեղծումը, որոնք իրավաբանական հիմք հանդիսացան Համայնքներին միանալու համար (օրինակ՝ Ֆրանսիայի 1946 թ. սահմանադրության նախաբանը, համաձայն որի Ֆրանսիան փոխադարձության պայմանով պատրաստ է ինքնիշխանության սահմանափակմանը, եթե դա անհրաժեշտ է խաղաղության կազմակերպման և պաշտպանության համար): Բացի այդ, Ֆրանսիայի սահմանադրության 15-րդ բաժինը, որի վերտառությունն է «Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության մասին», նույնպես ամրագրում է նշված կառույցներին Ֆրանսիայի ինտեգրվելու սահմանադրաիրավական հիմունքները: Գերմանիայի հիմնական օրենքը բավական ընդարձակ հողված է պարունակում, որը սահմանում է Միացյալ Եվրոպայի գաղափարի իրականացման համար Եվրոպական Միության զարգացմանը մասնակցելու, որոշակի նպատակների հասնելու և որոշակի պայմանների առկայության դեպքում ինքնիշխան իրավունքների սահմանափակման հնարավորությունը [8, էջ109]: Պորտուգալիան 1992 թ. նոյեմբերի 25-ին սահմանադրական երրորդ ուղղման միջոցով ապահովեց Եվրոպական Միության միանալու իրավական հիմքերը: Նման նորմերի կարելի է հանդիպել Եվրոպական այլ պետությունների, մասնավորապես, Ավստրիայի, Բելգիայի, Իռլանդիայի, Ֆինլանդիայի, Շվեդիայի սահմանադրություններում: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային, նրա՝ ապա Եվրոպական տնտեսական համայնքին միանալու իրավական հիմքը հանդիսացավ «Եվրոպական համայնքների մասին ակտը»՝ Եվրոպական Միության ստեղծմամբ պայմանավորված հետագա փոփոխություններով և լրացումներով, որոնք կատարվեցին 1993 թ.:

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում խոսքը գնում է ոչ թե ինչ-որ վերացական վերագոյնի կազմավորմանը մասնակցելու կամ անդամակցելու, այլ որոշակի Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության օգտին ինքնիշխան իրավունքների սահմանափակման հնարավորության մասին: Եվրոպական պետությունների ժողովուրդները, հանդիսանալով ինքնիշխանության և սահմանադիր իշխանության կրողներ, և սահմանադրությունն ընդունող սուբյեկտներ, իրենց կողմից ընդունած սահմանադրությունների միջոցով ազգային պետություններին հանձնարարում կամ լիազորում են մասնակցել Միացյալ Եվրոպայի շինարարությանը՝ ընդհանուր նպատակների համար սահմանափակելով ազգային ինքնիշխանությունը: Փաստորեն, ինքնիշխան իրավունքների փոխանցումն իրականացվում է խիստ սահմանադրական հիմքի վրա, ինչը հանդիսանում է Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության իշխանության լեգիտիմության հիմնաքարը:

Եվրոպական կառույցներին ինտեգրվելու ձգտումը պայմանավորեց արևմտաեվրոպական պետությունների սահմանադրությունների բովանդակության ունիֆիկացման գործընթացը: «Տվյալ դեպքում

կարևոր է այն, որ միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Եվրոպական համայնքները, ստանձնել են անդամ-պետությունների սահմանադրական նորմերի ինտերնացիոնալացման նախաձեռնությունը: Այդ հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ ձևավորվում է նոր ինստիտուտ, իսկ հնարավոր է նաև իրավունքի նոր ճյուղ՝ միջազգային սահմանադրական իրավունք» [8, էջ 109]:

*2. Եվրոպական Միության քաղաքական իշխանության լեգիտիմացումը:*

Ի տարբերություն միջազգային միջկառավարական կազմակերպությունների՝ Եվրոպական Միության քաղաքական իշխանությունն անմիջականորեն լեգիտիմացվում է Եվրոպական Միության քաղաքացիների կողմից: Կիրառվում են անմիջական ժողովրդավարության երկու ձևերը՝ ընտրությունները և հանրաքվեն: 1979 -ից սկսած Եվրոպական Խորհրդարանը՝ Եվրոպական Միության ներկայացուցչական մարմինը, ուղղակի ընտրություններով ընտրվում է Միության քաղաքացիների կողմից: Ինչ վերաբերում է հանրաքվեին, ապա այն վերջին ժամանակներս շատ հաճախ է կիրառվում Եվրոպական Միությանը վերաբերող որոշումներ ընդունելիս: Կարող են կազմակերպվել խորհրդատվական (Մեծ Բրիտանիա, Շվեդիա) կամ պարտադիր, այդ թվում՝ սահմանադրական հանրաքվե: Եվրոպական համայնքներում ինտեգրման գործընթացների զարգացման հարցերով հանրաքվեներ են կազմակերպվել Դանիայում՝ 4 անգամ (1972, 1986, 1992, 1993 թթ.), Ֆրանսիայում՝ 2 անգամ (1972 և 1992 թթ.), Իռլանդիայում՝ 3 (1972, 1987, 1992 թթ.), Իտալիայում՝ 1 (1989 թ.), Նորվեգիայում՝ 2 (1972 և 1994 թթ.)<sup>1</sup>, Մեծ Բրիտանիայում՝ 1 (1975 թ.):

Չհաշված Շվեյցարիայում անցկացված հանրաքվեները, սրանք կազմում են 1970-1993 թթ. ընկած ժամանակահատվածում արևմտաեվրոպական ժողովրդավարություններում անցկացված հանրաքվեների մոտավորապես մեկ երրորդը [9, էջ 35]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Եվրոպական ինտեգրումն առաջ բերեց հանրաքվեների կիրառման աճ: Մինչդեռ, մեր կարծիքով, առավել կարևոր է այն հանգամանքը, որ Եվրոպական միության քաղաքացիները հանրաքվեի ինստիտուտի միջոցով հնարավորություն են ստանում անմիջականորեն կանխորոշել այդ կազմակերպության քաղաքականության և զարգացման բնույթը: Եվրոպական ինտեգրման հարցերով հանրաքվեների կազմակերպումը պարտադիր է ոչ բոլոր անդամ-պետություններում: Այդ պետություններում ինտեգրման կառույցներին անդամակցելը հիմնվում է սոցիալական հիմնական խմբերի և քաղաքական ուժերի կոնսենսուսի վրա: Օրինակ՝ Լյուքսեմբուրգում Եվրոպական Միությանն անդամակ-

<sup>1</sup> Եվրոպական համայնքներին կամ Եվրոպական Միությանն անդամակցելու հայտ տարբեր ժամանակներում ներկայացրել են Նորվեգիան և Շվեյցարիան, սակայն այդ պետությունների բնակչությունը հանրաքվեների միջոցով բացասական է արտահայտվել միացմանը:



ցելու օգտին արտահայտվեցին խորհրդարանի՝ Պատգամավորների պալատի 51 անդամ, դեմ՝ 6: Իսպանիայում Մասստրիխտի պայմանագրին դեմ արտահայտվեցին Պատգամավորների կոնգրեսի միայն 3 անդամ, իսկ Սենատում՝ ոչ մի դեմ [10, էջ 448]:

Այսպիսով, Եվրոպական ինտեգրման կառույցներին անդամակցելը, դրանց ինքնիշխան իրավունքներով օժտելն իրականացվում է ժողովրդավարության և սահմանադրականության՝ ազգային պետություններում ընդունված սկզբունքներով:

### 3. Եվրոպական Միության «սահմանադրական խարտիան»:

Հիմնադիր պայմանագրերն իրավունքի այնպիսի աղբյուրներ են, որոնք սահմանում են մայրցամաքում քաղաքական իշխանության վերազգային կազմակերպության կառուցվածքը և գործունեությունը: Դրանք օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով և պաշտոնապես ընդունված դոկտրինայի համաձայն կազմում են Եվրոպական Միության սահմանադրությունը: Այսպես, 1986 թ. Եվրոպական համայնքների դատարանի կողմից ընդունված որոշմամբ Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադիր պայմանագիրը ճանաչվեց որպես «հիմնական սահմանադրական խարտիա»<sup>1</sup> [11]: Այս բնորոշումը վերարտադրվեց ավելի ուշ՝ ԱՆԵԱ<sup>2</sup> առանձին անդամների և Եվրոպական համայնքների միջև Եվրոպական տնտեսական տարածություն ստեղծելու համաձայնագրի վերաբերյալ տրված եզրակացության մեջ: Դատարանի բնորոշման համաձայն «Եվրոպական տնտեսական համայնքի պայմանագիրը, չնայած կնքված լինելով միջազգային պայմանագրի ձևով, այնուհանդերձ, կազմում է Համայնքի սահմանադրական խարտիան, որը հիմնված է իրավունքի գերակայության վրա: Համայնքի իրավակարգի էական բնութագրիչներն են նրա առաջնայնությունն անդամ-պետությունների իրավունքի նկատմամբ և մի շարք դրույթների կիրառումը քաղաքացիների և անդամ-պետությունների նկատմամբ» [12]:

Հիմնադիր պայմանագրերի իրավաբանական բնույթի մասին համանման ձևով են արտահայտվում արևմտաեվրոպական իրավագետների մեծամասնությունը: Այսպես, Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրի մեկնաբանություններում նշված է, որ «սույն ուղեցույցը (handbook) ելնում է այն պատկերացումից, որ հիմնադիր պայմանագրերը Համայնքի և Միության սահմանադրությունն են, և լավագույն ձևով կարող են հասկացվել այդ ձևով» [10, էջ 5]: Այս կապակցությամբ հողանդացի հայտնի սահմանադրագետ Բ. դե Վիտտեն նշում է. «Եվրոպական իրավունքի վերաբերյալ գրականության մեջ ներկայումս հան-

<sup>1</sup> «Առաջին հերթին պետք է ընդգծել, որ Եվրոպական տնտեսական համայնքը հիմնված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա, քանի որ ոչ մի անդամ-պետություն, ոչ մի ինստիտուտ չի կարող խուսափել նրանից, որպեսզի պարզվի, թե արդյոք իրենց կողմից ընդունված որոշումները կամ գործողությունները համապատասխանում են սահմանադրական հիմնական խարտիային՝ Պայմանագրին»:

<sup>2</sup> Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա:

րաճանաչ է այն հանգամանքը, որ Հիմնադիր պայմանագրերի համակարգը բնութագրվում է որպես Եվրոպական համայնքների և Միության սահմանադրություն» [13, էջ 12]: «Եվրոպական Միության պայմանագիրը պարունակում է մի շարք տարրեր, որոնք բնութագրական են դաշնային տիպի սահմանադրությանը, որը նվազագույնը ենթադրում է ապակենտրոնացման որոշակի աստիճան» [14, էջ 200]:

Այդպիսի դիրքերից են հանդես գալիս նաև Եվրոպական Միության պաշտոնատար անձինք և քաղաքական գործիչները: Լոնդոնում «Աճիրաժե՞շտ է արդյոք Եվրոպային սահմանադրություն» վերտառությամբ տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ Եվրոպական Խորհրդարանի պատգամավոր, Ինստիտուցիոնալ հարցերով ենթահանձնաժողովի նախագահ Ֆ. Ջերմանն իր հաշվետվության մեջ պարզաբանեց, որ Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրերը սկսում են մուտք գործել այնպիսի ոլորտներ, որոնք շոշափում են սահմանադրությունը, որովհետև Եվրոպական համայնքը հիմնված է իրավունքի գերակայության վրա, տարածվում է ինչպես անհատների, այնպես էլ կառավարությունների վրա և առաջացնում է ինքնիշխանության միաժամանակյա կորուստ և միաձուլում: Եվրոպական Միությանը ձևականորեն սահմանադրությամբ օժտելը, նրա կարծիքով, ընդամենը կայանում էր կիրառվող տերմինաբանությունն իրականությանը համապատասխանեցնելու մեջ [15, էջ 4]: 1985-1988 թթ. Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Լորդ Կոկֆիլդն այն միտքն արտահայտեց, որ «Եվրոպական Միությունն ունի գրված սահմանադրություն՝ հիմնադիր պայմանագրերի տեսքով, որոնք փոփոխված և լրացված են Եվրոպական միասնական ակտով և Մասստրիխտի պայմանագրով» [16, էջ 22]:

Որոշ հեղինակներ շեշտը դնում են հիմնադիր պայմանագրերի և ազգային սահմանադրությունների միջև զուգահեռականներ անցկացնելու վրա: Այսպես, Ս. Յոլի կարծիքով հիմնադիր պայմանագրերը «նման են ազգային սահմանադրություններին և լիազորում են ընդունել լրացուցիչ միջոցներ, որոնք չեն հակասում այդ սահմանադրական փաստաթղթին» [17, էջ 103]: Բ. դե Վիտտեն կարծում է նաև, որ Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրերը յուրաքանչյուր անդամ-պետության համար կազմում են լրացուցիչ սահմանադրություն [13, էջ 13]:

Եվրոպական Միությունում սահմանադրության և սահմանադրական իրավունքի առկայությունը մատնանշելու համար հեղինակների կողմից օգտագործվում են նաև այլ տերմիններ կամ արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «Համայնքի սահմանադրական կարգ» [18, էջ 194], «Եվրոպական սահմանադրական համակարգ» [19, էջ 130], «Միության սահմանադրական իրավունք» [20, էջ 186]: Վերջինս ներկա պայմաններում Եվրոպական իրավունքի համակարգում ձևավորվել է որպես իրավանորմերի ինքնուրույն համալիր, որի առարկա են հանդիսանում Եվրոպական Միության մակարդակում հանրային իշխանության կազմակերպման և իրականացման, բնակչության՝ Եվրոպական

Միության քաղաքացիների հետ նրա փոխհարաբերությունների կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

Եվրոպական Միության սահմանադրական իրավունքի աղբյուրների շրջանակը չի սահմանափակվում Միության «սահմանադրությամբ»<sup>1</sup>, այլ ներառում է նաև Եվրոպական համայնքների դատարանի դատական նախադեպերը, ինչպես նաև այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք հիմնադիր պայմանագրերի հիման վրա ընդունվում են Եվրոպական Միության՝ իրավաստեղծ գործառույթներով օժտված ինստիտուտների կողմից և որոնք կարգավորում են իրենց բովանդակությամբ սահմանադրաիրավական հարաբերությունները: Այդ ակտերի շարքը կարելի է դասել Եվրոպական Խորհրդարանի ընտրությունների մասին ակտը, Եվրոպական մարդու իրավունքների պաշտպանի Ստատուտը, Եվրոպական Միության ինստիտուտների ներքին կանոնակարգերը և այլն:

*4. Եվրոպական Միության սահմանադրական իրավունքի հարաբերակցությունն անդամ-պետությունների սահմանադրական իրավունքի հետ:*

Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրերը և իրավունքի մյուս աղբյուրները, որոնք սահմանում են «Եվրոպական» մակարդակում հանրային իշխանության կազմակերպման հիմունքները, Եվրոպական Միության ինստիտուտների կարգավիճակը, Եվրոպական Միության, քաղաքացիների (քաղաքացիության ինստիտուտը ներմուծվեց 1992 թ. Մասստրիխտի պայմանագրով) և անդամ-պետությունների հարաբերությունները, ոչ միայն իրավանորմերի ինքնուրույն համակարգ են, այլ նաև մտնում են անդամ-պետությունների իրավական համակարգի մեջ:

*5. Եվրոպական Միության սահմանադրական իրավունքը՝ որպես սահմանադրական իրավունքի գիտության ուսումնասիրության առարկա:*

Վերջապես չի կարելի չանդրադառնալ հետևյալ հանգամանքին. հենց սահմանադրական իրավունքի գիտությունն իր ուսումնասիրության առարկայի, հայեցակարգային և տերմինաբանական ապարատի ուժով հանդիսանում է Եվրոպական Միության ժամանակակից իրավական իրականության ճանաչողության և բացահայտման առավել զործուն միջոց: Սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում են հետազոտվում և բացահայտվում Եվրոպական Միությունում իշխանությունների տարանջատման, պատվիրակված օրենսդրության, քաղաքացիության, Միության և անդամ-պետությունների միջև իրավասությունների բաշխման հիմնախնդիրները և այլն: Իհարկե, ասվածն ամենևին էլ չի ժխտում իրավաբանական այլ գիտությունների կողմից

<sup>1</sup> Նկատի ունենք ոչ թե Եվրոպական Միության սահմանադրության նախագիծը, որը 2004 թ. հոկտեմբերին վավերացվեց Եվրոպական Խորհրդարանի կողմից և ներկայումս վավերացման գործընթացն է անցնում անդամ-պետություններում, այլ Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրերը:

Եվրոպական Միության իրավունքի ուսումնասիրության օգտակարությունը և անհրաժեշտությունը: Կարծում ենք, միայն համալիր մոտեցումը հնարավորություն կտա խորությամբ գիտակցել և բացահայտել Եվրոպական Միության իրական էությունը և զարգացման միտումները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա. Շ.*, «Եվրոպական Միություն», Երևան, «Պետական ծառայություն» իրատ., 2005 թ.:
2. *Паркинсон С.*, Законы Паркинсона. М., 1989.
3. *Энтин Л. М.*, Европейское право. М., 2001.
4. *С. Ю. Кашкин*, Право Европейского Союза. М. 2003.
5. Case 26/62, [1963] ECR 1, at 12.
6. *Хартли Т. К.*, Основы права Европейского сообщества, Будапешт, 1998.
7. The Constitutions of Latin America. Henry Regenry Company, Chicago, 1968.
8. *В.В. Маклаков*, Конституции зарубежных государств. М., Волтерс Клувер,., 2003.
9. *Jahn D., Storsved A.*, Legitimacy through referendum? The Nearly Successful Domino – Strategy of the EU – Referendums in Austria, Finland, Sweden and Norway// West European Politics, Volume 18, Number 4, October 1995.
10. *Church C., Phinnemore D.*, European Union and European Community. A handbook and Commentary on the post–Maastricht Treaties.
11. Case 294/83, Party Ecologist ‘Les Verts’ v. European Parliament, [1986]. ECR 1339.
12. Opinion 1/91, First EEA Case, [1991] ECR 6079.
13. B. de Witte. International Agreement or European Constitution // Reforming the Treaty on European Union.
14. *Louis J. – V.*, The Community legal order. Luxembourg, Official Publications of the European Communities, 1995.
15. Does Europe Need a Constitution. Conference Proceedings. London, June 6, 1996.
16. Lord Cockfield etc. Is the Single Market working? P. M. I., November 1996.
17. Hall St. Nationality, Migration Rights and Citizenship of the Union.
18. Weatherill St. Law and Integration in the European Union.
19. *Snyder F.*, Comments on the Article by the D. M. Curtin // Reforming of the Treaty on European Union.
20. *Mancini G., Keeling D.*, Democracy and the European Court of Justice.

**ARTYOM GEGHAMYAN**

*Post-graduate of the Public Administration  
Academy of the Republic of Armenia:*

## **EUROPEAN CONSTITUTIONAL LAW CONCEPT**

European integration has been contract- based from the very beginning. This marks the most fundamental differences to intergovernmental plans and efforts of European cooperation in earlier years of the 20<sup>th</sup> century. In 1957, the Treaties of Rome constituted the European Economic Community as both an intergovernmental and a supranational structure, shapes through community law and binding for all participating countries. The treaties of Rome were followed by the Single European Act in 1986, the Treaty of Maastricht in 1991, the Treaty of Amsterdam in 1995 and the Treaty of Nice in 2000. This sequence of the treaties has been the collective " pre – constitution" of Europe. Based on these achievements and referring to the fact that the European Union does not and cannot constitute a state in the classical sense of the word, it has been argued that the European Union would not need a constitution. Some analysts have maintained the view that it would in fact be impossible for the enormously diverse European Union to agree upon a constitutional framework at all which would go beyond the definition of the EU as an economic community.

The establishing treaties make a constitution or the «Constitutional Charter» of the European Communities and then European Union, as have been stated in the decisions of the European Community Court. The provisions of the establishing treaties regulate the relations, which are constitutional in their nature and having been regulated traditionally under the national constitutional documents.

## ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի  
արտաքին կապերի բաժնի վարիչ*

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՊԵՍ ԺՈՂՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՍ

Միջազգային սահմանադրաիրավական միտքը ներկայումս հատուկ կարևորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ:

Ժողովրդավարական հասարակության և իրավական պետության գոյության և գործառության բարձրագույն սկզբունքը սահմանադրության գերակայությունն է, ինչը միաժամանակ սահմանադրական արդարադատության բովանդակությունն է:

Հասարակական գիտակցության մեջ ամրապնդվել է հասկացությունն այն մասին, որ ընթացքը դեպի ժողովրդավարությունն առաջին հերթին քաղաքական պայքար է: Սակայն ամեն ինչն այդպես պարզ չէ: Կարելի է ընդունել անթերի սահմանադրություն և լավ օրենքներ, ընտրել խելացի և բանիմաց նախագահ, արհեստավարժ և իրավասու խորհրդարան, սակայն, ինչպես իրավամբ նշում է *Գ. Ն. Մանովը*, եթե ժողովուրդը պատրաստ չէ ժողովրդավարության, ի վիճակի չէ կարգավորել իր կյանքը նրա նորմերին և սկզբունքներին համապատասխան, ապա ժողովրդաիշխանության կառուցակարգը կխաթարվի [8, էջ 245]:

Պետք է նշել, որ ժողովրդավարության կայունությունը չի որոշվում միայն թեկուզ ամենաբարձր չափորոշիչներին համապատասխանող սահմանադրության ստեղծմամբ, այլ՝ անհրաժեշտ է տարբեր սոցիալական շերտերի և հասարակական դասակարգերի, ազգերի և ժողովուրդների, բնակչության խմբերի շահերի իրական հավասարակշռության փաստական նվաճում և իրավաբանական ամրագրում, որի արդյունքում առաջ է գալիս սահմանադրական կարգի ինստիտուտների նկատմամբ քաղաքացիների հարգանքն ու վստահությունը:

Ժողովրդավարական կառավարման առավել կարևոր ասպեկտները պարունակվում են *«իրավական պետություն»* հասկացության մեջ, որը հիմնվում է այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ իրավունքի

գերակայությունը, պետական ինքնիշխանությունը, իշխանությունների տարանջատումը, անձի իրավունքների և ազատությունների անբալտելիությունը: Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ամրագրված է սահմանադրության մեջ, և, հետևաբար, դրանք կարող են դիտվել որպես իրավական պետականության սահմանադրական հիմունքներ:

Իրավական պետությունն իրավունքով «կաշկանդված» պետություն է: Եվ այդ «կաշկանդվածությունը» պետք է հասկանալ որպես, առաջին հերթին, սահմանափակվածություն մարդու և քաղաքացու իրավունքներով: Ժամանակն է ընդունել, որ յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակությունում օբյեկտիվորեն գոյություն ունեն իրավունքներ, որոնք հատուկ են յուրաքանչյուր մարդուն ի ծնե և անօտարելի են նրանից: Այդ իրավունքներն ոչ մեկի կողմից չեն նվիրաբերվում և իրենց բնույթով շնորհված չեն, հակառակը, ինչպես նշում է ֆրանսիացի հայտնի սահմանադրագետ Ֆ. Լուշերը, դրանցից մի քանիսը կյանքի, արժանապատվությունը հարգելու իրավունքը, բնակարանի անձեռնմխելիությունը, ունեն հիմնարար բնույթ [7, էջ 48]:

Իրավական պետության ձևավորման ու գործունեության պայմաններից է սոցիալապես ուղղորդված շուկայական տնտեսությունը և նրան համապատասխանող քաղաքական ձևը՝ ժողովրդավարությունը: Իրավական պետությունն անհնարին է առանց տնտեսության, որի իրավական արտահայտման ձևն իրավահավասար մասնակիցների պայմանագիրն է, և առանց ժողովրդավարության, առանց իրական ժողովրդաիշխանության համակարգի գործունեության: Իրավական պետություն կարող է համարվել միայն այն պետությունը, որտեղ առկա է ամեն տեսակի վարչական միջամտությունից զերծ պահելու երաշխիքների որոշակի համակարգ, որտեղ գործում է իրավունքի տիրապետության իրական կարգ, որտեղ ապահովվում են մարդու իրավունքներն ու ազատությունները [13, էջ 87]: Տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը: Քաղաքացիական հասարակության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը [12, էջ 11]:

Սակայն իրավունքի գերակայությունը հնարավոր է միայն հենց պետական (քաղաքական) իշխանության պատշաճ կազմակերպման պայմաններում, որը բացառում է իշխանության մոնոպոլիզացումը և ապահովում է նրա ողջ համակարգի (կառուցվածքի, առանձին տեսակի մարմինների լիազորությունների, ձևավորման միջոցների, գործունեության ձևի և այլն) համապատասխանությունն իրավունքի պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցելով Եվրախորհրդին, 2000 թ. դեկտեմբերի 30-ին միացավ այս կազմակերպության՝ 1949 թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի 3-րդ հոդվածը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր ոք, ով

գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից»:

Իրավական պետության հիմնական սկզբունքներ (նրա որակի էական ցուցանիշներ) են հանդիսանում իրավական պետությանն առաջադրվող պահանջները: Դրանց թվին են դասվում իշխանությունների տարանջատումն օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին, իրավունքի, Սահմանադրության գերակայությունը, պետության և անձի փոխադարձ պատասխանատվությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, անձանց և հասարակական հարաբերությունների այլ մասնակիցների դատական պաշտպանությունը որևէ մեկի վարչարարությունից, ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին:

Իրավական պետություն ինքնին նշանակում է, որ այն իր կազմակերպման և գործունեության մեջ և որպես հանրային իշխանության հատուկ կազմակերպում՝ ապահովում է իրավունքի, սահմանադրության գերակայությունը: Իրավունքի գերիշխանությունը և օրենքի գերակայությունն իրենց որոշակի բովանդակության մեջ իրավական պետությունում իրականացնում են «ողջ իշխանությունն օրենքին» սկզբունքը, որը պետականորեն կազմակերպված հասարակության հիմնական հրամայականն է: Իրավունքի գերիշխանություն, և բոլորը ենթարկվում են պատշաճ կարգով ընդունված իրավական նորմերին՝ թույլ չտալով կամայականություն և իրավունքի չարաշահում: Օրենքի գերակայություն, և բոլորն ընդունում են, որ նման հասարակությունում հիմնարար է համարվում օրենքը՝ ընդունված օրենսդիր մարմնի կողմից, և մնացած բոլոր ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեն օրենքին: Իսկ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված է Սահմանադրությունը, և բոլորը դա ընդունում են: Մնացած բոլոր օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը [2, էջ 614]:

**Սահմանադրությունն** առաջատար տեղ է զբաղեցնում սահմանադրականության տեսության մեջ, քանի որ այն թույլ է տալիս համարժեքորեն բացահայտել սահմանադրական որոշումների սոցիալական և նորմատիվ-իրավական բովանդակությունը, նրանց տեղն ու դերն օրենսդրության մեջ, հանդես է գալիս այլ սահմանադրական կատեգորիաների և երևույթների՝ ժողովրդավարություն և սահմանադրական օրինականություն, մարդու ու քաղաքացու և իրավունքի այլ սուբյեկտների իրավունքներ և ազատություններ, ճանաչման մեթոդաբանական հիմքը:

Սահմանադրությունը՝ որպես հատուկ նշանակություն և գործառույթներ ունեցող, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հիմնական ակտ հատուկ տեղ է զբաղեցնում ժողովրդավարական պետության իրավական համակարգի հիերարխիայում: Իզուր չէ, որ իրավական պետությունն իրավաբանական գիտության մեջ անվանվում է նաև **սահմանադրական պետություն** (Սահմանադրական իրավունքի



գիտության մեջ «սահմանադրական պետություն» և «իրավական պետություն» հասկացությունները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ [10, էջ 91]):

Սահմանադրական է ճանաչվում այն պետությունը, որում գոյություն ունի Սահմանադրություն՝ Հիմնական օրենք (օրենքներ), որոնք ամրագրում են որոշակի սահմանադրական կարգ, իշխանության մարմինների կառուցվածք և իրավասություն, ունեն իրական պրակտիկ գործողություն, օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով և փոփոխվում են հատուկ (սովորական օրենսդրական գործընթացի հետ համեմատ՝ բարդեցված) ընթացակարգով [1, էջ 94]:

Սահմանադրական պետությունը կարող է արդյունավետ գործել սահմանադրականության՝ որպես հատուկ իրավական ռեժիմի պայմաններում: Իրավական պետության գործառության հիմնական նպատակներից մեկն էլ սահմանադրականության հաստատման համար պայմանների ստեղծումն է:

Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտի իրական գործողությունը և նրա պաշտպանությունը հատկապես սահմանադրական դատարանի կողմից պայմանավորեցին այնպիսի իրավական երևույթի և համապատասխան հասկացության առաջացումը, ինչպիսին սահմանադրականությունն է (конституционность):

***Սահմանադրականությունն*** իրապես գործող իրավունքի համակարգ է, որն ապահովում է իրավական սահմանադրության առկայությունը, նրա գերակայությունը և ողջ պետության տարածքում ուղղակի գործողությունը, ինչպես նաև նրա ապահովումն ու պաշտպանությունը: Որոշ հեղինակներ, նույնացնելով այս տերմինն օրինականության հասկացության հետ, սկսեցին օգտագործել «սահմանադրական օրինականություն» տերմինը: Սակայն, ինչպես նշում է Ն. Վ. Վիտրուկը, դա պակաս հաջող տերմին է, քանի որ չի արտահայտում սահմանադրականության էությունն ու բովանդակությունը՝ ***որպես ժողովրդավարական պետության կազմակերպման և գործառության իրավական ռեժիմ***, որի շնորհիվ այդ պետությունը ձեռք է բերում իրավական պետության բնույթ [3, էջ 58]: Սահմանադրականության պարտադիր պահանջ և բաղադրատարր է հանդիսանում հենց սահմանադրության՝ որպես հիմնական (բարձրագույն) օրենքի իրավական բնույթը: Սահմանադրականության բովանդակությունն է կազմում ոչ թե ինքնին սահմանադրության առկայության փաստը, այլ իրավունքին համապատասխանող սահմանադրության առկայությունը, այսինքն՝ այնպիսի ակտի առկայությունը, որը, համապատասխանորեն, պատասխանատվության հետ մեկտեղ արտացոլում է ազատության, արդարության, հավասարության սկզբունքները, համամարդկային իղեալներն ու արժեքները, մարդու արդիական պահանջմունքները և շահերը, սոցիալական առաջընթացի օբյեկտիվ միտումները: Այլ խոսքով՝ իրավական պետության առկայությունը նշանակում է, որ հասարակության և պետության մեջ գործող

սահմանադրությունը համապատասխան կերպով արտահայտում է իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ ժողովրդավարական հասարակության և իրավական պետության իդեալները:

Նշվածի հետ մեկտեղ, սահմանադրականությունն նշանակում է նաև սահմանադրության համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, միջազգային չափորոշիչներին և առաջին հերթին՝ մարդու ու քաղաքացու անօտարելի և անքակտելի իրավունքներին ու ազատություններին:

ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների ու իրավական պետության կազմակերպման և գործառության սահմանադրական սկզբունքների թվում առաջնահերթ տեղ է զբաղեցնում *մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի* մասին դրույթը: Մնացած բոլոր սահմանադրական սկզբունքները, ազգերի իրավահավասարությունն ու ինքնորոշումը, պետական ինքնիշխանությունը և անվտանգությունը, պետական ամբողջականությունն ու տարածքային միասնականությունը և այլն, կարող են դիտվել որպես միակարգ, բայց մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքին ստորադաս սկզբունքներ: Մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքից բխում են պետության մի շարք պարտականություններ. մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումն ու պաշտպանությունը:

Մարդու իրավունքներն ու ազատությունները սոցիալական օբյեկտիվ իրականության երևույթ են: Պետությունը մարդուն չի շնորհում իրավունքներ և ազատություններ, պետությունը ճանաչում և ամրագրում է այդ իրավունքներն ու ազատություններն իր օրենսդրության մեջ: Շնորհիվ հենց այդ իրավունքների՝ տնտեսական, սոցիալական և մշակութային, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական, պետական իշխանությունն ոչ միայն սահմանափակվում է ըստ իր արտացոլման ոլորտների և ազդեցության միջոցների, այլ դառնում է ենթաօրենսդրական [10, էջ 92]:

Սահմանադրականության բնորոշման համար նշենք նրա որակական հատկանիշները.

### **1. Սահմանադրության գերակայությունը պետության իրավական համակարգում.**

Սահմանադրության իրավական հիմքը հենց իրավունքի գերակայության ճանաչումն ու ամրագրումն է: Այս առումով է, որ «նման սահմանադրության գերակայության երաշխավորումը երաշխիք է իրավունքի գերակայության երաշխավորման համար» [12, էջ 26]: Սահմանադրության գերակայությունն նշանակում է, որ պետության նորմատիվ իրավական ակտերի և իրավունքի մյուս աղբյուրների համակարգում սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Սահ-

մանադրության նշված հատկանիշը պահանջում է ապահովել օրենքների և ենթօրենսդրական ակտերի համապատասխանությունը սահմանադրության բովանդակությանը: Բոլոր օրենքները, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների այլ ակտերն ընդունվում են սահմանադրության հիման վրա և նրան համապատասխան:

Իր հերթին, իրավական և օրինաստեղծ պրակտիկայի համար չափազանց կարևոր է սահմանադրության գերակայության չափանիշների հստակեցումը: Պրոֆեսոր *Յու. Ա. Տիխոնիրովը*, օրինակ, առանձնացնում է յոթ նման չափանիշ.

1. սահմանադրական սկզբունքների և գաղափարների արտացոլումն իրավական ակտում,

2. սահմանադրական հասկացությունների և տերմինների ճիշտ օգտագործումը,

3. ակտի ընդունումն իրավասու սուբյեկտի կողմից,

4. իրավական համակարգում ակտի տեղի հաշվի առնելը և դրա ձևին ներկայացվող պահանջները,

5. ակտի նախապատրաստման, ընդունման, ուժի մեջ մտնելու ընթացակարգերի պաշտպանումը,

6. իրավական ակտի նորմի և սահմանադրության համապատասխան նորմի բովանդակային համապատասխանությունը,

7. իրավական նորմերի բովանդակության իրավակիրառական մեկնաբանման և պարզաբանման կայունությունը [9, էջ 257]:

Թվարկված չափանիշներն իրենց բովանդակային ամբողջության մեջ տալիս են մեկ հիմնահարցի պատասխան՝ որքանով է նորմատիվ ակտն իր ձևի ու բովանդակության մեջ իրավական, իրավունքի էության ձևականացում, իրավունքի արտահայտություն: Եթե այդպիսին է, ապա բխում է իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքից և կարող է համարվել սահմանադրությանը համապատասխանող:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, ամրագրելով սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, սահմանում է, որ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները և այլ նորմատիվ ակտերն իրավաբանական ուժ չունեն: Հետևաբար դրանք չպետք է կիրառվեն դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից: Օրենքի սահմանադրականության ստուգման իրավասությունը ՀՀ Սահմանադրությամբ վերապահված է Սահմանադրական դատարանին (Սահմանադրության 101-րդ հոդված), ընդ որում այս հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն ՀՀ Նախագահը, ԱԺ պատգամավորների 1/3, սակայն Սահմանադրական դատարանի գործունեության շուրջ տասը տարիների ընթացքում քննության առարկա են եղել ընդամենը 8 օրենքներ (համեմատության համար՝ ՀՀ - սահմանադրական դատարանը կայացրել է 550-ից ավելի որոշումներ): Սա, ցավոք սրտի, ամենևին չի նշանակում, որ ՀՀ օրենքները լիովին համապատասխանում են Սահմանադրությանը: Խնդիրն այլ է, և այս

Խնդրի լուծման համար գոյություն ունեն մի շարք կառուցակարգեր, որոնք հաջողությամբ գործում են միջազգային սահմանադրաիրավական պրակտիկայում: Այդ կառուցակարգերից մեկն առաջին ատյանի դատարաններին որոշակի գործերով օրենքների սահմանադրականության ստուգման նպատակով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտելն է: Օրենքի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու դեպքում Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը կպարտադրի բոլոր իրավակիրառողներին զերծ մնալ այս օրենքի կիրառումից: Մյուս կողմից, Սահմանադրության 91-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացվում է միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է նաև, որ դատարանի լիազորությունների յուրացումը պատժվում է օրենքով:

## 2. Սահմանադրության ուղղակի գործողությունը.

Սահմանադրությունը կազմում է գործող օրենսդրության մի մասը: Այն իշխանության, ինքնավարության և անձի ազատության կազմակերպման կատարյալ մոդել է: Դրա սոցիալական և իրավաբանական նշանակությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է Սահմանադրության բովանդակությունն արտացոլված իրական կյանքում: Այս առումով, ինչպես արդեն նշվել է, այս գործընթացում հատկապես մեծ կարևորություն է տրվում սահմանադրության ուղղակի գործողության խնդրին, ինչպես նաև նրա նորմերի իրականացման ձևերին՝ սոցիալական պրակտիկայով ստուգված վերլուծության հիման վրա [10, էջ 6]:

Չնայած որոշակի բնորոշումների և մոտեցումների տարբերությանը, սահմանադրություն ասելով հասկանում են օրենսդրական ակտ, որով բնորոշվում է պետության բարձրագույն մարմինների կազմակերպումը, իրենց գործառույթների կատարման համար իրենց կանչման կարգը, նրանց փոխհարաբերությունները և իրավասությունը, ինչպես նաև պետական իշխանության նկատմամբ անհատի կարգավիճակի հիմքերը [5, էջ 371]: Չնական տեսանկյունից սահմանադրությունը կարող է համընկնել պետության այլ օրենքների հետ, սակայն ժամանակակից սահմանադրականության պրակտիկայում այն օրենքներից տարբերվում է հրապարակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու ձևով, իսկ իրավագիտության կողմից ճանաչվում է որպես համապատասխան երկրի իրավական համակարգի առանցքը: Այն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և դրված է այլ օրենքներից և նորմատիվ ակտերից վեր, բնորոշում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության գործունեությունը:

Անկախ իրականացվելիք սոցիալական, քաղաքական և այլ գործառույթներից, ինչպես նաև սահմանադրության՝ իրավական համակարգում զբաղեցված տեղից՝ սահմանադրական նորմերը՝ սկսած նախաբանից, վերջացրած եզրափակիչ դրույթներով, օժտված են

կարգավորող նշանակությամբ և կրում են գործող բնույթ: Տվյալ եզրահանգման անառարկելիությունը պայմանավորված է հետևյալ երկու հանգամանքներով: Առաջին՝ սահմանադրության գործողությունը դրա խախտումից կախվածության մեջ դրված չէ: Սահմանադրական իրավախախտումն առաջ է բերում պետական հարկադրանքի, սանկցիաների կատարման անհրաժեշտություն, որոնք կարող են նախատեսված լինել ինչպես հենց Սահմանադրությամբ, այնպես էլ այլ օրենքներով, սակայն հիմնական օրենքի նորմերի խախտումը չի կարող դիտվել որպես նրա գործողության սկզբնական պահ [10, էջ 42]:

Երկրորդ՝ իրավագիտության մեջ տարածում է գտել այն կարծիքը, որ նորմատիվությունը բնորոշ է միայն սահմանադրության «հիմնական» գլուխներին, դրա դրույթներից շատերը գործող օրենսդրության համար հիմք են ծառայում, սակայն չեն հանդիսանում ուղղակի գործողության նորմեր: Մինչդեռ ոչ սահմանադրական դոկտրինան, ոչ էլ պրակտիկան չեն ճանաչում սահմանադրության «հիմնական» և «ոչ հիմնական» գլուխների տարանջատման օբյեկտիվ չափանիշ. լինելով միասնական համակարգի՝ հիմնական օրենքի բաղադրիչ մասեր՝ դրանք բոլորն էլ հավասարապես համարվում են հիմնական:

Պետության հիմնական օրենքն ամրագրում է առավելապես կարևոր, սկզբունքային դրույթները, որոնք ամիջականորեն գործելով միևնույն ժամանակ ընդլայնվում և որոշակիացվում են այլ օրենսդրական ակտերում: Շատ նորմերում պարունակվում են ուղղակի հղումներ օրենքներին, ինչը կապում է տվյալ նորմն ընթացիկ օրենսդրության հետ: Այսպես, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում օգնությունը ցույց է տրվում անվճար:

Ուղղակի, անմիջական գործողության ոլորտը ներառում է ոչ միայն սահմանադրական նորմերի ինքնուրույն կիրառումը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց կողմից. նույնիսկ երբ սահմանադրական նորմերն իրականացվում են ընթացիկ օրենսդրության նորմերի հետ մեկտեղ, սահմանադրության գործողությունը չի կորցնում իր անմիջական բնույթը:

*Յու. Ի. Գրևցովի* կարծիքով՝ սահմանադրական նորմի ուղղակի գործողության առաջին և, թերևս, հիմնական չափանիշ (այդպիսի գործողության չափանիշ) է հանդիսանում դրա իրական և ուղղակի կիրառումն ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Եթե ընդհանուր իրավասության դատարանները չեն կարող ճանաչել կամ պաշտպանել սահմանադրական նորմում ամրագրված սուբյեկտիվ իրավունքը՝ հենվելով միայն այդ նորմի տեքստի վրա, հետևաբար այդպիսի սահմանադրական նորմը՝ ուղղակի գործող նորմ համարելու բավարար հիմքեր չկան [4, էջ 96]:

4. *Օ. Լուչինի* կարծիքով, չի կարելի տարանջատել սահմանադրական նորմերը որպես ուղղակի գործողների և անուղղակի գործողների՝

ելնելով նրանից, թե ինչ սուբյեկտ է այն կիրառում [6, էջ 66]: Սխալ կլիներ այս կամ այն նորմերի ուղղակի գործողությունը կապել նրանց իրականացման գործում ընդհանուր իրավասության դատարանների մասնակցության հետ: Առաջին հերթին, սահմանադրական նորմերի մեծամասնությունը ներառված չէ դրանց իրավակիրառական գործունեության մեջ: Երկրորդ, շատ սուբյեկտներ, ինչպես օրինակ՝ Յանրապետության Նախագահը, Խորհրդարանը կամ Սահմանադրական դատարանը լուծում են որոշակի գործերն անմիջականորեն սահմանադրական նորմերով:

### **3. Սահմանադրության գործողությունը պետության տարածքում**

Ունիտար պետությունում սահմանադրությունը տարածում է իր գործողությունը պետության ողջ տարածքի վրա՝ ընդգրկելով ինքնավարությունները և նրան համարժեք ինքնորոշող տարածքային կազմավորումները, բացառությամբ այն հարցերի, որոնցով, սահմանադրության դրույթներին համապատասխան, որոշում են ընդունում միայն այդ կազմավորումների մարմինները:

Դաշնային պետություններում դաշնային սահմանադրության հետ մեկտեղ գործում են դաշնության սուբյեկտների (անդամների) հիմնական օրենքները (սահմանադրությունները) հետևյալ պարտադիր կանոնի պահպանմամբ. դաշնության սուբյեկտների (անդամների) հիմնական օրենքները (սահմանադրությունները) չպետք է հակասեն դաշնության սահմանադրությանը: Պետության դաշնային կառուցվածքի դեպքում դաշնային սահմանադրությունը գործում է դաշնության բոլոր սուբյեկտներում (անդամներում), իսկ դաշնության սուբյեկտների (անդամների) սահմանադրությունները՝ համապատասխան դաշնային սուբյեկտների ողջ տարածքում: Հետևաբար, դաշնային պետություններում սահմանադրականությունն ունի երկու մակարդակ. սահմանադրականություն ողջ պետության տարածքի շրջանակներում, և սահմանադրականություն դաշնության համապատասխան սուբյեկտների սահմաններում:

**4. Սահմանադրության, նրա դրույթների իրականացումը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց, քաղաքացիների և նրանց միավորումների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններում.**

Սահմանադրության համապատասխանությունը հասարակության վիճակին և նրա զարգացման միտումներին պայմանավորում է նրա ունակությունն ապահովել նպատակաուղղված սոցիալական փոփոխությունները: Ինչ-որ չափով դրանով է որոշվում սահմանադրության իրականացման վրա սոցիալական գործոնների ազդեցության բնույթը: Սահմանադրության գործողության գլխավոր պայմաններից մեկը նրա նորմերի համապատասխանությունն է կարգավորվող հարաբերությունների օբյեկտիվ օրենքներին: Սահմանադրության, որպես հասարակական հարաբերությունների հատուկ սոցիալական կարգավորողի, սոցիալական և նորմատիվ-իրավական բովանդակությունը բացա-

հայտվում է նրա իրականության սկզբունքի էության մեջ, ինչը նշանակում է հիմնական օրենքի նորմերի համապատասխանություն երկրում տիրապետող հասարակական հարաբերություններին [6, էջ 60]:

Սահմանադրությունն արդարացում է իր սոցիալական նշանակությունը, բավարարում է սոցիալական սպասումներն այն ժամանակ, երբ նրա սկզբունքներն ու նորմերը կենսագործվում են, ներառվում են սոցիալական պրակտիկայի մեջ, իրականացվում են մարդկանց, նրանց կազմակերպությունների գործունեության մեջ, հասարակական հարաբերությունների մեջ: Սահմանադրությունն իր բովանդակությամբ կարող է շատ ժողովրդավարական լինել և իրականությանը չհամապատասխանող՝ անբողջությամբ կամ առանձին դրույթներով: Նման պարագայում սահմանադրությունն անբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրական է, կեղծ: Սահմանադրությունների պատմության մեջ նման օրինակներ շատ կան [11, էջ 7]:

Բավարար չէ ունենալ լավ սահմանադրություն, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ և կառուցակարգեր, որպեսզի սահմանադրությունը մոռացության չմատնվի, որպեսզի այն լինի հասարակական զարգացման իրական գործոն [6, էջ 58]:

### **5. Սահմանադրության գործողության ապահովում.**

Սահմանադրության առավել լիարժեք և արդյունավետ գործողության ապահովման համակարգը ներառում է սահմանադրական իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցները և եղանակները՝ ուղղված այդ տեսակի իրավախախտումների պատճառների վերացմանը, սահմանադրության նորմերի գործողության վրա ազդող բացասական գործոնների գործողության թուլացմանը: Սահմանադրության գործողության ապահովման համակարգն իրենից ներկայացնում է սահմանադրության խախտումների կանխարգելմանը և սահմանադրության պահպանման բարձրացմանն ուղղված միջոցների կառուցվածք:

Սահմանադրության խախտումների կանխարգելում նշանակում է նման խախտումների պատճառների վերհանում, այն բոլոր բացասական գործոնների, երևույթների և գործընթացների վերացում, որոնցից բխում են այդ իրավախախտումները: Նման գործոնների թվում են տնտեսական և քաղաքական անկայունությունը, բնակչության, պաշտոնատար անձանց ցածր իրավական կուլտուրան, պրոֆեսիոնալ իրավագիտակցության աղճատումները և այլն:

Սահմանադրության պահպանման բարձրացումն ենթադրում է հանրային իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության մեջ սահմանադրականության երաշխիքների ձևավորում, կատարելագործում և զարգացում: Սահմանադրականության երաշխիքներ ասելով հասկանում ենք ինչպես հանրային իշխանության կառուցվածքում, այնպես էլ նրանից դուրս դրականորեն ներազդող պայմաններ, գործոններ և միջոցներ: Անհրաժեշտ է տարբերակել սահմանադրականության ընդհանուր

(տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային) և հատուկ (իրավական, հոգեբանական և կառավարչական) երաշխիքները [3, էջ 68]:

**6. Սահմանադրության գործողության պաշտպանություն.**

Սահմանադրության գերակայության, նրա ուղղակի, անմիջական գործողության սկզբունքները չեն իրականացվում ինքնընտրյալ: Նրանց գործողությունը կարող է խախտվել դիտավորությամբ կամ իրավակիրառական պրակտիկայի սխալի ուժով, այսինքն՝ սահմանադրականության ռեժիմի գործողությունը կարող է խաթարվել, ինչի հետևանքների վերացման համար էլ գոյություն ունի Սահմանադրության պաշտպանության (պահպանության) իրավական միջոցների և եղանակների համակարգը:

Սահմանադրականությունը հենց կայանում է նրանում, որ պաշտոնատար անձինք ոչ միայն իրենք կատարեն սահմանադրության պահանջները, այլև վերհանեն սահմանադրության խախտումներն օրենսդիր և իրավակիրառական գործունեության մեջ, կանխեն դրանք, վերականգնեն մարդու և քաղաքացու խախտված իրավունքներն ու ազատությունները, և պատասխանատվության ենթարկեն մեղավոր անձանց:

Ե՛վ օրինաստեղծ, և՛ իրավակիրառական պրակտիկայում բացառված չէ սահմանադրության պահպանման սխալի հնարավորությունը: Դրա պատճառները կարող են լինել տարբեր: Սակայն, գիտական գրականության մեջ, ինչպես նշում է *Ն. Վ. Վիտրուկը*, որպես կանոն, չի բարձրացվել թույլ տրված սահմանադրական իրավախախտման, որպես սխալի բնույթի հարցը, բայց այն ուշադրություն է պահանջում [3, էջ 69]: Սա մեծ նշանակություն ունի համապատասխան իրավաբանական հետևանքների, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվության միջոցների որոշման համար:

**7. Սահմանադրության գործողության ապահովման և պաշտպանության համակարգի կազմակերպում.**

Հասարակությունը Սահմանադրության պահպանման և պաշտպանության վստահելի կառուցակարգի ձևավորման կարիք ունի: Հենց հանուն սահմանադրության պահպանության և պաշտպանության տարբեր պետությունների հիմնական օրենքները նախատեսում են, օրինակ՝ քաղաքական կուսակցությունները և այլ հասարակական միավորումները հակասահմանադրական ճանաչելու և նույնիսկ դրանք ուղղակի արգելելու հնարավորություն, երբ դրանք պետական կարգի և պետության անբողջականության բռնի փոփոխման նպատակ են հետապնդում: Մինչդեռ, նման արգելումը չի կարող հասկացվել լայն առումով և մեկնաբանվել ի վնաս ժողովրդավարության բազմակարծիք բնույթին և ընդդիմադիր քաղաքական գործունեության ազատությամբ, որն իրականացվում է սահմանադրության շրջանակներում և դրանով նախատեսված ձևերով:

Ոչ պակաս կարևոր է ապահովել պետական ինստիտուտների գործունեության համապատասխանությունը հիմնական օրենքի պահանջ-



ներին: Այդ առումով ՀՀ Սահմանադրությունը, մասնավորապես, նախատեսում է պետության գլխի պաշտոնանկության հնարավորություն պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության դեպքում:

Տեսական և գործնական նշանակություն ունի սահմանադրության պահպանման զնահատման միասնական չափանիշների, ինչպես նաև սահմանադրության պահպանման որոշման ցուցանիշների համակարգի մշակումը՝ հանրային իշխանության աշխատակազմի և նրա առանձին օղակների, մարմինների, ստորաբաժանումների ու ծառայությունների գործունեության նկատմամբ: Սահմանադրության գործողության ապահովման համակարգի կազմակերպումը հանրային իշխանության գործունեության մեջ ներառում է սահմանադրության թույլատրված խախտումների, դրանց կատարման պայմանների և պատճառների վերլուծություն, այդ իրավախախտումների կանխարգելման միջոցների մշակում, հանրային իշխանության գործունեության մեջ սահմանադրության գործողության պաշտպանության միջոցների կատարելագործում, սահմանադրության պահպանության ռեժիմի ամրապնդման միջոցների մշակում, այդ թվում՝ կառավարչական գործունեության կատարելագործում, օրենսդիր և ծառայողական գործունեության սահմանադրականության ապահովման համակարգված միջոցների ներառում և այլն: Գործողությունների և որոշումների սահմանադրականության համակարգ ճիշտ կազմակերպել կարելի է միայն պարտադիր հաշվի առնելով հանրային իշխանության այս կամ այն համակարգերի մակարդակներն ու հիերարխիան, ներքին և արտաքին կապերը:

Սահմանադրական դատարանը հանդիսանում է դրական սահմանադրական պրակտիկայի, սահմանադրականության, երկրում սահմանադրական իրավակարգի երաշխիք, իսկ նրա որոշումներն իրավաբանական ուժով հավասարեցվում են սահմանադրական նորմերի ուժին, քանի որ այդ որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և կարող են հաղթահարվել միայն սահմանադրության նորմերի վերանայմամբ:

Սահմանադրական դատարանի առաքելությունը սահմանադրական կարգի, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պահպանման, սահմանադրականության, որպես ժողովրդավարական պետության գործառության իրավական ռեժիմի ու, դրանով հանդերձ, երկրի կայունության և ներդաշնակ զարգացման ապահովման մեջ է:

## Գրականություն

1. *Варламова Н.В.*, Конституционный процесс в России (1991-1993гг.), М., 1998:
2. *Венгеров А.Б.*, Теория государства и права, М., 1998:
3. *Витрук Н.В.*, Конституционное правосудие в России (1991-2001 годы), М., 2001:
4. *Гревцов Ю.И.*, Прямое действие Конституции?/“Журнал Российского права”, 1998, 16:
5. *Елинек Г.*, Общее учение о государстве. СПб, 1908:
6. *Лучин В.О.*, Конституция Российской Федерации: проблемы реализации, М., 2002:
7. *Люшер Ф.*, Конституционная защита прав и свобод личности. М., 1993:
8. Теория права и государства, под ред. *Г.Н Манова*, М., 1995
9. *Тихомиров Ю.А.*, Коллизионное право. М., 2001:
10. *Эбзеев Б.С.*, Конституция, Правовое государство, Конституционный Суд, М., 1997:
11. *Խաչատրյան Հ.*, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Երևան, 1991:
12. *Հարությունյան Գ.*, Իրավունքի գերակայության սահմանափակման երաշխիքները, Երևան, 2003:
13. *Պողոսյան Վ.*, Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան, Երևան, 2001:

LILIT GHAZARYAN

## CONSTITUTIONALITY AS A LEGAL REGIME OF THE FUNCTIONING OF A DEMOCRATIC STATE

Nowadays the international constitutional-legal idea attaches a great importance to the effective guarantee of the constitutional principles and norms in public relations, to the constitutionalization of these relations as a precondition of the formation of rule of law democratic state systems.

The highest principle of the existence and functioning of a democratic society and rule of law state is the *principle of the supremacy of the Constitution*, which, at the same time, is the content of constitutional justice.

The most important aspects of democratic management are contained in the notion “*rule of law state*”, which is based on the following principles: supremacy of law, state sovereignty, separation of powers, inalienability of person’s rights and freedoms. Each of these principles is stated in the Constitution, and thus, they can be supposed as constitutional fundamentals of rule of law state system. The principle of supremacy of law is becoming dominant. The important sign of the formation of civil society is becoming the power limited by the law, and not the law limited by the power.

The Constitution has a leading place in the theory of constitutionalism, and in the hierarchy of the legal system of a democratic state. That is why the rule of law state is often also called *constitutional state*.

The real action of the Constitution, as the act having the highest legal force, and its protection, especially by the Constitutional Court, conditioned the appearance of a legal phenomenon and relevant notion as the *constitutionality*.

The constitutionality is a really acting law system, which is guaranteeing the presence, supremacy and direct action of the Constitution on all the territory of the state, as well as its provision and protection. The constitutionality also means the conformity of the Constitution to the norms and principles of international law, international standards and human and citizen’s rights and freedoms.

For defining the constitutionality its following attributes should be mentioned: supremacy of the Constitution in the legal system of the state; direct action of the Constitution; action of the Constitution on all the territory of the state; realization of the Constitution, its provision in the activities of the state organs, organs of local self-government and their officials, as well as in the activities of the citizens, their associations and their officials; guarantee of the action of the Constitution; protection of the action of the Constitution; guarantee of the action of the Constitution and organization of protection system.

**ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ՀՀ ՊԿ ակադեմիայի հանրային  
կառավարման ամբիոնի ասպիրանտ*

**ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տնտեսական ազատականացման գաղափարախոսության դրսևորումները ՀՀ-ում վերջին տարիներին ներթափանցեցին ավանդաբար պետական սեփականություն հանդիսացող ոլորտներ, որոնք արտադրատնտեսական և տեխնոլոգիական գործունեության կազմակերպման առանձնահատկությունների պատճառով գրականության մեջ ստացել են «բնական մենաշնորհ» անվանումը: Բնական մենաշնորհի ոլորտներում երկարաժամկետ միջին ծախսերը նվազագույնի են հասցվում միայն այն ժամանակ, երբ մեկ ձեռնարկություն շուկային կամ նրա հիմնական մասին սպասարկում է ամբողջությամբ: Սովորաբար դրանք արտադրական ենթակառուցվածքի ոլորտներն են: Այդ ճյուղերում ապրանքի արտադրության (ծառայության մատուցման) արդյունավետ նվազագույն մասշտաբը մոտ է այն քանակին, որի հանդեպ շուկան ցանկացած զնի դեպքում պահանջարկ է ներկայացնում և որն էլ բավարար է արտադրության ծախսերը հոգալու համար: Այսինքն՝ տվյալ դեպքում արտադրության կազմակերպումը մի քանի ձեռնարկությունների կողմից հանգեցնում է նրան, որ յուրաքանչյուր դեպքում արտադրության մասշտաբները կլինեն արդյունավետության մակարդակից ցածր: Հետևաբար, բնական մենաշնորհի հիմքում ընկած է արտադրության տեխնոլոգիայի և սպառողներին սպասարկման առանձնահատկությունները, որոնց արդյունքում մրցակցությունն անհնար է կամ ցանկալի չէ: Բնական մենաշնորհների թվին են պատկանում ջրամատակարարման, հեռախոսակապի, էներգամատակարարման և այլ ծառայություններ [1, էջ 185]:

Բնական մենաշնորհն ապրանքային շուկայի այնպիսի վիճակ է, երբ արտադրության (ծառայությունների մատուցման) տեխնոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված պահանջարկի բավարարումը նման շուկայում արդյունավետ է մրցակցության բացակայության շնորհիվ՝ կապված արտադրության ծավալների ավելաց-

ման հետ, իսկ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից արտադրվող (իրացվող) ապրանքները (ծառայությունները) սպառման մեջ չեն կարող փոխարինվել մեկ այլ ապրանքով (ծառայությամբ): Ընդ որում, տվյալ ապրանքային շուկայում պահանջարկն ավելի քիչ չափով է կախված գնի փոփոխությունից, քան ապրանքների (ծառայությունների) այլ տեսակների պահանջարկը [2]:

Վերը նշված բնորոշմամբ որպես բնական մենաշնորհի ոլորտներ կարող են հանդես գալ՝ խողովակաշարերով նավթի, նավթամթերքների, գազի փոխադրումը և մատակարարումը, էլեկտրական և ջերմային էներգիայի հաղորդումը (փոխադրումը), բաշխումը և ներկրումը, ոռոգման և խմելու ջրի փոխադրումը և մատակարարումը, երկաթուղային փոխադրումները, օդանավակայանների, հեռահաղորդակցության և փոստային ծառայությունները:

Ամփոփելով տնտեսագիտական գրականության և բնական մենաշնորհների մասին օրենքների մեջ տեղ գտած «բնական մենաշնորհ» հասկացության բնորոշումները, մեր կարծիքով, բնական մենաշնորհը կարելի է բնորոշել որպես կայուն և շարունակական առանձնահատուկ շուկայական իրավիճակ՝ պայմանավորված գործունեության լայն մասշտաբներով և ոչ առաձգական առաջարկով:

Բնական մենաշնորհների ոլորտում պետական կարգավորումը և վերահսկողությունը պետք է ուղղվեն մենաշնորհային ձեռնարկությունների արդյունավետության ապահովմանը և գերշահույթների կանխմանը կամ էլ վերաբաշխմանը: Միջազգային փորձը վկայում է, որ բնական մենաշնորհների ոլորտում աշխատող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը պետության կողմից պետք է ենթարկվի որոշակի սահմանափակումների, կարգավորման և վերահսկողության: Մեր կարծիքով, պետական կարգավորման և վերահսկողության հիմնական նպատակը պետք է լինի սպառողների իրավունքների պաշտպանությունը և հավասար պայմանների ապահովումը, սակագների հիմնավորվածությունը և արդարացիությունը, ծառայությունների մատուցման ապահովությունը և որակի սահմանված ստանդարտներին համապատասխանությունը:

Մեր խորին համոզմամբ, բնական մենաշնորհների արդյունավետ պետական կարգավորումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝ սպառողների և բնական մենաշնորհների տնտեսավարող սուբյեկտների շահերի հավասարակշռության ձգտումը, սպառողների և բնական մենաշնորհների տնտեսավարող սուբյեկտների կարիքների բավարարումը, այդ տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ և շահութաբեր գործունեությունը, վերջիններիս և այդ ոլորտը կարգավորող պետական մարմինների միջև փոխադարձ պատասխանատվությունը:

Աշխարհի տարբեր երկրներում բնական մենաշնորհների պետական կարգավորումն իրականացվում է տարբեր ձևերով, սակայն բոլոր տարբերակները հանգում են հետևյալ երկուսին՝

1. ուղղակի կարգավորում, որն իրականացվում է այդ նպատակով ստեղծված պետական լիազոր մարմնի կողմից,

2. անուղղակի կարգավորում, երբ այդ ոլորտի կարգավորումն իրականացվում է պետության կողմից՝ սեփականատիրոջ իրավունքներն իրագործելիս:

Կարելի է առանձնացնել բնական մենաշնորհների կարգավորման գնային և ոչ գնային մեթոդներ: Գնային մեթոդը ենթադրում է սակագնի սահմանումը կամ վերջինիս սահմանային մակարդակի որոշումը և շահույթի նորմայի սահմանումը:

Սինչև վերջին ժամանակները բազմաթիվ երկրներում բնական մենաշնորհների կարգավորման գերակշռող և տարածված ձևը շահույթի նորմայի սահմանափակումն էր, որն իրականացվում էր ծախսերի նկատմամբ շահույթի որոշակի գումարի հավելման միջոցով: Ընկերություններին թույլատրվում էր ստանալ զուտ եկամուտ (հարկերը և վճարումները հանելուց հետո) հայտնի (որոշակի) սահմաններում: Այդպիսի համակարգի գործողության ժամանակ ընկերությունների գործունեության բոլոր կողմերը՝ սակագները, ներդրումները, շահութաբերությունը և այլն, ենթակա են պետական մարմինների կողմից մանրակրկիտ իրավական կարգավորման: Մաքուր տեսքով այն այժմ հազվադեպ է կիրառվում: Այսպես, Չիլիում ընկերություններին թույլատրվում է ստանալ շահույթի այնպիսի նորմա, որը հավասար է եկամտաբերության ոչ ռիսկային նորմային գումարած պարզի մեծությունը, որը որոշվում է ճյուղում կայուն ռիսկով և ոչ ռիսկային ներդրումների նորմայի և դիվերսիֆիկացված ներդրումային «պայուսակի» եկամտի միջև եղած տարբերությամբ: Յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ սակագինը ճշգրտվում է արժեզրկման չափով: Երկարաժամկետ ծախսերի մակարդակը սահմանվում է հնգամյա ներդրումային ծրագրի շրջանակներում (որը մշակվում է կանխատեսվող պահանջարկի բավարարման հետ կապված ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակով): Բացի այդ, ընկերության եկամտաբերությունը ճշգրտվում է՝ ելնելով արտասահմանում նմանատիպ ընկերությունների գործունեությունից:

Բնական մենաշնորհային շուկաների կարգավորման հիմնական ուղղություններից է սակագնային կարգավորումը և վերահսկողությունը, որի դեպքում համապատասխան պետական գերատեսչությունը սահմանում է մենաշնորհային ապրանքների և ծառայությունների գները և սակագները: Իհարկե, նման կարգավորումը վարչական բնույթ է կրում և կարող է ուղղակիորեն ազդել ձեռնարկությունների արդյունավետության վրա, խոչընդոտելով վերջիններիս հետագա զարգացումը, խախտել շուկայական գնային կարգավորման կառուցակարգը՝ հանգեցնելով ռեսուրսների և եկամուտների ոչ արդյունավետ բաշխման: Մենաշնորհ ընկերությունների գործունեության կարգավորման հիշյալ մեթոդի էությունն այն է, որ համաձայնեցված ժամկետում սահմանվում է սակագին:

Ոլորտի որոշ մասնագետների կարծիքով սակագների կոշտ զսպելը բերում է բնական մենաշնորհների տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության վատթարացման [3]: Սակայն առանց այդ ընկերություններում անկախ աուդիտի անցկացման դժվար է հաստատել կամ հերքել այդպիսի եզրակացությունները: Որոշ դեպքերում հենց բնական մենաշնորհներն են պաշտպանության կարիք զգում քաղաքական ուժերի անհիմն ճնշումից, որոնք հանգեցնում են պետության համար կենսականորեն անհրաժեշտ այդ ոլորտների ֆինանսական անկայունության:

Հարկ է նշել, որ ՀՀ բնական մենաշնորհների ճյուղերում որպես ներդրումների իրականացման հիմնական աղբյուր ավանդաբար դիտվում էր ներդրումների ֆինանսավորումը սակագների բարձրացման միջոցով (սա հատկապես բնորոշ է էլեկտրաէներգետիկայի և հեռախոսակապի ճյուղերին): Հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական պայմաններում, նկատի ունենալով սակագների աճի զսպմանն ուղղված պետական վերահսկման և կարգավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը, ներդրումային գործընթացն անհրաժեշտ է համապատասխանեցնել շուկայական տնտեսության պահանջներին, այսինքն՝ ներդրումները պետք է իրականացվեն փոխառությունների ներգրավման և բաժնետիրական կապիտալի հնարավորությունների օգտագործման միջոցով: Վերջինս թույլ կտա նաև բարելավել բնական մենաշնորհների ճյուղերի ձեռնարկությունների բաժնետիրական կառավարման մակարդակն ու վերահսկելիությունը:

Բնական մենաշնորհների կարգավորման ոչ գնային մեթոդը հիմնված է սպառողների որոշ խմբերի պահանջումներին առաջնային բավարարման վրա, այսինքն՝ սպառողների խմբերի ընտրությունը, որոնք ենթակա են պարտադիր սպասարկման, և սպառողների սպասարկման ստորին սահմանի որոշումը ողջ պահանջարկը բավարարելու անհնարինության դեպքում:

Ուղղակի կարգավորում և գնային մեթոդ կիրառող երկրի վառ օրինակ է ԱՄՆ-ն, իսկ անուղղակի կարգավորում՝ Շվեդիան և Ֆրանսիան: Անկախ կարգավորման ձևերից, մեր կարծիքով, բնական մենաշնորհների պետական կարգավորումը պետք է հետապնդի հետևյալ հիմնական նպատակները՝

- չհիմնավորված սակագների կիրառման կանխարգելումը,
- բնական մենաշնորհների տնտեսավարող սուբյեկտների շահերի պաշտպանումը,
- ազգային սահմաններում և միջազգային մակարդակում պետության շահերի պաշտպանումը:

Հաշվի առնելով բնական մենաշնորհների շահութաբերության բարձր մակարդակը՝ որպես մենաշնորհացման բացասական դրսևորումներից մեկը, որոշ տնտեսագետների կարծիքով, կարող է կիրառվել հարկումը որպես կարգավորման առանձնահատուկ գործիք [5]: Այս պարագայում, բնականաբար, նպատակահարմար կլինի կիրառել

հարկային բարձր դրույքներ բնական մենաշնորհի ձեռնարկությունների նկատմամբ, որոնք մենաշնորհային դիրքի շնորհիվ ստանում են գեր շահույթներ: Սակայն, մենք գտնում ենք, որ այդպիսի համակարգի ներդրումը կհանգեցնի մի շարք վարչական խնդիրների առաջացմանը: Այդ իսկ պատճառով հարկման բարձր դրույքաչափերի փոխարեն անհրաժեշտ է պարզապես խստացնել սակագները:

Հարկ է նշել, որ բնական մենաշնորհների կարգավորման և վերահսկողության նպատակով կարող են սահմանվել որակի ստանդարտներ: Որակի հստակ ստանդարտների սահմանման դեպքում ձեռնարկությունը պարտավորվում է որոշակի ժամանակահատվածում ապահովել որոշակի արդյունքներ: Այդ արդյունքներն ապահովելու համար ձեռնարկությունը մեխանիկորեն ստիպված կլինի կատարել կապիտալ ներդրումներ, իսկ պետական վերահսկողությունը շատ անգամ ավելի դյուրին կդառնա:

Որպես բնական մենաշնորհների կարգավորման և վերահսկողության այլընտրանքային ուղղություն կարող է հանդես գալ բնական մենաշնորհի հանդիսացող ռեսուրսների վարձակալությունը: Բնական մենաշնորհի հանդիսացող ձեռներկությունների վարձակալության համակարգի արդյունավետությունը հիմնված է բազմաթիվ փաստարկների վրա: Օրինակ՝ վարձակալության համակարգի պայմաններում նույնիսկ մենաշնորհային ձեռնարկությունների տնտեսական իշխանությունը սահմանափակ է, քանի որ վերջիններս չեն կարող խոչընդոտել այլ ձեռնարկությունների մուտքը ոլորտ: Մյուս կողմից, վարձակալության համակարգի պայմաններում ձեռնարկությունները երկարաժամկետ հատվածում չեն կարող ստանալ շահույթներ, որովհետև տնտեսության մեջ առկա շահույթի միջին նորմայից ավելի բարձր շահույթների ստացումը մեխանիկորեն կբարձրացնի վարձավճարները տնտեսության տվյալ ոլորտում՝ դրանով իսկ բացառելով գերշահույթների ստացումը:

Որպես լայնորեն կիրառվող այլընտրանքային (մրցակցային) կառուցակարգ հարկ է նշել հավատարմագրային կառավարումը: Նշենք, որ պետական գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում որպես հավատարմագրային կառավարման օբյեկտ անհրաժեշտ է դիտարկել ընկերություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը: ՀՀ-ում պետական գույքի հավատարմագրային կառավարման օրինակ արդեն իսկ կա, մասնավորապես, ելնելով Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից՝ ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 13-ի թիվ 749 որոշմամբ հաստատվել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՊՓԲԸ-ի գործադիր մարմնի լիազորություններն այլ առևտրային կազմակերպության վերապահելու համար հայտարարված միջազգային մրցույթների արդյունքները, որով հաղթող է ճանաչվել իտալական «Էյ Սի Ի Էյ Ս Պ Ա»



կազմակերպությանը՝ 2.925.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ պայմանագրային գումարով:

Ինչպես նաև որպես այլընտրանքային (մրցակցային) կառուցակարգ կարող է ծառայել բնական մենաշնորհի առևտրային կազմակերպությունների կառավարումը կոնցեսիոն պայմանագրերով կամ ֆրանչայզինգով: Եթե մասշտաբի տնտեսման էֆեկտի առկայությունը պայմանավորում է ծառայության մատակարարի միակությունը, ապա մրցակցությունը կարող է նախաձեռնված լինել միայն սկզբնական փուլում՝ այդպիսի մատակարար լինելու իրավունքի ձեռքբերման համար սակարկությունների կազմակերպման ժամանակ, այսինքն՝ բնական մենաշնորհի համար ֆրանչայզինգի, կոնցեսիայի կամ գույքի օգտագործման իրավունքի ստացման համար: Գույքի օգտագործման իրավունքի փոխանցման ձևով մասնավորեցումն ամրագրված է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 20-րդ հոդվածներով [6], իսկ ֆրանչայզինգի պայմանագրով օգտագործման իրավունքի փոխանցման իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 969-982-րդ հոդվածներով [7], իսկ կոնցեսիա ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ, որի սահմանումը, մեր կարծիքով, բավականին արդիական և հրատապ խնդիր է: Ընդ որում, անհրաժեշտ է սահմանել այն կարևոր դրույթները, որոնք անհրաժեշտ են կոնցեսիոն պայմանագրերի կնքման և իրականացման համար:

Բազմաթիվ հանրաճանաչ հետազոտողներ բազմիցս նշում են, որ մենաշնորհային շուկաներում հնարավոր է մրցակցություն: Մեր կարծիքով, մրցակցության ի հայտ գալու առավել օբյեկտիվը՝ Պորտերի մոդելն է, որն արտահայտում է մրցակցության հանդես գալու հետևյալ դեպքերը՝

- նոր մրցակիցների ի հայտ գալու վտանգը,
- ապրանքների կամ ծառայությունների փոխարինողների ի հայտ գալու վտանգը,
- մատակարարների վիճարկելու ունակությունը,
- գնորդների վիճարկելու ունակությունը,
- հակամարտությունն առկա մրցակիցների միջև [4, էջ 424]:

Բնական մենաշնորհների տարբեր ոլորտների համար վերոնշյալն արտահայտվում է տարբեր ձևերով: Օրինակ՝ հեռահաղորդակցության ոլորտում ընկերությունների մենաշնորհային դիրքը կարող է խաթարվել երկու դեպքում՝ նոր մրցակիցների ի հայտ գալու և ծառայությունների փոխարինողների ի հայտ գալու, այսինքն՝ տեխնոլոգիական մրցակցություն՝ պայմանավորված ԳՏԱ-ով: Վերջին տարիներին ՀՀ-ում ի հայտ եկան ավանդական հեռախոսակապին փոխարինող մի շարք ծառայություններ, օրինակ՝ բջջային հեռախոսակապը, ինտերնետ ցանցը և այլն: Այս ամենը կարող է հանգեցնել նրան, որ հեռահաղորդակցության ոլորտը բնական մենաշնորհ ոլորտից պարբերաբար ան-

ցում կատարարի առավել մրցակցային շուկայի և կարգավորվող գների փոխարեն գործեն ազատ գներ:

Տնտեսագիտական տեսանկյունից վերոնշյալ իրավիճակը կարելի է գնահատել որպես անցում մենաշնորհից դեպի օլիգոպոլիա, երբ մեկ սուբյեկտի ձեռքում է գտնվում շուկայի զգալի մասնաբաժինը, սակայն վերջինիս հետ մեկտեղ ի հայտ են գալիս այլ տնտեսավարող սուբյեկտներ, որոնք մատուցում են համանման ծառայություններ: Ավելին, ապրանք-փոխարինողների ի հայտ գալը թույլ է տալիս կանխատեսել նոր տնտեսավարող սուբյեկտների հանդես գալը, որոնք կարող են գրավել և վերահսկել շուկայի որոշ մասնաբաժին: Մեր կողմից նկարագրված հիշյալ միտումները պայմանավորում են հեռահաղորդակցության շուկայի ապագա անցումը մենաշնորհից դեպի օլիգոպոլիա: Այսպիսի շուկայական իրավիճակը տնտեսագիտական գրականության մեջ գրեթե չի դիտարկվում բնական մենաշնորհները քննարկելիս:

Սակայն, վերոնշյալի հետ մեկտեղ, հեռահաղորդակցության ընկերությունների մենաշնորհային դիրքի ամբողջական կորուստը գրեթե անհնար է, քանզի կապի ծառայությունների մատուցումից բացի վերջիններս տնօրինում են հեռախոսային հաճախականության ալիքներին և բազմաթիվ կապի օպերատորներ ստիպված են աշխատել բազմազան տեխնոլոգիաների վրա հիմնված ցանցերի զուգահեռ առկայությամբ:

Համանման երևույթներ կարող են առաջանալ էլեկտրաէներգետիկայի, երկաթուղային տրանսպորտի և գազի ոլորտներում: Նշենք, որ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում բնական մենաշնորհն առավել կայուն է և շուկան գրեթե ամբողջովին զերծ է մրցակցության գործոնների ազդեցությունից:

Փաստորեն մենք փորձեցինք նկարագրել բնական մենաշնորհի ոլորտներում մրցակցային միջավայրի ի հայտ գալու գործոնները և զարգացման միտումները. ԳՏԱ-ն ժամանակակից փուլում պայմանավորում է ապրանք-փոխարինողների և նոր տնտեսավարող սուբյեկտների ի հայտ գալը, որոնք մրցակցում են բնական մենաշնորհների ավանդական տնտեսավարող սուբյեկտների հետ: Ներկայումս բնական մենաշնորհների կարգավորման ավանդական մեթոդների հետ մեկտեղ նշանակալից ազդեցություն են ձեռք բերում այլընտրանքային (մրցակցային) կառուցակարգերը:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին ՀՀ բնական մենաշնորհի ոլորտներին բնորոշ են եղել տնտեսական գործունեության կազմակերպումն արտադրական հզորությունների թերբեռնվածության ռեժիմում, մատուցված ծառայությունների դիմաց մեծ չափերի հասնող թերվճարումները, տարիների ընթացքում կուտակված հսկայական պարտքերը, գործունեության կարգավորման և վերահսկման կառուցակարգերի անկատարությունը:

Փորձենք համապարփակ ներկայացնել ՀՀ բնական մենաշնորհ հանդիսացող ոլորտները և վերջիններիս պետական կարգավորման համակարգը:

ՀՀ-ում հասարակական ծառայությունների մատուցմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության կարգավորման գործը կազմակերպվեց «ոլորտային» սկզբունքով: Ներկայումս գործում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը զբաղվում է էներգետիկայի ոլորտի ձեռնարկությունների լիցենզավորմամբ և էլեկտրաէներգիայի սակագների հաստատմամբ, ինչպես նաև ջրամատակարարման ու ջրահեռացման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում համանման գործառույթներով:

Էներգետիկայի ոլորտում պետական կառավարումն իրականացնում է ՀՀ էներգետիկայի նախարարությունը, իսկ պետական կարգավորման իրավասությունները տրված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Հանձնաժողովն անկախ, հինգ անդամներից բաղկացած մարմին է: Հակամենաշնորհային կարգավորման հիմնական ազդակները սակագնային կարգավորումը և լիցենզավորումն են:

Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգի մեջ մտնում են էլեկտրակայաններ, բարձր և ցածր լարման էլեկտրահաղորդման գծեր, ենթակայաններ, կաբելային ցանցեր, կարգավորման, պաշտպանության, կապի և այլ ենթակառուցվածքներ: ՀՀ-ում էլեկտրաէներգիան արտադրվում է 3 հիմնական ոլորտներում՝ ջերմաէլեկտրակայաններ (Հրազդանի և Երևանի), ատոմակայան և հիդրոէներգետիկայի համակարգ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային կարգավորման իրավասություններն ամրագրված են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի հիմնական սկզբունքներում, որոնք հաշվի են առնվում սակագների հաշվառման ժամանակ: Այդ սկզբունքներին են վերաբերում պահպանման և շահագործման ծախսերի փոխհատուցումը, մաշվածության հատկացումները, վարկերի սպասարկումը, շահույթի ապահովումը: Դրա հետ մեկտեղ, օրենքով կարգավորվում են սակագնում պետական նպաստների հաշվառման, նպաստների խաչաձև հատկացման բացառման, բազմաստիճան և տարբերակված սակագների կիրառման հնարավորությունների հարցերը:

Որպես հակամենաշնորհային կարգավորման տարր՝ վերը նշված օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված է, որ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձ, առանց հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ: Իսկ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերն առանց հանձնաժողովի

թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր [8]:

ՀՀ-ում էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկությունները ձևավորում են օլիգոպոլիական շուկայական մոդել, սակայն ընդգծված մենաշնորհային շուկայական մոդելի հատկանիշներով, քանի որ այդ ձեռնարկությունները հիմնականում պետական են և միմյանց հետ մրանց պայմանավորվելու հնարավորությունները թույլ են:

Էներգահամակարգի բարեփոխման գլխավոր նպատակը ծախսերի և սակագների նվազեցումն է, որը հնարավոր չէ առանց ոլորտի տեխնիկապես վերազինմանն ուղղված ներդրումային քաղաքականության մշակման:

Ներկայումս երկաթուղային տրանսպորտի պետական կառավարումն իրականացվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության Հայկական երկաթուղու դեպարտամենտի կողմից: Հարկ է նշել, որ նշված դեպարտամենտը, գտնվելով նախարարության կազմում, ունի գերատեսչության կարգավիճակ և ստեղծվել է ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայկական երկաթուղու համակարգի կառուցվածքային և տնտեսական բարեփոխումների մասին» թիվ 634 որոշմամբ: Ընդ որում, փոխադրումների գործընթացի կառավարումը նախարարության բացառիկ իրավասությանն է: Ներկայումս Հայկական երկաթուղու դեպարտամենտի կազմակերպական կառուցվածքում ներառված է (բացի կենտրոնական ապարատի կառուցվածքից) 13 փակ բաժնետիրական ընկերություն, որոնցից 12-ի բաժնետոմսերի 100 տոկոսը պետական սեփականություն է, իսկ 1-ը պետական մասնակցությամբ ընկերություն է, որի բաժնետոմսերի միայն 80 տոկոսն է պետական:

Ներկայումս ՀՀ երկաթուղային տրանսպորտի բնագավառում անհրաժեշտ է իրականացնել սակագների գործող համակարգի կատարելագործում ու սակագների պետական կարգավորման նոր կարգի ներմուծում և այս ոլորտը բնական մենաշնորհների կարգավորման հարցերով զբաղվող անկախ պետական մարմնին փոխանցում:

Երկաթուղային տրանսպորտի ոլորտում մենաշնորհային հատվածին են վերաբերում ենթակառուցվածքը (ուղի և ճանապարհային տնտեսություն, սարքավորումներ, կայարաններ), գնացքաքարշ տնտեսությունը, տեխնիկական և տեղեկատվական համակարգերը, որոնք ապահովում են փոխադրումների գործընթացի կառավարումը և ենթակառուցվածքի օգտագործման պատվերների ձևավորումը: Մրցակցային հատվածին են վերաբերում բեռների և ուղևորների տեղ հասցնելը, տրանսպորտային-էքսպեդիցիոն ծառայությունների համալիրը: Մենաշնորհային հատվածում հարկավոր է իրականացնել սակագների պետական կարգավորում, իսկ մրցակցային միջավայրում`

մրցակցային շուկայի զարգացմանը զուգընթաց՝ դրանց փուլ առ փուլ ազատականացում:

Ջրային համակարգի պետական կառավարմամբ զբաղվում է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն, իսկ սակագնային կարգավորման գործառնություններն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Այս ոլորտի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման առումով կարևորվում է սկսած վերափոխումների շարունակումը կազմակերպությունների կառավարման, մասնավոր օպերատորի ներգրավման, կազմակերպակառուցվածքային և ֆինանսական վերակառուցման տեսանկյունից:

Եւենք, որ միայն առանձին տնտեսական գործունեություններ, որոնք իրականացվում են այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ կապը և հեռահաղորդակցությունը, իրականում բնական մենաշնորհներ են և պետք է ենթարկվեն պետական կարգավորման: Այլ տեսակի տնտեսական գործունեություններ էականորեն կարող են գործել մրցակցության պայմաններում, բայց մրցակցային միջավայրի ստեղծումը համապատասխան կառուցվածքային փոփոխություններ է պահանջում: Կապի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապը, չպետք է դիտվեն որպես բնական մենաշնորհներ, բայց բազմաթիվ դեպքերում տեղական կապի և այլ ցանցերն իրենց արդի տեխնոլոգիական մակարդակով հանրապետությունում պետք է դասվեն բնական մենաշնորհների ոլորտներին և ենթարկվեն պետական կարգավորման: Հանրապետության համար հեռահաղորդակցության ոլորտում բնական մենաշնորհի օրինակ է «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 10 %-ի սեփականատերը ՀՀ-ն է, իսկ մնացած 90 %-ինը՝ հունական «ՕՏԵ» ընկերությունը: Հարկ է նշել, որ երբ ՀՀ կառավարության 1997 թվականի հունիսի 25-ի թիվ 218 որոշմամբ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՀՀ ՓԲԸ-ին տրամադրված թիվ 60 լիցենզիայի լրամշակված և խմբագրված տարբերակը մտավ օրինական ուժի մեջ, «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի կողմից տարվող քաղաքականությունն որոշ իմաստով հակասել է հանրապետության շահերին՝ զարգացնել հեռահաղորդակցության ծառայությունները: Այդ ծառայությունների զարգացումն այսօր կարևոր խնդիր է, քանի որ աշխարհի տեղեկատվական դաշտում Հայաստանի ներառումը տնտեսության գիտակրթական համակարգի, ձեռներեցության, ծառայությունների և այլ ոլորտների զարգացման պարտադիր պայման է: Այդ ծառայությունների ներդրման և արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ են արագագործ կապուղիներ, այդ թվում՝ ինտերնետի միջազգային մատակարարների հետ: Ցավոք Հայաստանը տվյալների փոխանակման միջազգային կապուղիների խիստ սահմանափակ թողունակության պատճառով տեղեկատվական դժվարություններ ունի:

Հանրապետության փոստի և հեռահաղորդակցության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է ապահովել համակարգի ցանցերի վերազինումը, բնակչության պահանջարկի առավել լրիվ բավա-

րարման նպատակով մատուցվող ծառայությունների տեսականու ընդլայնումը և միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցումը, միջազգային փոխհարաբերությունների ընդլայնումը, կադրերի մասնագիտական պատրաստվածության բարձրացումը:

Նշենք, որ ըստ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտի կարգավորման գործառույթը տրվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Կապված հանրապետության մասամբ շրջափակված հետ՝ ներկայումս առանձնահատուկ տեղ պետք է տալ մեկ այլ կարևոր բնական մենաշնորհ ոլորտի՝ օդանավակայանների ծառայություններին: Այս կապակցությամբ նշենք, որ ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 733 որոշման 1-ին կետով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը վերակազմավորվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, որի գլխավոր խնդիրն օդային տարածքի կառավարման ապահովումն է:

Բնական մենաշնորհների կարգավորման արտասահմանյան փորձը վկայում է, որ այդ գործունեության առանցքն այդ ոլորտը կարգավորող մարմինների հնարավորինս առավելագույն անկախությունն է ինչպես պետական այլ մարմիններից, այնպես էլ նրանից կողմից կարգավորվող տնտեսավարող սուբյեկտներից, ինչպես նաև, մեր կարծիքով, շատ կարևոր է կողմերի շահերի համաձայնեցումը և կարգավորող մարմինների նպատակաուղղված գործունեությունը, որը նրանց հնարավորություն կընձեռի չընդունել քաղաքականորեն անընդունելի որոշումներ:

Արդեն այսօր կարելի է կանխատեսել, որ բնական մենաշնորհները կարգավորող մարմնի վերջնական ձևավորումը եղել է և կլինի ոչ միայն երկարատև, այլև ցավագին: Նախարարությունները չեն ցանկանում հրաժարվել իրենց որոշ լիազորություններից: Բավականին սուր է դրված ֆինանսավորման հարցը, դժվար է ներգրավել որակավորված մասնագետներ, քանի որ պետական ծառայողների աշխատավարձը բավականին ցածր է կարգավորվող ընկերություններում համանման մակարդակի աշխատողների աշխատավարձից: Ոլորտի որոշ մասնագետներ, որոնք կարող էին կատարել այդպիսի աշխատանք, զբաղեցնում են բարձր վարձատրվող պաշտոններ ընկերություններում, որոնք պետք է ենթարկվեն կարգավորման:

Վերոնշյալ պատճառով առավել մեծ նշանակություն է ստանում բնական մենաշնորհները կարգավորող մարմնի կադրային ապահովվածությունը, կարգավորման ստույգ մեթոդների մշակումը, տեղեկատվական բազայի կատարելագործումը, որն էլ թույլ կտա ընդունել հիմնավորված որոշումներ:

Ընդհանուր առմամբ, բնական մենաշնորհների կարգավորման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման բնագավա-

ռուն ՀՀ-ում կատարվել է բավականին գործ, սակայն դեռ աշխատանք պետք է տարվի ինչպես արդյունավետ կարգավորման համակարգի ստեղծման, այնպես էլ ոլորտների վերակազմավորման, որը թույլ կտա ձևավորել առավել կառավարվող կարգավորման ոլորտ:

Մեր կարծիքով, ՀՀ-ում բնական մենաշնորհի հանդիսացող բոլոր ոլորտների պետական կարգավորման գործառույթն անհրաժեշտ է փոխանցել բնական մենաշնորհները կարգավորող անկախ մարմնին՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, որով էլ միայն հնարավոր կլինի հասնել վերոնշյալ նպատակներին:

Կարգավորման ոլորտի հետ կապված խնդիրները լուծելու համար պետք է նշել, որ գրեթե բոլոր երկրներում կարգավորող մարմիններին չի բավականացնում ո՛չ ժամանակը, ո՛չ որակավորված անձնակազմը, ո՛չ տեղեկատվությունը: Շատ դեպքերում բնական մենաշնորհների սուբյեկտների ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական փաստաթղթերի ստուգումները պատահական են, մակերեսային և ձգձգված են ժամանակի մեջ: Վերահսկող մարմիններն իրենց հետևությունները հիմնականում կառուցում են ստուգվող ընկերությունների կողմից ներկայացվող տվյալների հիման վրա: Նման կարգավորման արդյունավետությունը բարձր չէ և հաճախ, սահմանափակելով մրցակցությունը, ավելի շատ վնաս է հասցնում, քան օգուտ:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է փորձել ձևավորել և զարգացնել մրցակցություն բնական մենաշնորհների այն ոլորտներում, որտեղ այն հնարավոր է և կարող է ձեռք բերվել: Այդ ոլորտներում մրցակցությունը կարող է զարգանալ միայն այն դեպքում, երբ կարգավորող մարմինների կողմից ստեղծվում են համապատասխան պայմաններ: Այսպես, էլեկտրաէներգիայի և բնական գազի արտադրողներին (իրացնողներին) անհրաժեշտ է բաց, խտրականությունից զերծ մուտք դեպի տրանսպորտային համակարգեր, իսկ միջքաղաքային և միջազգային օպերատորներին՝ բաց և հավասար մուտք դեպի ընդհանուր օգտագործման ցանցերը: Կարգավորող մարմինների խնդիրն այստեղ պետք է կայանա շուկայի բոլոր հնարավոր մասնակիցների համար այդպիսի ազատ մուտքի ապահովման իրականացումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Стиглиц Дж. Ю.*, Экономика государственного сектора, пер. с англ., Москва, МГУ, ИНФРА-М, 1997.
2. Федеральный закон РФ “О естественных монополиях”, 17.08.1995, статья 3, <http://www.parliament.ru>.
3. *Новожилова Т. Н., Банникова М. А.*, Реформирование и регулирование естественных монополий в российской экономике—Государственное регулирование экономики. Региональный аспект. Материалы третьей международной научно-практической конференции. Т. 2. – Н. Новгород: ННГУ, 2001.
4. Экономика, под ред. *Архипова А. И., Нестеренко А. Н., Большакова А. К.*, М., “Проспект”, 1999.
5. *Банникова М. А.*, Естественные монополии на фоне глобализации, Седьмая нижегородская сесия ученых, Н. Новгород: ВГИПА, 2002.
6. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 14, 20, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1998/17(50), Երևան:
7. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 969-982, ՀՀ - պաշտոնական տեղեկագիր, 1998/17(50), Երևան:
8. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2001/10(142), Երևան:
9. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2004/7 (306):



**ARMAN GRIGORYAN**

*Post-graduate of the Public Administration  
Academy of the Republic of Armenia:*

## **PROBLEMS OF STATE REGULATION OF NATURAL MONOPOLIES IN THE REPUBLIC OF ARMENIA**

The state regulation and control in the field of natural monopolies must be directed to the effectiveness of the monopolistic companies and the abolition or redistribution of super-profits. The defense of consumers' rights, the price validity and fairness, the security of services and the standardized quality should be the main goal of state regulation and control.

The competition is necessary to form and develop in those fields of natural monopolies where it is possible. The competition in these fields can be achieved only if corresponding conditions are created by controlling units. The objective of the latter should consist in realization of free entrance for all potential participants of the market. The licensing processes, which occasion the possible obstacles for entering the market, should be of undisguised and fair character.

**СВЕТЛАНА АРУТЮНЯН**

*Кандидат педагогических наук,  
доцент психологии*

## **СОЦИАЛИЗАЦИЯ-ИНДИВИДУАЛИЗАЦИЯ – КАК ДВУЕДИНЫЙ ПРОЦЕСС В КОНТЕКСТЕ ЖИЗНЕННОГО ПУТИ ЧЕЛОВЕКА**

*Из разнообразия возникает  
совершенная гармония.*

*Гераклит*

Рождаясь на свет, человек оказывается включенным в социум, где и начинается его социализация. Как выстоять и не потерять свою индивидуальность? Как социализироваться индивидуализируясь? Это та категория вопросов, ответы на которые и по сей день ищет психология. Анализ истории психологии показал, что существует несколько подходов к взаимоотношениям процессов социализации и индивидуализации, в основу которых положены разные принципы:

- 1) принцип эстафетности
- 2) принцип поглощения
- 3) принцип дополнительности
- 4) принцип чередования
- 5) принцип параллельного существования.

Каждый из этих принципов имеет свои достоинства и недостатки. Несмотря на то, что наука бесспорно признает значимость процессов социализации и индивидуализации в онтогенетическом развитии человека, однако теорий, построенных на идее взаимодействия процессов социализации и индивидуализации, крайне мало.

Так, эстафетный принцип строится на идее преемственности процессов социализации и индивидуализации, которые следуют один за другим. Причем, в работах авторов российской школы индивидуализация понимается как продолжение социализации (А.Г.Асмолов, И.С.Кон, А.В.Петровский, В.И.Слободчиков, В.Е.Исаев и др.), а зарубежная психология, наоборот, социализацию рассматривает как продолжение индивидуализации (напр. гуманистическая психология, Дж. М.Болдуин).

Принцип поглощения, рассматривая процессы социализации – индивидуализации, опирается на трактовку развития личности, либо как

последовательной индивидуализации (философия жизни, экзистенциализм, персонализм и др.), либо как глобальной социализации (марксизм, бихевиоризм, позитивизм, теории социального научения).

Принцип дополнительности предполагает рассмотрение либо индивидуализации как процесса дополнительной социализации (В.С. Мухина), либо социализации как дополнительного к индивидуализации процесса (психоанализ).

Принцип чередования базируется на предположении о том, что на одних этапах личность в большей степени социализируется, а на других – индивидуализируется (теория поуровневого развития личности Д.И.Фельдштейн).

Принцип параллельного существования рассматривает процессы социализации и индивидуализации как независимые друг от друга и имеющие самостоятельные результирующие эффекты (концепция Э.Эриксона).

Кроме этого, различные варианты взаимоотношений социализации-индивидуализации опосредуются разными подходами: 1) трактовками сущности каждого из этих процессов, 2) пониманием характеров взаимоотношений между ними, который может быть гармоничным или конфликтным, 3) вариантами отнесенности данных процессов к этапам онтогенеза.

К онтогенетическим теориям, построенным на идее взаимодействия социализации-индивидуализации, можно отнести психоаналитические концепции развития личности в онтогенезе (теории З.Фрейда, К.Хорни, Э.Эриксона), концепцию оттогенетического развития Дж.М.Болдуина и основанную на ней теорию В.В.Зеньковского, теорию В.С.Мухиной, В.А.Петровского, Д.И.Фельдштейна, В.И.Слободчикова, А.Б.Орлова.

Практически все социально-психологические явления, возникающие в социальной группе, начиная с диады, в той или иной мере связаны и порождены или детерминированы взаимодействием. Поэтому мы ограничимся рассмотрением лишь некоторых точек зрения и результатов экспериментальных исследований, в которых описаны основные эффекты взаимодействия. Среди ключевых эффектов взаимодействия наиболее часто исследуются такие, как совместимость, сплоченность, срабатываемость (сработанность). Проведены исследования самораскрытия и самопредъявления личности во взаимодействии (Дж.Берг, С.Джурд, Э.Джонс, Д.Тейлор). Установлено, что в ходе группового взаимодействия наиболее эффективное решение принимается при численности группы равной 5 человекам (В.В.Цимбал, 1968). Т.И.Пашукова установила, что децентрация реализуется более полно в условиях кооперации, чем при конкурентном взаимодействии. Взаимодействие порождает такие явления, как фасилитация, конформизм, симпатия и антипатия, лидерство и подчинение и другие.

Результаты взаимодействия рассматриваются как достижение определенного уровня системы „субъект - субъект”. Они могут носить как положительный, так и деструктивный характер. К положительным результатам взаимодействия обычно относят: успешность совместной деятельности, устойчивость межличностных связей, адекватность взаимопонимания и познания, удовлетворенность общением и результатами совместной деятельности [13, с. 45, 217].

Отрицательными результатами неэффективного взаимодействия могут быть невыполнение задачи, снижение продуктивности совместной деятельности, деформация и даже разрыв межличностных отношений. Последствиями такого взаимодействия являются негативные психические состояния субъектов взаимодействия, снижение индивидуальной деятельности [11].

Итак, по нашему мнению, социально-психологические процессы строятся на трех основаниях: структурных элементах совместной деятельности, группе людей – участников совместной деятельности и на предметно-направленном (целевом) их взаимодействии, включающем как воздействие участников друг на друга, так и совместные их воздействия на общий предмет деятельности. То есть, другими словами, в предметно-направленном воздействии одновременно интегрируются два основных свойства совместной деятельности: предметность (через направленность на предмет деятельности) и субъектность (в виде совместности, коллективности).

В представленной здесь „цепочке” каждый выделенный феномен является системообразующим по отношению к последующему и в то же

время может рассматриваться как более общая система по отношению к предыдущему феномену.

Таким образом, воздействие представляет собой процесс воздействия объектов друг на друга, их взаимную обусловленность и порождение одним объектом другого.

## Л И Т Е Р А Т У Р А

1. Советский энциклопедический словарь. 2-е изд. М.: Сов. энциклопедия, 1983.
2. **Платонов К.К.**, Личность как объект социальной психологии //Методологические проблемы социальной психологии. М: Наука, 1975.
3. **Леонтьев А.А.**, Психология общения. М.: Смысл, 1997.
4. **Панферов В.Н.**, Общение как предмет социально-психологического исследования: Автореф. дисс. д-ра псих. наук., Л., 1983.
5. **Мясищев В.Н.**, О взаимосвязи общения, отношения и отражения как проблеме общей и социальной психологии. Социально – психологические и лингвистические характеристики форм общения и развития контактов между людьми. Тез.симп.Л, 1970.
6. **Парыгин Б.Ф.**, Основы социально-психологической теории М.Мысль, 1971.
7. **Андреева Т.М.** Социальная психология. М. Аспект Пресс, 1996.
8. **Гришина Н.В.** Психология межличностного конфликта: Автореф. дисс. д-ра псих.наук, СПб, 1995.
9. **Ковалев А.Г.** Три парадигмы в психологии – три стратегии психологического воздействия// Вопр.психологии, 1987, №3, с.41-49.
10. **Обозов Н.Н.** Психология межличностного взаимодействия: Дисс. д-ра психологических наук, Л. 1979.
11. **Ломов Б.Ф.** Общение как проблема общей психологии // Методологические проблемы социальной психологии, М. 1975.
12. **Ломов Б.Ф.** Общение и социальная регуляция поведения индивида//Психологические проблемы социальной регуляции поведения, М. 1976.
13. **В.А.Лабунская, Ю.А.Менджерницкая, Е.Д.Бреус.** Психология затрудненного общения. Москва, 2002.
14. **А.Я.Анцупов, С.В.Баклановский.** Конфликтология в схемах и комментариях. „Питер”, 2005.

**S. GEVORKYAN**

*Ph.D. of Pedagogics,  
Associate Professor in Psychology*

**MODERN STATE RESOUCH OF PROBLEM  
INTERACTION IN SOCIAL PHYCOLOGY**

The article analysed the state and meaning of interaction categories in modern social psychology. Taking into account the complexity and capacity of the psychological phenomenon of the above mentioned categories, their explanation as concept depends on initial theoretical and criterial basis.



ЭЛИНА АСРИЯН

*Академия Государственного Управления РА,  
аспирантка кафедры психологии*

## **ПОЛИТИЧЕСКИЙ МИФ КАК СРЕДСТВО ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ НА ИЗБИРАТЕЛЯ**

Целью данной статьи является анализ психологического содержания политических мифов и выявление специфических особенностей данной проблемы в условиях прошедших предвыборных кампаний в Армении.

Возможность свободного политического выбора породила разнообразные избирательные технологии и методы, которые способствуют или препятствуют осуществлению этого выбора. Известно, что в ходе избирательного процесса наиболее актуальной задачей является реализация определенной стратегии ведения предвыборной борьбы, и, как следствие, современные избирательные технологии позволяют добиваться вполне материальных результатов в борьбе за власть. Обзор литературы по вопросам конструирования и применения различных избирательных технологий указывает на то, что современные политологи выделяют миф в качестве одного из средств психологического воздействия на политическое сознание избирателя.

Следовательно, для поддержания управляемости общества со стороны правящей элиты, а то и просто для его самосохранения, целостности, безопасности и развития, как правило, используются два метода: во-первых - насилие в отношении недовольных, то есть приведение толпы в повиновение с помощью страха, запугивания; во-вторых, навязывание неких идеологических установок, призванных убедить человека в идентичности его собственных интересов и интересов власти. При этом эксперты выделяют универсальность технологии мифов, которая применима для указанных случаев.

Таким образом возникает вопрос о специфике и характере технологии применения мифов в политике. Зачастую мифы интерпретируются как средство политического обмана. Необходимо выяснить тот факт, всегда ли мифы нацелены только на обман, то есть сознательное и целенаправленное введение в заблуждение народа?

В традиционном понимании миф – это возникающее на ранних этапах повествование, в котором явления природы и культуры предстают в одухотворенной и олицетворенной форме. В более поздней трактовке это исторически обусловленная разновидность общественного сознания. В новейших толкованиях под мифом подразумевается некритически принятое воззрение [1].

Противопоставленный как логосу, так и истории, миф в конце стал обозначать то, чего не существует в действительности. Члены примитивных обществ проводят четкую грань, различающую миф – “сказание истинное” и те сказки, которые они относят к вымыслам. Мирче Элиаде считает, что любому человеку присущ постоянный возврат к вечным мифическим ценностям, ибо миф дает человеку возможность вырваться за пределы обыденности [2, с. 29].

Согласно интерпретации аналитической психологии К.Юнга, миф является проекцией коллективного бессознательного (архетипов) на те или иные реальные объекты. В определенных критических ситуациях возможна активизация, оживление архетипов, и тогда их перенос на социальные и политические объекты становится источником коллективных мифов. Исходя из приведенной концепции, можно выделить следующее: миф- это набор неких базовых штампов, провоцирующий “спонтанную актуализацию” архаических структур, которые заставляют “искусственные творения имиджмейкеров “работать” на уровне массового сознания” [3, с. 20].

Таким образом становится объяснимым использование феномена “политической мифологии” как неотъемлемой части любой крупной избирательной кампании в любой стране.

Как отмечает С.Попов, во время избирательной кампании увеличивается ценность прогнозов, а прогностическая деятельность вынуждена опираться не только на факты, но и на предположения, гипотезы, что и является одним из источников политического мифотворчества [4, с. 78].

В условиях огромного количества информации (статистические выкладки, данные опросов, материалы СМИ), когда каждое новое представление может перевернуть уже устоявшееся прежнее представление, политические аналитики прибегают к той или иной форме моделирования – математической, логической и т.д. По мнению С.Попова, создание политических мифов и есть ни что иное, как определенная форма моделирования социальной реальности.

В данном контексте главной особенностью мифа является его коммуникативность. Только миф позволяет в яркой, образной, доходчивой, экономной и целостной форме дать представление

об особенностях того или иного политика. Это единственный выход из сложившейся ситуации, когда с одной стороны, из-за огромного количества назойливой информации терпение человека истощается и восприятие информации прекращается или вызывает отторжение и раздражение, с другой стороны, в то же время, сознательный избиратель заинтересован в получении объективной информации о политических намерениях кандидата, его программе. Вот почему мифологию можно назвать одним из “языков” политической культуры. Политический мир предстает как форма коммуникации между народом и властью. Цельное и инвариантное восприятие массой политических событий и образов облегчает власти процесс взаимодействия с ней: какие-то явления уже не нужно специально трактовать, они уже находят в народе именно тот отклик, на который власть и рассчитывает.

Миф – обобщенное представление о действительности, сочетающее нравственные и эстетические установки. Отождествление событий с тем или иным символическим сюжетом автоматически включает механизмы эмоциональной сопричастности и сопереживания, что на уровне политического поведения находит свое выражение в стремлении поддержать “героя” в борьбе с соперниками и обстоятельствами. Кроме того, возникает и желание ассоциировать себя с понравившимся персонажем, идентифицировать себя с ним [5, с. 27]. Для этого необходимо умение правильно создавать имиджи, устойчивые и хорошо узнаваемые образы отдельных лиц, организаций. Из этого следует, что построение мифов - составная часть процесса конструирования имиджа.

Миф изначально многосмысленен, эта его особенность делает его доступным всем группам людей, а в сфере политической жизни - всем группам избирателей. Он легко может быть трансформирован определенным образом и приспособлен для каждой из них. В мифе проявляются следующие особенности:

- слияние реального и идеального,
- опора на бессознательное,
- синкретизм восприятия, когда явление не подчиняется законам формальной логики. Эту особенность мифа можно проиллюстрировать следующим примером. В Армении в период парламентских выборов 1999 года один из лидеров оппозиции, председатель Народной Партии Армении Карен Демирчян ассоциировался у людей со спокойными, обеспеченными советскими временами, с народными стройками в Советской Армении, то есть вокруг персоны К. Демирчяна сложился долговечный “Советский миф”.

Люди понимали, что К. Демирчян вряд ли сможет вернуть Советскую Армению или хотя бы частично восстановить ее, однако с другой стороны именно этот факт, влияя на подсознание избирателя, становится аргументом для их голосования. Десятилетия советской власти выработали устойчивую привычку мыслить категориями мифов (великие стройки, гениальность вождей и т.д.), поэтому население Армении оказалось довольно восприимчиво к их новым формам. На выборах, по А. Максимова, побеждает не конкретный человек, а миф об этом человеке [6, с. 28].

- миф побуждает к какому-то действию самим фактом своего существования в сознании, он управляет нашим поведением.

Философ М. Мамардашвили называл мифы “машинами” культуры, которые перекинули мостик от природного состояния человека к цивилизации. Миф, фактически, описывается как некая социальная технология, которая позволяет человеку жить в гармонии с окружающей действительностью. Далее ученый сравнивает миф с рассказом, в который умещаются любые конкретные события: тогда они понятны и не представляют собой проблемы. Иначе говоря, задав определенные рамки толкования того или иного политического деятеля, в дальнейшем можно любые его действия, поступки и высказывания интерпретировать в рамках созданного мифа.

Созданный миф становится центральным мифом, центральным стержнем всей избирательной кампании того или иного кандидата, той или иной партии. Специалист в области политического консалтинга и избирательных технологий М.Кошелюк отмечал, что “понятие центрального мифа кампании, является ключевым в понимании выборного процесса. Все события кампании как бы нанизываются на этот стержень, приобретают смысл внутри этого мифа и относительно него. Именно центральный миф представляет собой наиболее завершенное выражение целостности избирательной кампании” [7, с. 88]. В качестве примера можно привести фрагмент из “Оранжевой революции”, происшедшей на Украине, связанный с имиджем Ю.Тимошенко, которая искусно использовала национальную прическу, символизирующую благосостояние и этнические ценности, для пробуждения этнического “мифологического” сознания народа Украины. Как только кандидат слился с мифом, он становится практически неуязвим для нападков. Именно наличием подходящего центрального мифа, а не какими-то феноменальными качествами его личности, объясняется то, что даже массированные атаки критики не приводят к снижению рейтинга кандидата. С того

момента, когда центральный миф завоевал коммуникативное пространство, овладел умами и воображением людей, кандидату – “герою” этого мифа, многое позволено, но лишь до тех пор, пока он будет соответствовать сформированному мифу.

Миф, утверждает М. Мамардашвили, есть организация такого мира, в котором, что бы ни случилось, все понятно и имеет смысл.

Миф систематизирует происходящие события, представляет случайные события неизбежными. Возникает ощущение взаимосвязанности всего происходящего, предопределенности, заданности процесса, что дает возможность манипулировать людьми. То есть миф, как и много веков назад, управляет сознанием людей. Это можно объяснить, если обратиться к защитным механизмам психики - ведь известно, что миф избавляет от иррациональных страхов. С психологической точки зрения окружающий мир воспринимается его обитателями как опасный, полный неожиданностей, поэтому человек ищет убежище в мифах. Когда ощущение общественной тревожности перерастает допустимый предел, возникает запрос на лидера-защитника. Именно этот сюжет центрального мифа применил на парламентских выборах 1999 года В.Саркисян - лидер Республиканской Партии Армении, у которого сложился имидж защитника, так как он являлся символом национально-освободительной войны в Карабахе. Обращаясь к общим требованиям относительно центрального мифа, сформулированным С. Поповым, можно найти следующее определение: миф, претендующий на центральную роль в избирательной кампании, должен затрагивать наиболее актуальную для избирателей проблему. Миф, созданный вокруг В. Саркисяна, таким образом, оказался вполне актуальным в сложившейся политической ситуации и поэтому принес желаемый результат в виде многих тысяч голосов избирателей, которые персонифицировали свои потребности в имидже героя-защитника, который, по их мнению, олицетворял данный политический деятель.

В мифе есть герой и антигерой. Есть набор трудностей и препятствий, которые герою надо преодолеть и без которых он не может состояться. Задача имиджмейкера – представить политика как политического героя и противопоставить его антигерою. Типичный пример – президентская кампания 2003-го года, когда в рамках этой модели мифа Роберт Кочарян, в качестве героя представленный как опытный политик, на деле доказавший свою эффективность, гарант стабильности мира и развития, противопоставлялся антигероям из оппозиции (А. Гегамян, С. Демирчян, А. Карапетян), обобщенная характерис-

тика которых в рамках того же мифа была следующей: случайные люди, самозванцы, против которых надо бороться, чтобы они не пришли к власти (оценка, полученная в результате социального опроса населения Армении). Т. е. опытный политик, воевавший за Карабах и прошедший многие инстанции политической карьеры, противопоставлялся политикам без опыта [8].

Следует отметить, что еще одна особенность мифа – его образность, что и обеспечивает ему запоминаемость, узнаваемость, цельность. В то же время любой образ допускает различия в толкованиях его деталей, что позволяет каждому человеку интерпретировать его по своему, используя силу собственного воображения, таким образом у человека создается иллюзия сопричастности к происходящим событиям, а миф становится действенным оружием манипуляции. Другими словами, человек не просто становится исполнителем некоей воли, но и соавтором мифа. В этой связи необходимо, чтобы в мифе всегда присутствовала способность к развитию, некоторая незавершенность.

Своими корнями миф уходит в человеческие эмоции и чувства. Эта особенность распространяется и на искусственно созданные мифы. Без эмоций не будет сопереживания герою, идентификации с ним, а это неперемное условие эффективности политического мифа [9, с. 134].

В рамках проведенного теоретического анализа можно заключить, что на современном этапе конструирование и применение политических мифов получило свое широкое распространение как за рубежом, так и у нас на родине. Являясь одним из наиболее успешных методов политического и психологического манипулирования, мифы заполнили нашу жизнь, и уже невозможно представить себе какую-либо политическую кампанию без задействованных в ней мифов.

## ЛИТЕРАТУРА

1. *Гуревич П.С.*, Мифология наших дней. // Свободная мысль N 11, 1995.
2. *Элиаде М.*, Аспекты мифа. –М.,1995.
3. *Щербина Н.Г.*, Герой и антигерой в политике. Россия. М., 2002.
4. *Попов С.*, Центральный миф в стратегии избирательной кампании// Сборник статей Избирательные технологии и избирательное искусство. М., 2001.
5. *Лосев А.Ф.*, Диалектика мифа.//Философия. Мифология. Культура. М.,1999.
6. *Максимов А.А.*, “Чистые” и “грязные” технологии выборов (российский опыт). М., 1999.
7. *Кошелоюк М.Е.*, Выборы. Магия игры. Технология победы. М., 2000.
8. *Мелконян Н.*, работа на соискание ученой степени кандидата социологических наук “Формирование имиджа политического лидера в Армении” Ереван, 2004.
9. *Цулудзе А.*, Миф как политтехнология. // Сборник статей Избирательные технологии и избирательное искусство, М., 2001.

**ELINA ASRIYAN**

*Public Administration Academy  
of the Republic of Armenia,  
post-graduate student of the faculty of psychology*

### **PSYCHOLOGICAL ASPECTS OF INTERACTION OF THE POLITICAL MYTH IN THE ELECTION CAMPAIGN.**

The article is devoted to the political myth as the analysis of the modern political technology. Some mechanisms of the psychological influence on people are mentioned.

The concept of myth is discussed in general within the framework of such sciences as philosophy, culture, psychology. Later based on the sample analysis the similarities between the concepts of “myth” and “political myth” are mentioned within the terms of both content and the influence on the human behavior.



**ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ**  
*Տեխնիկական գիտությունների թեկնածու*

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՈՐՊԵՍ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՏՐԱՆՏՈՐՄԱՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ**

*Գիտության առաջընթացից են կախված ազգային  
անվտանգությունը, ազգի բարեկեցությունը,  
ֆիզիկական և մտավոր առողջությունը [1]:*

*Վանևար Բուշ, 1945 թ.*

Իննսունական թվականներին սկսված համակարգային վերափոխումների արդյունքում ձևավորված որակապես նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները հանգեցրեցին խորը ճգնաժամի նաև գիտության ոլորտում, որի՝ նախորդ տասնամյակներում ձևավորված մոդելը չէր համապատասխանում հաստատվող շուկայական հարաբերություններին: Անկախության վերահաստատումից ի վեր, երբ արմատապես փոխվեցին գիտության և իշխանությունների հարաբերությունների բովանդակությունն ու ձևերը, անցել է տասնհինգ տարի, սակայն այդպես էլ չմշակվեց հայաստանյան գիտության զարգացման հայեցակարգ, չստեղծվեց այն մշակող որևէ մարմին, ոլորտի կառավարումն էլ որբի կարգավիճակով ու մնացորդային ֆինանսավորմամբ մնաց կրթության նախարարության շրջանակներում: Չարդարացան նաև «Գիտության և գիտական գործունեության մասին» օրենքի ընդունման հետ կապվող հույսերը: Ավելին, անգամ փորձ չարվեց հասկանալու, թե նոր պայմաններում ինչպիսին են հայաստանյան գիտության վիճակն ու հնարավորությունները, որոնք են հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Իսկ առանց այս նախնական քայլերի հայաստանյան գիտության ներուժի ու առաջնահերթությունների մասին ասվող որևէ խոսք լավագույն դեպքում կարող է դիտվել որպես բարի ցանկություն, իսկ ավելի հաճախ՝ պարզապես երեսպաշտություն: Առավել ևս, երբ այդ խոսքը պարզապես տրտունջ է ֆինանսական միջոցների բացակայության մասին, կամ աղերս՝ բյուջեից հատկացումների ծավալը մի քիչ էլ ավելացնելու համար:

Հայաստանյան գիտության վիճակն ու հնարավորությունները գնահատելու համար, ցավոք, բացարձակապես կիրառելի չէ վիճակագրությունը, թե քանի ակադեմիկոս կա երկրում, քանի գիտություն-

ների դոկտոր ու թեկնածու և այլն: Եվ ոչ միայն այն պատճառով, եթե խորհրդային տարիներին գիտական կոչումների շնորհման էին ներկայացվում ոչ քիչ, մեղմ ասած, ոչ կատարյալ թեզեր, ապա նոր ժամանակներում ներկայացվող աշխատանքների որակը, հետևաբար նաև պահանջները հաճախ մեկ կարգով ցածր են: Նման իրավիճակում իհարկե անզեն աչքով էլ ակնհայտ է անմխիթար վիճակը, սակայն ավելորդ չի լինի գոնե հիշատակել ժամանակակից գիտական աշխարհում կիրառվող մեթոդները՝ հուսալով, որ հետագայում ավանդույթ կդառնա հայրենի գիտության վիճակը պարբերաբար գնահատելիս այս անաչառ գործիքի օգտագործումը, ինչքան էլ արդյունքները ցավագին լինեն: Ինչպես հայտնի է, դեռևս վաթսուևական թվականներից գիտության մեջ կիրառվում է հղումների ինդեքսը (SCI) [2], ավելի ուշ՝ Ֆիլադելֆիայի գիտական ինֆորմացիայի ինստիտուտի տվյալների տարբեր բազաներ, մասնավորապես Ազգային գիտական ցուցիչները (NSI) [3]: Առաջինը դասակարգում է գիտնականներին ըստ նրանց աշխատություններին արվող հղումների, վերջինի դեպքում ընտրված է գիտության տարբեր ճյուղերը ներկայացնող ավելի քան չորս հազար հեղինակավոր հանդես և, ըստ դրանցում տեղ գտած հրապարակումների, վիճակագրություն է վարվում, թե ինչպիսին է յուրաքանչյուր հեղինակի ու երկրի ներդրումն ընդհանրապես գիտությունում կամ առանձին ճյուղերում: Հայաստանյան գիտության նկատմամբ զգացմունքային վերաբերմունք ունեցողներին խորհուրդ չի տրվում ուսումնասիրել այդ տվյալները: Միգուցե նաև դա է պատճառը, որ Հայաստանում համառորեն չըջանցվում են վաղուց գիտական աշխարհում անփոխարինելի համարվող այս ցուցանիշները:

Գիտության նկատմամբ մնացորդային մոտեցման հիմքերը դրվեցին անկախության վերականգնումից անմիջապես հետո, դա բացատրելով ԽՍՀՄ փլուզմամբ առաջացած բարդ, համակարգային հիմնախնդիրների հրատապ լուծման անհրաժեշտությամբ: Լուրջ, օբյեկտիվ դժվարությունների առկայությունը չժխտելով, այդուհանդերձ չպետք է մոռանալ, որ մեր ժամանակներում անհնարին է պատկերացնել որևէ հիմնախնդրի լուծում հնարավորինս արագ և լիարժեք, եթե բացակայում է նման լուծման տեսական հիմքը: Դեռ հռոմեացիներն էին ասում՝ ԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԱՂԹԵՍ (Scientia vinces-լատ.): Առաջին հայացքից վերջին տարիներին տնտեսությունում արձանագրվող հաջողությունների խորապատկերի վրա հարցականի տակ կարող է դրվել նման հարցադրումը, սակայն ճիշտ հակառակն է: Նախ, այդ հաջողությունները կարող էին ավելի շուտ արձանագրվել, եթե գործընթացն ունենար տեսական հիմքեր և ոչ թե զարգանար փորձի ու սխալների մեթոդով: Միաժամանակ, զարգացումները չէին ունենա խիստ տնտեսական թեքում՝ լուրջ խզում ունենալով հասարակական հարաբերությունների ոլորտից և վտանգավոր լարվածություններ կուտակելով այդ ոլորտում, որի անցանկալի հանգուցալուծումները ծանր հարված կարող են լինել նաև տնտեսությանը, եթե արագորեն այդ խզումը չհաղ-

թահարվի ու լարվածությունները չպարավեն: Անցած տասնհինգ տարիների սոցիալական դինամիկայի պայմաններում թեև գիտությունը կուտակել է նոր պայմաններին որոշ չափով հարմարվելու, սակայն միաժամանակ ակնհայտ է նաև, որ այսօր գիտության ոլորտում արմատական վերափոխումներն անտարակույս ունեն անհետաձգելի կենսական նշանակություն, իսկ դրա ուշացումը սպառնում է ունենալ անկանխատեսելի ու անդառնալի հետևանքներ թե՛ գիտության և թե՛ ընդհանրապես երկրի համար: Նման մռայլ կանխատեսումները կարող են չափազանցություն թվալ, սակայն տևական ու որակական փոփոխությունների մասին անգամ երազելն անիմաստ զբաղմունք կլինի առանց կրթության ու գիտության լուրջ վերափոխումների ծրագրի: Ընդ որում, եթե բնական գիտությունները, խորհրդային տարիներից մնացած ժառանգության շնորհիվ կարողանում են նվազագույն խնդիրներ լուծել, ապա հասարակական գիտությունների ոլորտում վիճակը պարզապես անմխիթար է: Մինչդեռ համակարգային տրանսֆորմացիայի մարտահրավերները հաղթահարող երկիրը չի կարող հաջողության մեծ երաշխիքներ ունենալ՝ առանց խորը վերլուծությունների, իրավիճակի բազմակողմանի գնահատականի, հիմնավոր ծրագրի ու դրա իրականացման գործունե կառուցակարգերի: Տասնհինգ տարին բավարար ժամանակ է, որ այս գործընթացն այլևս հիմնվի ոչ թե փորձի ու սխալների մեթոդի, այլ գիտական մտքի վրա: Ցավոք, գիտության վերափոխմանը վերաբերող քննարկումները, գրեթե առանց բացառության, ներառել են բնական գիտությունները: Սա միգուցե բացատրելի է՝ հաշվի առնելով խորհրդային ժառանգությունը, սակայն ընդունելի չէ հենց նույն պատճառով: Ավելին, այսօր, երբ հասարակական և բնական գիտությունների ինտեգրումն ավելի ու ավելի է խորանում [4] և առաջինների դերն իրադարձությունների պարզ արձանագրումից ու դասակարգումից աստիճանաբար վերափոխվում է վերլուծությունների, կանխատեսման ու ծրագրման հզոր զենքի, հասարակական գիտությունների զարգացումը յուրաքանչյուր երկրի համար ունի այնպիսի կարևորություն, ինչպիսին ունեցել են բնական գիտությունները: Հետևաբար գիտության հետխորհրդային տրանսֆորմացիան համակարգային տրանսֆորմացիայի կարևոր բաղադրիչներից մեկն է:

Անշուշտ, ինչպես ցանկացած այլ երևույթի դեպքում, այս պարագայում ևս անհնարին է մեխանիկորեն լուծումներ ներմուծել այլ երկրներից: Որևէ հարցի համար լուծումներ որոնելիս չափազանց կարևոր է ոչ միայն փորձի ուսումնասիրությունը, այլև առանձնահատկությունների բացահայտումը: Սակայն ինչպես դիպուկ նկատել է գերմանացի կոմպարատիվիստ Տ. Շիդերը, այն գիտնականը, ով ուսումնասիրում է միայն իր երկիրը, չի կարող բացահայտել դրա յուրահատկությունները [5]: Հետևաբար օգտակար կլինի հետևել, թե ինչ ընթացք է ունեցել գիտության վերափոխումն այն երկրներում, որոնք փոքր-ինչ ավելի վաղ էին ստիպված լուծել նման խնդիր:

## Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների փորձը

Հետաքրքիր է, որ որոշ արևելաեվրոպական երկրներ արդեն 90-ականների կեսերին՝ 80-ականների կեսի համեմատ, արձանագրել էին առաջընթաց: Լեհաստանի համար այն արտահայտվում էր հրապարակումների 16 տոկոսի աճով, Չեխիայի համար՝ 11 տոկոսի, Յունգարիայի դեպքում՝ 2 տոկոսի [6, էջ 43-49]: Այս փաստն ինքնին խոսում է և ընդգծում է այն հետաքրքրությունը, որ կարող է ունենալ Հայաստանի համար արևելաեվրոպական գիտության զարգացման ընթացքը, որը դարձավ համաշխարհային մակարդակով եզակի երևույթ՝ որպես տրամագծորեն հակառակ սոցիալ-քաղաքական, էթնամշակութային, տնտեսական և կազմակերպչական իրողություններին ու իրավիճակներին գիտական որոնումների հարմարվելու հնարավորությունների արդյունավետ օգտագործման փորձ: Միաժամանակ այդ փորձն ունի կիրառական մեծ նշանակություն հայաստանյան գիտության հեռանկարների առումով, քանզի արևելաեվրոպական գիտության համար էլ 90-ականների սկզբին նույն մեկնարկային պայմաններն էին: Արժե ուշադրություն հրավիրել հատկապես երկու հանգամանքի վրա. անցումային շրջանի առաջին մի քանի տարիներին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում էլ արձանագրվեց գիտության կտրուկ անկում և յուրաքանչյուր երկիր հաջողություն ունեցավ այն ժամանակ, երբ լրջորեն վերլուծվեց իրավիճակը, իրատեսորեն գնահատվեցին հնարավորությունները, հաշվի առնվեցին համաշխարհային գիտության մեջ առկա իրողությունները, գործող համակարգերն ու մոտեցումները, բայց երբեք չօգտագործվեցին դրանք մեխանիկորեն կրկնող լուծումներ:

Սովորաբար որպես նախկին սոցիալիստական երկրներում գիտության անկման և դժվարությունների առաջին պատճառ նշվում է ֆինանսական միջոցների սղությունը [7, էջ 19-28]: Անշուշտ, ֆինանսական միջոցների նշանակությունը ժամանակակից գիտության զարգացման համար դժվար է գերազնահատել: Արժե նշել միայն, որ հետազոտական սարքավորումները ճապոնիայում և ԱՄՆ-ում հինգ տարվա շահագործումից հետո համարվում են հնացած և դուրս են գրվում[8]: Մինչդեռ համակարգային վերափոխումների ձեռնամուխ եղած երկրներում ֆինանսական միջոցների խիստ պակասը հանգեցրեց գիտահետազոտական աշխատանքների համար հատկացվող պետական ծախսերի կտրուկ կրճատման: Դրանք հեռու էին զարգացած երկրներում հիմնարար գիտությունների համար բյուջեից հատկացվող գումարներից, որոնք կազմում են ՀՆԱ 2-4 տոկոսը [7]: Մյուս կողմից, շուկայական տնտեսական հարաբերությունների անցած երկրների ղեկավարները հույս ունեին, որ գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը կակտիվանա արտաբյուջետային աղբյուրների հաշվին, ինչպես զարգացած երկրներում է, որտեղ գիտության ֆինանսավորման ծանրությունը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրման

ծախսերը խոշոր ձեռնարկությունների ուսերին է [9, էջ 249-254]: Մի-գուցե կարելի էր ենթադրել, որ մեխանիկական զուգահեռներն ու չի-րացվող արտադրանք տվող և աշխատուժի զգալի ավելցուկներ ունե-ցող ձեռնարկությունների վրա հույս դնելը լավագույն դեպքում միամ-տություն է, սակայն պետք է խոստովանել, որ առաջին շրջանում նկատվում էր ոչ միայն ֆինանսական միջոցների, այլև առողջ, գործ-նական նշանակություն ունեցող գաղափարների խիստ պակաս և մեծ էր այս կամ այն հիմնախնդրի համար մակերեսային պատճառներ որո-նելու գայթակղությունը: Մինչդեռ այն, ինչ կատարվում էր 90-ականնե-րի սկզբին, ուներ խորն արմատներ, հատուկ էր ոչ միայն հայաստան-յան գիտությանը և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկր-ներում սկսեց տեղի տալ միայն այն ժամանակ, երբ ստացավ ճշգրիտ գնահատական՝ ֆունկցիոնալ ճգնաժամ:

Այդ երկրներում գիտությունների հիմնախնդիրների ձևակերպումը հստակ էր.

- գիտության արդյունավետ կառավարման ու զարգացման նպա-տակով գիտության կառավարման պետական մարմնի ստեղ-ծում,
- գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակա-դեմիայի տեղի ու դերի ճշգրտում,
- գիտահետազոտական(ԳՀ) ինստիտուտների մրցունակության ու ապագայի հստակեցում,
- համալսարանական գիտության զարգացման հնարավորույթ-յունների ճշգրտում ու ներդաշնակ համադրում ԳՀ ինստիտուտ-ների հնարավորությունների հետ:

ԿԱԵ երկրների ընթացքը գիտության վերափոխումների ճանա-պարհին եղել է տարբեր՝ յուրաքանչյուրի սխալներով ու ձեռքբերում-ներով: Ավելին, այդ վերափոխումների տեմպը ևս տարբեր է եղել՝ պա-սիվ և ակտիվ: Պասիվ ընթացքը բնութագրվել է հիմնարար հետազո-տությունների տեղաշարժով դեպի համալսարանական գիտություն: Սակայն նախկին խորհրդային երկրների՝ անցումային շրջանի համար բնորոշ ֆինանսական սղությունը ոչ միայն ընդհանուր պատճառ դա-ծավ գիտության անկման համար, այլև նոր հակամարտություն առա-ջացրեց ակադեմիական ու համալսարանական գիտությունների միջև, քանզի տեղաշարժը դեպի համալսարանական գիտություն ենթադրում էր ոչ միայն կազմակերպչական, այլև ֆինանսական բաղադրիչ: Մինչ-դեռ վերափոխումների առաջին տարիներին հիմնական գաղափարնե-րից մեկը, որոնցով շեշտադրում էր արվում՝ որպես գիտության վերա-կառուցման և զարգացման հնարավորություն, համալսարանական գիտության հետազոտական կարգավիճակի բարձրացումն էր և ակա-դեմիական գիտության հետ համատեղ ծրագրերի իրականացումը:

ԿԱԵ երկրներում օգտագործվել են գիտության զարգացման տա-րատեսակ ուղիներ:

Բուլղարիայում ձեռնարկված առաջին քայլը [10, էջ 755-776] շատ նման էր Հայաստանում արվածին: Նախ ընդլայնվեց Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի կազմը: Անդամներ դարձան նաև թղթակից անդամներն ու դոցենտները, ընդ որում վերջիններս կազմում էին ընդհանուրի 48 տոկոսը: 1992 թվականին ԲԳԱ վեհաժողովը քննադատորեն քննարկելով գիտության վիճակը երկրում, իր ձեռքում կենտրոնացնելով գիտության ոլորտի հիմնական լիազորությունները՝ ձեռնամուխ եղավ արմատական փոփոխությունների: Գաղափարական նկատառումներով ԲԳԱ կազմից դուրս բերվեց ութ կառույց, 1993 թվականից ակադեմիական ինստիտուտները Ակադեմիա էին ուղարկում հետազոտական թեմատիկական և հաշվետվություններ անձնակազմի որակավորման մասին: Հետագա մի քանի տարվա ընթացքում ակադեմիական ինստիտուտների հետ կապված վերափոխումները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

- փակում, երբ ինստիտուտը չէր համապատասխանում հիմնական պահանջներին,
- վերակազմակերպում, երբ ինստիտուտը պահպանվում էր, բայց որոշ ստորաբաժանումներ լուծարվում կամ վերակառուցվում էին,
- աշխատակիցների ատեստավորում, որի արդյունքում կառուցվածքային փոփոխություններ չէին արվում, սակայն կրճատվում էր աշխատակիցների թիվը:

Բնականաբար եղան նաև ինստիտուտներ, որոնք բավարարում էին բոլոր չափանիշներին և պահպանվեցին անփոփոխ: Այս միջոցառումների արդյունքում 115 ինստիտուտներից մնաց 89, մոտ 40 տոկոսով կրճատվեց աշխատակիցների թիվը (այս առումով առանձնացան կենսաբանական ինստիտուտները, որոնց աշխատակիցները կրճատվեցին միայն 16 տոկոսով), իսկ գիտական աստիճաններ ունեցող աշխատակիցների տեսակարար կշիռն աճեց 10 տոկոսով: Վերափոխումների այս փուլում որոշվեց ավելի մեծ ուշադրություն դարձնել կիրառական գիտություններին, ինչպես նաև փորձ արվեց մասնավորեցման գործընթացներում ներգրավել ԳՀ ինստիտուտները: Մյուս ուղղությունը, որն առանձնանում էր ԲԳԱ վերափոխումներում, կապերի ակտիվացումն էր համալսարանական ինստիտուտների հետ: Արժե նշել, որ այս ուղղությամբ արդեն փորձ կար. դեռևս յոթանասունական թվականների սկզբին Սոֆիայի համալսարանի հետ համատեղ Ակադեմիան ստեղծել էր կենտրոն, որը սակայն փակվել էր ութսունականների վերջին, քանզի հաջող արդյունքներ արձանագրվել էին միայն բնական գիտությունների ոլորտում: Թերևս ամենաբարդ հարցը, որն այդ տարիներին այս ոլորտում ծառայել է բոլոր անցումային երկրների առաջ, գիտության կառավարման խնդիրներով զբաղվող մարմնի (Բուլղարիայի դեպքում՝ Ակադեմիայի) համագործակցության կարգավորումն է արդյունաբերության հետ: Այն հաջողվել է քիչ թե շատ լուծել միայն իննսունականների վերջից սկսած, թեև այսօր էլ չի կարելի համարել լիովին հաղթա-

հարված, քանի որ շատ հաճախ ձեռնարկությունները նախընտրում են զնել ներդրված տեխնոլոգիաներ ու սարքավորումներ, քան մասնակից լինել դրանց մշակմանն ու ներդրմանը:

Գիտության վերափոխման ուղղությամբ Չեխիայի փորձն ավելի հաջող է [11, էջ 71-77]: Այստեղ հենց սկզբից գիտահետազոտական հաստատությունների առջև ծառայացավ երկրնտրանք. անկանխատեսելի ապագայով մասնավորեցում կամ նվազող պետական աջակցությամբ պետական կարգավիճակ: Արդյունաբերական ԳՀ ինստիտուտների համար նախատեսվում էր վերափոխում տարածաշրջանային տեխնոլոգիական պարկերի: Այս մոտեցումն ի վերջո հաջողություն չունեցավ և գիտական ինստիտուտները մասնավորեցվեցին՝ աստիճանաբար հեռանալով հետազոտական աշխատանքից: Ակադեմիական հատվածը կողմնորոշվեց դեպի տեխնիկական գիտություններ և կիրառական հետազոտություններ՝ համագործակցելով գիտատեխնիկական պարկերի հետ: Արդյունաբերության հետ ակադեմիական հատվածի համագործակցությունը զգալիորեն սահմանափակվում է վերջինիս խիստ հավակնություններով և նախկին կարգավիճակի նկատմամբ կարոտախտով:

Առավել ակտիվ են զարգանում կապերը համալսարանների ու արդյունաբերական ընկերությունների միջև՝ կիրառվող և նոր տեխնոլոգիաների հետազոտական փորձաքննության ուղղությամբ: Այդուհանդերձ, համալսարաններում դեռևս ակնհայտորեն գերակշռող է կրթական և ոչ թե գիտական հատվածը:

Գիտության վերափոխման հետ կապված ակտիվ դերակատարություն ստանձնեցին գիտնականները: 1990 թվականին ստեղծվեց Գիտական պարկերի ասոցիացիան, որը պետք է ստեղծեր հետազոտական ինստիտուտների վերափոխման հիմքը: Ավելի ուշ ստեղծվեց Տեխնոլոգիական տրանսֆերտի ու փոխանակման ասոցիացիա՝ տեխնոլոգիաների հետազոտական փուլից արտադրություն անցմանն աջակցելու համար: Պետական աջակցությունն արտահայտվեց «Պարկ» և «Տրանսֆերտ» ծրագրերի իրականացմամբ, որով իրական աջակցություն էր ցուցաբերվում փոքր և միջին ձեռնարկություններին:

Հունգարիայում ևս գիտության վերափոխումը բավականին բարդ է ընթացել [12, էջ 777-805]: 1992 թվականին կառավարությունը որոշում ընդունեց արդյունաբերական ԳՀ ինստիտուտները վերափոխել բաժնետիրական ընկերությունների, սակայն այդ գործընթացը շատ դանդաղ էր առաջ գնում՝ առաջին երկու տարվա ընթացքում վերափոխվեց ընդամենը 12 ձեռնարկություն: Առաջին չորս-հինգ տարիներին ԳՀ աշխատանքների համար արվող պետական հատկացումները կրճատվեցին մոտ 54 տոկոսով: Կառավարությունը շուկայի հետ էր կապել տեխնոլոգիական զարգացման ֆինանսավորման հույսը, սակայն այն չարդարացավ նորաստեղծ մասնավոր ձեռնարկությունների սուղ հնարավորությունների պատճառով՝ թե՛ ֆինանսական և թե՛ նոր տեխնոլոգիաների ձեռք բերման տեսակետից: Գործող ընկերությունների, այդ

թվում և պետական, ֆինանսական մտահոգությունները սովորաբար սահմանափակվում էին ընթացիկ հարցերով, երկրում գործող օտարերկրյա ընկերությունները գիտական խնդիրներով զբաղվում են մայր գործարաններում, իսկ մասնաճյուղերում օգտագործում են ներդրված տեխնոլոգիաներ: Տեղական անձնակազմի գիտելիքներն ու կարողությունները որպես կանոն օգտագործվում են միայն արտադրական նպատակներով: 90-ականների վերջին Հունգարիայում աշխատում էր շուրջ 200-300 գիտաշխատող և ինժեներ, որոնք շատ հաճախ զբաղված էին ոչ թե եզակի տեխնիկա, նյութեր և տեխնոլոգիաներ ստեղծելով, այլ տարբեր ծառայություններ և խորհրդատվություն մատուցելով (որակի ստուգում, չափումներ և այլն):

Լեհաստանի փորձը շատ ավելի հաջող է [13, էջ 727-754]: Վերափոխումների հենց սկզբից կառավարությունը ստեղծեց Գիտական հետազոտությունների կոմիտե, որի տնօրինությանը հանձնվեցին գիտության ֆինանսավորման բոլոր բյուջետային միջոցները: Այդ կոմիտեն ձևավորվեց «գործող» գիտնականներից, իսկ ղեկավարին ընտրեց խորհրդարանը: Բոլոր որոշումներն ընդունվում էին քվեարկությամբ: Կոմիտեի կազմում ձևավորվեցին հիմնարար և կիրառական հետազոտությունների ուղղությամբ ենթակոմիտեներ, որոնք էլ կազմված էին սեկցիաներից: Բոլոր գիտական հաստատությունները հաշվետու էին կոմիտեին. յուրաքանչյուր տարի ներկայացնում էին թե՛ տարեկան հաշվետվություն, թե՛ գալիք տարվա աշխատանքի պլան: Կոմիտեն առաջին հերթին ատեստավորեց ԳՀ ինստիտուտները, որի արդյունքներով սկսեց բաշխվել պետական ֆինանսավորումը: Ինստիտուտների 15 տոկոսն ընդհանրապես չատեստավորվեց և պետական ֆինանսավորում չստացավ: Մյուսները բաժանվեցին երեք զրեթե հավասար խմբի: Բարձրագույն կարգ ստացած ինստիտուտները ստացան բյուջետային միջոցների 76 տոկոսը, այն դեպքում, երբ կազմում էին ատեստավորվածների միայն 25,5 տոկոսը: Ի դեպ, բարձրագույն կարգ ստացան ինստիտուտների 30 տոկոսը, այդ թվում՝ ակադեմիական ինստիտուտների 78 տոկոսը:

Առաջին երեք տարիների ընթացքում ինստիտուտների թիվը կրճատվեց 10 տոկոսով, աշխատակիցներինը՝ 20 տոկոսով, հիմնականում օժանդակ անձնակազմի հաշվին: Արդյունաբերական ԳՀ աշխատանքներով զբաղված ինստիտուտները մնացին պետական և ֆինանսավորվում էին բյուջեից:

Կոմիտեն փորձում էր աջակցել նաև ֆինանսավորման արտաբյուջետային աղբյուրների ստեղծմանը՝ տարածքների վարձակալման, տարբեր ծառայությունների մատուցման և բանկային տոկոսների միջոցով, սակայն այս գործունեությունն առանձնապես հաջող չստացվեց, թերևս այն պատճառով, որ ուղղությունները որևէ առնչություն չունեին գիտության հետ, մինչդեռ զրեթե չէին օգտագործվում այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են գիտական պայմանագրային հարաբե-



րություններն ու գիտական արդյունքների առևտրային հետաքրքրությունները:

Լեհաստանում գիտության ֆինանսավորման այլ միջոցներ հիմնականում ձևավորվում էին երեք աղբյուրներից. նպատակային ծրագրեր, որոնց արժեքի հիսուն տոկոսի ֆինանսավորումն իրենց վրա էին վերցնում արդյունքների պոտենցիալ օգտագործողները, սոցիալական նշանակության ծրագրեր, որոնք նախաձեռնվում և ֆինանսավորվում էին կենտրոնական կամ տեղական իշխանությունների կողմից, միջազգային գիտական համագործակցության ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների կողմից:

Արևելյան Գերմանիայում գիտության վերափոխումները խիստ յուրահատուկ էին [14, էջ 829-853, 15, էջ 126-134], քանզի Գերմանիայի վերամիավորումը ստեղծել էր յուրօրինակ հնարավորություն և դրանից բխող հստակ խնդիր. վերափոխվող գիտությունը պետք է ներդաշնակորեն համադրվեր Արևմտյան Գերմանիայի գիտության հետ: Առավելություններն ակնհայտ են. անհամեմատ մեծ ֆինանսական հնարավորություններ, հստակ խնդիր, նոր պայմաններում գիտության զարգացման մեծ փորձառություն ունեցող մասնագետների առկայություն: Վերափոխումները կատարվեցին շատ արագ: Գիտությունների ակադեմիան, որի կազմի մեջ 1990-ին մտնում էին 60 ինստիտուտներ, արդեն տարեվերջին դադարեց գոյություն ունենալ որպես ամբողջություն: Եյուդային գիտությունը հիմնավորապես վերափոխվեց՝ գրեթե ոչինչ չպահպանելով իր նախնական տեսքից: Արևմտյան Գերմանիայի Գիտական խորհուրդը, որն այլևս տնօրինում էր ամբողջ երկրի գիտությունը, մոտ մեկ տարվա ընթացքում որոշեց 60 ակադեմիական և 70 ճյուղային ինստիտուտների ճակատագիրը: Անգամ այն ինստիտուտները, որոնք գնահատվում էին որպես պոտենցիալ հաջողակ կազմակերպություններ, հաճախ ենթարկվում էին լուրջ վերափոխումների, այդ թվում և աշխատակիցների պաշտոնների առումով: Քիչ չէին նաև այլ դեպքերը, երբ փակվող ինստիտուտների աշխատակիցների զգալի մասն ընդգրկվում էր նորաստեղծ հետազոտական կազմակերպություններում:

Կիրառական հետազոտությունների ոլորտում Գիտական խորհրդի առաջարկների հիմնական չափանիշն արդյունավետությունն էր: Լուծարվեցին հասարակական գիտությունների և տնտեսագիտության ինստիտուտները, որոնց աշխատակիցներն ավելի քիչ հաջողակ եղան այլ կազմակերպություններում աշխատանք ստանալու տեսակետից: Թեև այդ ինստիտուտներից որոշներն արդեն մի քանի տարի փորձում էին վերանայել իրենց հետազոտական ծրագրերը, սակայն Գիտական խորհուրդն անհողդող էր. դա համալսարանական գիտության ոլորտն է: Այն հետազոտական խմբերը, որոնք արդեն հասցրել էին ապացուցել իրենց կենսունակությունը, ստիպողաբար տեղափոխվեցին համալսարաններ:

Նույն ճակատագրին արժանացան քիմիական ինստիտուտները, քանի որ այս ոլորտը Արևմտյան Գերմանիայում զարգանում էր արդյունաբերական ընկերությունների լաբորատորիաներում կամ ավելի փոքր չափով՝ համալսարաններում: Մինչդեռ ֆիզիկական և կենսաբանական հետազոտություններով զբաղվող ինստիտուտները հիմնականում պահպանվեցին:

Արևելյան Գերմանիայում գիտության արագ վերափոխման հաջողության հիմնական գրավականներից մեկն էլ եղավ այն հանգամանքը, որ երկրի արևմտյան հատվածից մեծ թվով մասնագետներ տեղափոխվեցին արևելյան համալսարաններ, որոնց ծրագրերը լրջորեն փոխվեցին, իսկ շատ առարկաներ էական տրանսֆորմացիայի ենթարկվեցին:

Ուշագրավ է, որ այսօր ԿԱԵ երկրների կառավարությունները բյուջեից միջոցներ են հատկացնում միայն հիմնարար և մասնավորապես, ռազմավարական հետազոտությունների համար, ընդ որում դրանք գրեթե ամբողջությամբ (Սլովակիա՝ 89 տոկոսով, Ռումինիա՝ 94 տոկոսով) ուղղվում են ընթացիկ ծախսերին: Կիրառական հետազոտությունների ծավալն էապես կրճատվել է, իսկ հիմնարար հետազոտությունների վրա կատարվող ծախսերինն աճում է, թեև բացարձակ թվերը մնում են փոքր: Չնայած անցած ժամանակահատվածում դեռևս չեն օպտիմալացվել հարաբերությունները, սակայն պահպանվել է «համալսարաններ - ակադեմիական գիտություն - արդյունաբերություն» կառուցվածքը, քանի որ սոցիալիստական երկրներում Ակադեմիաներն օժտված էին առավել բարձր կադրային ներուժով: Արևմուտքին հատուկ հարաբերությունների հիմնական խոչընդոտներն են հետազոտությունների ոչ բարձր որակն ու պոտենցիալ սպառողների սահմանափակ հնարավորությունները: ԿԱԵ երկրների գիտության առանձնահատկություններից է նաև ակադեմիական ինստիտուտներից առանձին նեղ մասնագիտացում ունեցող խմբերի անջատումն ու ինքնուրույն գործունեությունը, չնայած սերտ կապեր պահպանվում են և ինստիտուտներն էլ աջակցություն են ցուցաբերում նրանց (տարածք և այլն):

Իհարկե, դեռևս վաղ է արձանագրել, որ ԿԱԵ երկրներում գիտությունը լիովին ձեռք է բերել զարգացած երկրներին հատուկ հատկանիշներ՝ կենտրոնացման աճ, կոոպերացիոն ծրագրերի և նախագծերի մշակման պրակտիկայի տարածվածություն, ֆինանսավորման արտաքին աղբյուրների ակտիվ ներգրավում, արդյունաբերական ձեռնարկությունների հետազոտական ստորաբաժանումների կարգավիճակի բարձրացում, վենչուրային կապիտալի աղբյուրների զարգացում և այլն: Հաճախ ակնառու տարբերություններից է մնում գիտության կազմակերպումը հին ոճով: Թեև փորձեր արվել են գիտահետազոտական աշխատանքների բնագավառում կոոպերացիայի ուղղությամբ (Բուլղարիա, Ռումինիա՝ գործարար համագործակցության ազգային պալատներ, Հունգարիա՝ ինովացիաների ազգային պալատ, Չեխիա՝ հետազոտական կազմակերպությունների ասոցիացիա և այլն), սակայն դրանց շրջանակներում դեռևս նախագծեր գրեթե չեն իրականացվում:

Նման մեկ այլ փորձ էր գիտական պարկերի ստեղծումը, սակայն այստեղ ևս ավելի շուտ կարելի է խոսել անհաջողության մասին: Եվ դա պատահական չէ: Հաճախ են կարծիքներ հնչում, որ պարկերի ստեղծումն ամերիկյան փորձի գրեթե կրկնօրինակում է, հաշվի չառնելով այն նախադրյալները, որոնք Միացյալ Նահանգներում հաջողություն ապահովեցին. նոր տեխնոլոգիաների մեծ պահանջարկ, հաղորդակցության լավ պայմաններ, վեցնչուրային զգալի կապիտալի առկայություն, համալսարանական գիտության բարձր մակարդակ, հաճախ՝ պետական աջակցություն: Սակայն իհարկե, այս ամենը չի նշանակում, որ ԿԱԵ երկրներում գիտության վերափոխումները հաջողություններ չեն արձանագրել:

Հատկանշական է, որ անհաջողություններն արձանագրվել են հատկապես այն դեպքերում, երբ փորձ է արվել Արևմուտքի փորձը մեխանիկորեն տեղափոխել ԿԱԵ երկրներ:

Այսօր ԿԱԵ երկրներն ընտրել են «փոքր գիտությունը»: Ոչ մեծ երկրների համար դա ոչ միայն ճիշտ է, այլև գիտության զարգացման միակ հնարավորությունն է: Ժամանակակից գիտությունը թանկ «հաճույք» է, զգալի միջոցներ պահանջող: Ընդունված է [6, էջ 43-49] այդ տեսակետից գիտությունը բաժանել երեք խմբի: Առաջինի մեջ, որը պահանջում է առավել մեծածավալ ներդրումներ գիտական կադրերի պատրաստման ու անհրաժեշտ հագեցվածության համար, ընդգրկված են Ֆիզիկան, քիմիան, մոլեկուլյար կենսաբանությունը, գենետիկան, մաթեմատիկան: Երկրորդ խմբում, որն ավելի քիչ ծախսեր է պահանջում, ընդգրկված են տեխնիկական և գյուղատնտեսական գիտությունները, բժշկությունը, երրորդ, «ամենաէժան» խմբում՝ բուսաբանությունը, կենդանաբանությունը, դեղագործությունը, իմունոլոգիան և երկրին վերաբերող գիտությունները, այսինքն՝ նրանք, որոնք կապված են փորձի և դիտարկման հետ: Որևէ երկրի համար գերակա ուղղությունների ընտրության ժամանակ իհարկե կարող է հաշվի առնվել նաև գիտական դպրոցի առկայությունը: Մասնավորապես, թեև լեհ գիտնականները, ինչպես իրենց չեխ գործընկերները, հիմնականում զբաղվում են քիչ ծախսեր պահանջող ոլորտներում, սակայն ավանդական ուժեղ դպրոցի առկայությունը թույլ է տալիս նկատելի նվաճումներ ունենալ նաև քիմիայում:

### **Համալսարանական գիտության զարգացումը**

Հիմնական գաղափարներից մեկը, որը քննարկվում էր որպես գիտության վերակառուցման հնարավորություն, համալսարանական գիտության զարգացումն էր: Իհարկե, այստեղ ևս ֆինանսական միջոցների սղությունն իր վճռական ազդեցությունն ունի, քանի որ դրանց կրճատումից արդեն դժգոհ Ակադեմիաները լսել իսկ չեն ուզում միջոցների վերաբաշխման մասին՝ մատնանշելով համալսարանական գիտության ավելի ցածր որակն ակադեմիականի նկատմամբ: Սոցիալիս-

տական երկրների գիտության ակնհայտ թերությունը (միակ բացառությունը թերևս Ալոպենիան էր)՝ բարձրագույն դպրոցի դերի անտեսումը գիտության մեջ, նոր ժամանակներում գիտության զարգացման ամենալուրջ խոչընդոտներից մեկն է: Թեև վերափոխումների հենց սկզբից բոլորն էլ հայտարարում էին, որ պետք է էապես մեծացնել համալսարանների դերակատարությունը գիտության մեջ, սակայն միայն Լեհաստանում, Յունգարիայում և Ալովակիայում է համալսարանների ընդհանուր ծախսերի մեջ հետազոտությունների բաժինը հասնում 30 տոկոսի: Պատճառները խորքային են: Կա բավական պարզունակ պատկերացում «կրթական համալսարանի» և «հետազոտական համալսարանի» տարբերությունների մասին, ըստ որի բավական է գործող գիտնականների տեղափոխել «կրթական համալսարաններ» և համալսարանական համակարգի վերափոխման խնդիրը կլուծվի: Իհարկե, «կրթական համալսարաններում» հաճախ դասավանդում են մարդիկ, ովքեր գիտության մասին հիշում են միայն գիտական թեզեր գրելիս կամ ատեստավորումից առաջ: Սակայն չպետք է մոռանալ, որ այդ մարդկանց զգալի մասը շատ ավելի է համապատասխանում նման կրթական հաստատությունների բնույթին ու սկզբունքներին, քան գործող գիտնականների ճնշող մեծամասնությունը: «Հետազոտական համալսարանների» կրթական գործընթացն էլ է առավելապես մոտեցված հետազոտական աշխատանքին, ուսանողների ուսուցման մեջ մեծ տեղ է գրավում ինքնուրույն աշխատանքն ու ուսումնասիրությունը: Ինչի արդյունքում և՛ ուսանողն է ներգրավվում հետազոտական աշխատանքներում, և՛ դասախոսն է բավարար ժամանակ ունենում հետազոտությունների համար: Առանց այս հիմնախնդրի լուծման իրական հետազոտական համալսարանական համակարգի մասին կարելի է միայն երազել, իսկ ֆինանսավորման վերաբաշխումը համալսարանների ու գիտահետազոտական ինստիտուտների միջև կլինի աննպատակ ու անիմաստ:

### Եզրակացություն

Հայաստանը մոտեցել է գիտության զարգացման համար վճռական մի սահմանի, որից այն կողմ փոխվելու է զարգացումների հնարավորությունների որակը: Արմատական վերանայումների բացակայության պարագայում սպառվելու են հիմնարար գիտությունների զարգացման այն հնարավորությունները, որոնք պայմանավորված էին խորհրդային տարիների ժառանգությամբ: «Հիմնարար գիտությունների, կիրառական գիտությունների և արդյունաբերական արտադրության վրա կատարվող ծախսերի հարաբերակցությունը 1:10:100 կարգի է: Ժամանակը, որ պահանջվում է դրանց ստեղծման համար, ունի հակադարձ հարաբերակցությունը» [16]:

Բացակայում է հիմնական հանգամանքի ընկալումը. աշխարհում ոչ մի տեղ գիտությունը չի փոխարինում, այլ միայն լրացնում է արդյու-

նաբերության ինովացիոն ակտիվությունը [17]: Ամենուրեք ինովացիոն գործընթացների շարժիչ ուժն արդյունաբերությունն է, որը դա անում է մրցակցության ազդեցությամբ, երբ այլևս այլ միջոցներ չկան մրցունակությունն ապահովելու համար: Մինչդեռ Հայաստանում ինովացիոն միջոցներ տրամադրելու համար իշխանությունը չունի համապատասխան միջոցներ, բիզնեսն ու արդյունաբերությունը՝ մոտիվացիա: Ակնհայտ է, որ գիտության բյուջետային հատկացումներն առնվազն միջնաժամկետ հեռանկարում որակական փոփոխություններ չեն ունենա: Այստեղ հիմնական խնդիրը միջոցների ճիշտ բաշխումն է և արդյունավետ օգտագործումը: Հատկանշական է, որ չի հրապարակվել որևէ լուրջ ծրագիր, որ ֆինանսավորում չի ստացել: Եվս մեկ կարևոր հանգամանք. այն ոլորտներում, որտեղ իսկապես գիտակցվել է միջազգային համագործակցության կարևորությունը, գիտությունը կարողանում է գոյատևել: Հաշվի առնելով Հայաստանում շուկայի չափազանց նեղ սահմանները և արդյունաբերության՝ գիտության նկատմամբ գրեթե զրոյական պահանջարկը, միջազգային կոոպերացիան կարող է լինել հայաստանյան գիտության հիմնական կենարար աղբյուրներից մեկը: Կա միջազգային համագործակցության գրեթե չօգտագործվող ևս մեկ հնարավորություն: Խոսքը վերաբերում է մի շարք խոշոր ծրագրերի շրջանակում («Հազարամյակի մարտահրավերներ», Եվրամիության «Նոր հարևաններ» և այլն) գիտության զգալի բաղադրիչի նախատեսմանը:

ԿԱԵ երկրներում հետազոտական համակարգերի վերջնական վերակառուցումները դեռևս չեն ավարտվել (բացառությամբ Արևելյան Գերմանիայի և թերևս Լեհաստանի ու Չեխիայի) և նույնպես վկայում են, որ անցումային երկրներում գիտության զարգացման նախադրյալներն ավելի անբարենպաստ էին, քան թվում էր սկզբում. հետազոտական համակարգերը պահանջարկ չունեն ո՛չ պետության կողմից, ո՛չ արդյունաբերության, ո՛չ շուկայի: Անցումային գրեթե բոլոր երկրների քաղաքական առաջնորդներն այս հարցում զարմանալիորեն միաձայն էին. «այսօր հանապազօրյա հացի համար պայքարի շրջանն է, գիտությունը դեռևս պետք է սպասի»: Պատահական չէ, որ գրեթե ամենուրեք բացակայում էին պետական մակարդակով գիտության քաղաքականության հստակ նպատակները, գործընթացները հիմնականում քառսային բնույթ ունեին: Այսօր էլ Հայաստանում այդ ամենը հաղթահարված չէ: Դեռևս տրված չեն հիմնական հարցերի պատասխանները. որո՞նք են ազգային հետազոտական համակարգերի և դրանց կառավարման կառուցվածքը, այդ համակարգերի օպտիմալ ու արդյունավետ չափերն ու ուղղություններն առկա ֆինանսական հնարավորությունների պայմաններում: Հետևաբար անհետաձգելի հրամայական է դառնում հետևյալ հիմնախնդիրների լուծումը.

- գիտության արդյունավետ կառավարման ու զարգացման նպատակով գիտության կառավարման առանձին պետական մարմնի ստեղծում,

- գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում,
  - գիտահետազոտական ինստիտուտների մրցունակության ու ապագայի հստակեցում,
  - համալսարանական գիտության զարգացման հնարավորությունների ճշգրտում ու ներդաշնակ համադրում ԳՀ ինստիտուտների հնարավորությունների հետ:
- Իսկ ժամանակը չի սպասում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Bush V.** Science-The Endless Frontier. A Report to the President b Vannevar Bush. Washington, 1945.
2. **Garfield E.** Citation Indexing. 1979.
3. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
4. **Գրականության համալսարանական գիտության զարգացման հնարավորությունների ճշգրտում ու ներդաշնակ համադրում ԳՀ ինստիտուտների հետ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
5. **Գրականության համալսարանական գիտության զարգացման հնարավորությունների ճշգրտում ու ներդաշնակ համադրում ԳՀ ինստիտուտների հետ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
6. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
7. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
8. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
9. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
10. **Simeonova K.** Radical and Defensiwe Strategies in the Democratization of the Bulgarian Academy of Sciences, Social Studies of Science, 1995, No 4, P. 755-776.
11. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
12. **Mosoni-Fried J.** Industrial Research in Hungary: A Victim of Structural Change. Social Studies of Science, 1995, No 4, P. 777-805.
13. **Jablecka J.** Changes in the Management and Finance of the Research System in Poland: A Survey of the Opinions of Geant Applicants. Social Studies of Science, 1995, No 4, P. 727-754.
14. **Wolf H. G.** An Academy in Transition: Organizational Success and Failure in the Process of German Unification. Social Studies of Science, 1995, No 4, P. 829-853.
15. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1995.
16. **Գրականության համալսարանական գիտության զարգացման հնարավորությունների ճշգրտում ու ներդաշնակ համադրում ԳՀ ինստիտուտների հետ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 1994.
17. **Ն ԺՅՈՒՆՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**։ Գրականության համալսարանական գիտության զարգացման մեջ Գիտությունների ազգային ակադեմիայի տեղի ու դերի ճշգրտում, 2005.

**TIGRAN TOROSYAN,**  
*PhD in Technical Sciences*

**SCIENCE TRANSFORMATION AS AN IMPORTANT  
ELEMENT OF POST-SOVIET TRANSITION**

Qualitatively new social-economic and political environment shaped in the result of the system transformation that commenced in Armenia in the 90s led to a deep crisis in different areas including science, the model of which that had been established in previous decades was not designed for newly introduced free market environment. Although fifteen years have passed since the restoration of independence when both the content and the manner of the relationship between science and authorities underwent fundamental changes, neither the conception for the development of science in Armenia has yet been worked out nor there has been an institution established which would have been responsible for this task. At the same time the management of this area has been assigned to the Ministry of Education whose attitude to the sector has not had any practical manifestations. The essay provides a comparative analysis of the science transformation policies in the countries of Central and Eastern Europe, as well as formulates the challenges in the area of science in Armenia on tackling of which the key to overcoming the current crisis is pending upon.

## ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

### ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՂ

Քաղաքականությունն արվեստ է և որպես այդպիսին այն ենթադրում է տարբեր մակարդակներում գործող քաղաքականության սուբյեկտների միջև առկա հարաբերություն, վերաբերմունք, գործողություն, կերպափոխվելու և արդիականանալու հնարավորություն:

Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ այս ամենն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ որոշակի գիտելիքներ, փոխանցված ավանդույթներ և ընդունված վարքի չափանիշները կանոնակարգող գործելակերպ, այլ կերպ ասած՝ քաղաքական մշակույթ: Քաղաքական գիտության մեջ քաղաքական մշակույթի նկատմամբ հետաքրքրություն ծագեց XX դարի 50-60-ական թթ., երբ քաղաքականության սուբյեկտների վարքաբանության համակարգված ուսումնասիրման արդյունքում գլոբալ քաղաքական մշակույթ հաստատելու նկատառումներով ամերիկացի քաղաքագետներ Ալմոնդը և Վերբան իրենց «Քաղաքացիական մշակույթ» աշխատությունում վերլուծեցին քաղաքական գործընթացի առանձնահատկություններն ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Արևմտյան Գերմանիայում և Մեքսիկայում [1]:

Մշակելով սոցիոլոգիական հարցումների արդյունքում ստացված հասարակական կարծիքի վերաբերյալ հսկայական նյութը՝ նրանք քաղաքական գործընթացների կազմակերպման և ժողովրդավարական արժեքների հաստատման ժամանակ կարևորեցին այն հանգամանքը, որ կառավարող ընտրանու՝ որպես քաղաքական մշակույթի մարմնավորողի ուսումնասիրումը հիմնային նշանակություն ունի, քանի որ էլիտար խմբերն իրենց արժեքային ուղղվածությամբ տարաբնույթ ազդեցություն ունեն քաղաքական գործընթացի վրա: Այս մոտեցման հիմքի վրա Լ.Դայմոնդը կարևորեց քաղաքական մշակույթի ուսումնասիրումն որպես քաղաքական ընտրանիների միջև ժողովրդավարական անցման գործընթացում համախմբման հիմնական գործոն [2, էջ 4-5]:

Վերջին 20 տարվա ընթացքում հանուն ժողովրդավարության տեղի ունեցող արմատական փոփոխությունները, ԽՍՀՄ-ի և ընդհանրապես սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը, այնուհանդերձ, գլոբալ իմաստով քաղաքական մշակույթ չհաստատեց: Այսօր արդեն ցանցային կառավարման արժեքային համակարգի արդ-



յունք «ոսկե միլիարդի» դեմ հանդիման կանգնած մարդկությունը չի կարողանում բավարարել իր պահանջունքները՝ ստանալ մրցունակ կրթություն, որակյալ բժշկական օգնություն, ինքնիրացվել՝ բավարարելով աշխատուժին ներկայացված միջազգային պահանջները. մի խոսքով՝ նրանք աղքատ և անհաջողակ են: Այս ամենն ստիպում է ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներում կարևորել կառավարող ընտրանու արժեքային համակարգը հասարակության քաղաքական կյանքում:

### **1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԶՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ**

Քաղաքական մշակույթը որպես ընդհանրական մշակույթի տարր և գաղափարական աշխարհայացքային երևույթ, ներառում է հասարակական և քաղաքական կառավարման մի շարք տեսություններ: Միևնույն ժամանակ, ինչպես նշում է ամերիկացի քաղաքագետ Ռ. Չիլկոնտը, որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ՝ քաղաքական մշակույթի էությունը կապված է մշակույթի այն ենթաշերտերի հետ, որոնց փոխներդաշնակման արդյունքում տեղի է ունենում անձի սոցիալականացում, արժեքների արդիականացում այն իրականությունում, որտեղ գործնելություն է ծավալում կառավարող ընտրանին [3, էջ 22-23]:

Քաղաքական մշակույթը կարելի է դիտարկել որպես տվյալ երկրի հասարակական կյանքում մարդկանց վարքի կերպի ամբողջություն, որը, մարմնավորելով իրենց արժեքային պատկերացումները քաղաքականության աշխարհի նպատակների մասին պահպանում և մշակում է ամրագրված նորմերը, ավանդույթները՝ պետության և հասարակության փոխհարաբերություններում: Քաղաքական մշակույթը, որպես բարդ և բազմաչափ երևույթ, դիտարկվում է՝

- կառավարման և քաղաքականության հետ առնչություն ունեցող տարրերի ամբողջություն (Ռ. Տակեր).

- քաղաքական համակարգում սուբյեկտների վարքագիծը սահմանող պատկերացումների, զգացումների, մոտեցումների այնպիսի ամբողջություն, որոնք ապահովում են ելակետային կանոնները և իմաստավորում, կանոնակարգում են քաղաքական գործընթացը: Այն ներառում է ինչպես քաղաքական իդեալները, այնպես էլ քաղաքական կառուցակարգի կողմնորոշիչ նորմերը: Այսպիսով, քաղաքական մշակույթը քաղաքականության հոգեբանական և սուբյեկտիվ չափումների ամբողջություն է (Լ. Պայ).

- խորհրդանիշների, արժեքների և փորձարարական համոզմունքների համակարգ, որը որոշում է այն իրավիճակը, որտեղ տեղի է ունենում քաղաքական գործունեություն (Ս. Վերբա) [4, էջ 163]:

Հանրագումարելով քաղաքականության տեսության մեջ առկա մեկնաբանությունները՝ ռուս քաղաքագետ Ա. Մելվիլն ընդհանրացրել է քաղաքական մշակույթի մեկնաբանման երեք հիմնական ուղղություն՝

▪ քաղաքական մշակույթը որպես մշակութային ամբողջական համակարգ, ոչ միայն քաղաքականության սուբյեկտիվ բովանդակության արտահայտությունն է, այլ խիստ իդեալական - ոգեղեն կառուցակարգ (Ալմոնդ, Վերբա): Քաղաքական մշակույթը, վերածվելով հասարակական գիտակցության ձևի, իր արտահայտությունն է ստանում մտահայեցողությունում և վարքաբանությունում:

▪ քաղաքական մշակույթն անհրաժեշտ է դիտարկել որպես նորմատիվային պահանջումների (Ստիվեն Ուայթ) արտահայտություն կամ քաղաքականությունում որոշակիացված վարքաբանական տիպերի ամբողջություն (Դ. Պլեյնո):

▪ քաղաքական մշակույթը (Ի.Շապիրո, Պ.Շարան, Ու.Ռոզենբաում) դիտարկում են որպես միջոց, մարդու քաղաքական գործունեության կենսաձև, որը ենթադրում է որոշակի համոզումների, իդեալների, սկզբունքների և այլ արժեքների դրսևորում վարքում [5, էջ 513]:

Ակնհայտ է, որ քաղաքական մշակույթը հանրագումարում է որոշակի արժեքային կողմնորոշումներ, որոնք մոտիվացնում են քաղաքացու վարքը:

Քաղաքական մշակույթը տվյալ քաղաքական համակարգի մասնակիցների անձնական կողմնորոշիչների և տեսակետների ամբողջությունն է: Սա սուբյեկտիվ ոլորտ է, որը ձևավորում և իմաստավորում է քաղաքական գործընթացը: Նշված քաղաքական կողմնորոշիչները ներառում են մի շարք տարրեր.

▪ *Ճանաչողական*. քաղաքական դերակատարների և գաղափարների ճիշտ կամ սխալ իմացություն:

▪ *ակտիվ*. քաղաքական դերակատարների նկատմամբ կապի, կողմնակալության, հակադրվածության և այլ զգացմունքների ամբողջություն:

▪ *գնահատող*. քաղաքական դերակատարների մասին գաղափարների և դատողությունների ամբողջություն, որը սովորաբար օգտագործվում է քաղաքական օբյեկտների և իրադարձությունների նկատմամբ որպես գնահատման չափանիշ:

Քաղաքական մշակույթը կառավարող ընտրանու վարքաբանության կառուցակարգում հանրագումարում է՝

ա) քաղաքական փաստերի իմացության, վերլուծության և կանխատեսման հնարավորություն:

բ) քաղաքական իրադարձությունների իրատես գնահատում՝ քաղաքական տարածության և ժամանակի մեջ «ես»-ի ադապտացիայի հնարավորություն:

գ) որոշակիացված քաղաքական դիրքորոշում, որը ենթադրում է ռացիոնալի և իռացիոնալի ներդաշնակում: Այս հատկանիշների կարելի է հնարավորություն է տալիս դիտարկել ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող կառավարող ընտրանու արժեքային համակարգը:

Այսպիսով, քաղաքական մշակույթը կարելի է համարել քաղաքական նորմեր, արժեքներ, իդեալներ և ապագայի ծրագրեր ընդգրկող խորհրդանշական համակարգ, որը քաղաքական տեղեկատվության համակարգված դաշտը ոչ միայն ձևավորում է, այլև զարգացնում և արդիականացնում:

Որպես բարդ, բազմաշերտ հասկացություն՝ այն ամփոփում է քաղաքական սովորույթներում ամրագրված *անցյալը* և *ներկան*՝ արտացոլված քաղաքական իրականությանն իր մասնակցությունը բերող մարդկանց վարքաբանության մեջ, և հնարավորի, ցանկալիի և արժանավորի հետ ներդաշնակ *ապագան*: Քաղաքական մշակույթի այս ենթաշերտերը, միմյանց լրացնելով, անցյալ-ներկա-ապագա եռաչափ արժեքային համակարգում էքստրապոլացիայի են ենթարկում ապագայի չափումները, առանց որոնց մարդկությունը կարող է կանգնել բնապահպանական, տնտեսական, քաղաքական և հոգևոր ճգնաժամերի առջև:

Այս նկատառումներից էլ ելնելով՝ առաջարկում ենք քաղաքական մշակույթը դիտարկել՝

- գլոբալ քաղաքակրթության ընդհանուր համակարգի կառուցվածքային բաղադրամաս.
- քաղաքացիների կողմից պետական քաղաքականության իմացություն և այն իրականացնելու ընդունակություն.
- քաղաքական կյանքին մասնակցության ակտիվության աստիճանի բնութագրում.
- մարդու իրավունքների ու պարտականությունների ըմբռնման և գիտելիքների օգտագործման աստիճանի բնութագրում.
- գոյություն ունեցող քաղաքական համակարգի արդիականացման և ժողովրդավարացման պայման.
- մարդասիրական գիտակցության արժեքային ամբողջություն.
- քաղաքական համակարգի կայուն զարգացման գործոն.
- գլոբալ կառավարման արժեքային համակարգ:

Մեր կարծիքով այսպիսի մոտեցմամբ ակնհայտ է դառնում, որ քաղաքական մշակույթն ունի «ես»-ի քաղաքական ինքնությունն արդիականացնող որոշակի գործառույթներ, որոնք են.

ա) *նախազժային*. կապված ապագայի մարտահրավերներին (պետականության, գլոբալացման) պատասխանելու և մարդասիրական (ըստ Է.Ֆրոմի՝ առողջ) հասարակություն կերտելու, սեփական ազգային «ես»-ի ինքնությունը պահպանելու հեռանկարի հետ.

բ) *շահադրդված*. կապված քաղաքական վարքագծի խթանիչների հետ, որոնց օգնությամբ «ես»-ը մասնակցում է քաղաքական գործընթացին.

գ) *նորմատիվային*. կապված որոշակի վարքաբանական (իրավաբանական սանկցիաների վրա չհենված) «օրենսդրության»՝ վարքի չափանմուշների, արժեքների հեղինակության հետ,

դ) *Ճանաչողական*. կապված ժամանակակից գլոբալ քաղաքակրթական իրականությունն ընկալելու, նրանում իր տեղն ու դերը որոշելու, իր ինքնությամբ գլոբալ ինքնության մաս կազմելու հետ:

## **2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԱՎՏՈՐԻՏԱՐԻՉՄԻՑ ԺՈՂՈՎՐԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Համընդհանուր ժողովրդավարացում ենթադրող զարգացման այս հարացույցը կոչված է հաստատելու գլոբալ արժեքային համակարգ, որը նպաստավոր պայմաններ ստեղծելով քաղաքական համակարգի կերպափոխման համար հնարավորություն է տալիս հասարակությանը բնականոն կերպով սոցիալականությանն և էթնոմշակութային արժեքների փոխներդաշնակման հիմքի վրա բնականոն արդիականանալ: Ըստ Ալմոնդի՝ ազգի քաղաքական մշակույթն իր մեջ ընդգրկում է քաղաքացիների կողմնորոշումների եռամակարդակ վերաբերմունք՝ *քաղաքական համակարգի, քաղաքական ընթացքի ու քաղաքական կուրսի և քաղաքական կուրսի հետևանքների ու արդյունքների նկատմամբ* [6, էջ 94]:

Ուստի անհարժեշտ է կարևորել արևմտյան և արևելյան տիպի մշակույթները, որոնք ունենալով տարբեր արժեքային համակարգեր, կառավարող ընտրանու համար տարածության և ժամանակի մեջ հոգնականորեն դրսևորվելու հնարավորություն են ստեղծում: Արևմտյան տիպի քաղաքական մշակույթը համակարգելով ժողովրդավարական արժեքները, հնարավորություն է տալիս քաղաքացուն ինքնավերարտադրվել, ինքնակառավարվել և ինքնաիրացվել: Այս սկզբունքների կիրառումը քաղաքականություն ներմուծվեց այսպես կոչված «ազատ մասնակցության», «գործերին չմիջամտելու» (*laissez faire*) փիլիսոփայությունը, որի համար իրավունքը կառավարման կարևորագույն գործիք է, որը ձևավորում է նրա ոճը, երաշխավորում է անձի ինքնորոշումը, ազատ շուկայի զարգացումը, պետության չեզոքությունը քաղաքացիական հասարակության նկատմամբ: Այս մոտեցումը ենթադրում է՝

- գաղափարական և քաղաքական հոգնականություն.
- հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ներկայացուցչների և իշխանության ընտրովիություն.
- հասարակության համակարգային վերահսկողություն և այնպիսի կառուցակարգերի առկայություն, որոնք հավասարակշռում են տարբեր էլիտար խմբավորումները և իշխանության կենտրոնները: Կողմնորոշվելով դեպի իրատեսություն՝ վերջիններս պարտավոր են քաղաքական կառավարում իրականացնել՝ պահպանելով սոցիալական երկխոսություն, սերունդների համերաշխություն և հանդուրժողականություն ընդդիմադիր ընտրանու նկատմամբ:

Արևելյան քաղաքական մշակութային նորմերը և ավանդույթները կամխորոշված են ավանդական երկրագործական հանրույթների կենսագործունեության առանձնահատկություններով, որոնց վրա, ինչպես նշում է Ի. Վասիլենկոն, «ազդեցիկ մշանակություն ունեն արաբախլա-

մական, կոնֆուցիական և հնդ-բուդդիստական մշակութային արժեքները: Այդ մարդկանց հիմնական կողմնորոշումները ձևավորվեցին իշխանական խմբերի կողմից հասարակության վրա իրականացվող գերիշխանության և մասնավոր սեփականության ազդեցության տակ» [7, էջ 79-80]:

Արևելյան քաղաքական մշակույթի տվյալ արժեքայի կողմնորոշիչներն ամրապնդեցին համոզվածությունը հասարակ մարդու և իշխանության միջև միջնորդի՝ Ուսուցչի պարտադիր անհրաժեշտությունը, որի օգնությամբ քաղաքական իշխանությունը դիտարկվում է աստվածային կառավարման բնագավառ՝ «Աստծո երթն աշխարհում» սկզբունքով, համաձայն որի բացարձականացվում է կառավարող ընտրանու գերիշխանությունը: Ակնհայտ է արևմտյան և արևելյան քաղաքական մշակույթների հակադրությունը, այնուհանդերձ քաղաքակրթությանը հայտնի է արևմուտքի և արևելքի բավականին արդյունավետ փոխներգործություն, օրինակ՝ ճապոնիան, որտեղ հետպատերազմյան օկուպացիայի հետևանքները վերացնելու նկատառումներով կառավարող ընտրանին աշխարհի առաջատար արդյունաբերական պետությունների տեխնոլոգիական առաջընթացի փորձն օգտագործելով, կարողացավ ազատական-ժողովրդավարական արժեքների հիմքի վրա կերպափոխել ճապոնական ավանդական մշակույթը: Ընդհանրացնելով հետխորհրդային տարածքում տեղի ունեցող ժողովրդավարական անցման գործընթացը, կարելի է նշել, որ արևմուտքի և արևելքի բավականին արդյունավետ փոխազդեցությունն ազդում է նաև միջին աշխարհաքաղաքական դիրք զբաղեցնող երկրների (Ռուսաստան, Չայնաստան, Ղազախստան և այլն) քաղաքական կյանքի վրա: Այստեղ ձևավորվել է յուրօրինակ միաձույլ (սինկրետ) մշակույթ, որտեղ կառավարող ընտրանին, հանդես գալով արևելյան և արևմտյան արժեքների մարմնավորող՝ արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով, փորձում է զուգակցել այդ մշակույթների հիմքի վրա ստեղծված տեխնոլոգիաները՝ քաղաքացիների քաղաքական մասնակցությունն ապահովելու համար:

### **3. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ավտորիտարիզմից անցումը դեպի ժողովրդավարության ենթադրում է նոր արժեքային համակարգի ստեղծում, որն ուղեկցվում է քաղաքական գիտակցության ազատականացմամբ: Ժողովրդավարացման գործընթացում գտնվող հայ իրականության համար պարզ է, որ ազատական արժեքային համակարգի ներդրման գործընթացը պահանջում է ոչ միայն որոշակի ժամանակ, այլև որոշակի գիտելիքներ, փորձ, սերնդափոխություն: Այս ամենն էլ, հենվելով փոխադարձ ավանդույթների և դարերի հոլովություն մշակված վարքի չափանիշների վրա, ձևավորում է ժամանակի մարտահրավերներին պատասխանող

կառավարող ընտրանի, որը կարողանում է հարահոս կերպափոխման գործընթացում մարմնավորել ժողովրդավարական քաղաքական մշակույթը:

ՀՀ ժողովրդավարական անցմանը բնորոշ է սոցիալական կառուցվածքի տրոհվածություն, որը դեռևս չի համապատասխանում ներդրվող ազատական արժեքների համակարգի պահանջներին, որոնք կողմնորոշված են դեպի ընտրության ազատություն, պրագմատիզմ, մարդու կատարողական հնարավորություններ:

Քաղաքական բարեփոխումների փորձը ՀՀ-ում հավաստում է, որ ժողովրդավարական անցման որոշակի փուլում քաղաքական համակարգի մշակութային հիմք կարող է հանդիսանալ իշխանության ինստիտուցիոնալացված դիմակայությունը և բնակչության օտարվածությունը: Սակայն անցումային քաղաքական մշակույթի նման բնութագիրն անբավարար է: Իր զարգացման բոլոր փուլերում և աստիճաններում հասարակության քաղաքական մշակույթը կատարում է իր կարևորագույն գործառույթներից մեկը՝ անձի քաղաքական սոցիալականացումը: Մարդու մուտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներառումն իշխանական հարաբերություններում իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների և նորմերի, քաղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում:

Իր հերթին, ՀՀ քաղաքական կյանք նոր սերունդներ մուտքագրող քաղաքական սոցիալականացումն ապահովում է հասարակության քաղաքական զարգացման ժառանգականությունը և թույլ տալիս համաձայնության հասնել պետության և քաղաքացու միջև, որն էլ հնարավորություն է տալիս կառավարող ընտրանուն հանդես գալ որպես քաղաքական մշակույթի մարմնավորող: Այդ առումով ժողովրդավարական անցման պայմաններում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում սոցիալականացման բազմաչափ գործընթացը: Եթե այս կառուցակարգը հաջողությամբ է գործում, ապա անհատը ձեռք է բերում ոչ միայն անհրաժեշտ կրթական և մասնագիտական պատրաստվածություն, այլև մոտիվացիոն նպատակներ, ասոցիատիվ կապեր և արժեքներ, որոնք ապահովում են նույնականությունն այս կամ այն սոցիալական խմբին: Ազատական արժեքների հաստատման հիմքի վրա ընթացող սոցիալականացման բազմաչափ գործընթացի տրամաբանությունը ՀՀ-ում խախտված է: Արդյունքում, անձը քաղաքականություն է մտնում ոչ միայն տրոհված և իրարամերժ արժեքային համակարգով, այլև քաղաքական իրականությունից օտարված, քանի որ անտեսված է ազատական և ավանդական մշակութային արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունը:

Նման պարագայում ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հասարակություններում առկա է երկու հիմնախնդիր՝

1. սոցիալական անկայունության և սոցիալացման փուլերի միջև անհամաձայնությունը սահմանափակում է անհատի իրատես նույնա-

կանացման հեռանկարը, որի արդյունքում անհատն անընդհատ նույնականացման դեգերումների մեջ է,

2. նույնականության այդ զգացումը կարող է ավելի թուլանալ, եթե արոՖեսիոնալիզմը, շահադրական նպատակները և ասոցիատիվ զգացողությունն անհրաժեշտ աստիճանով չեն զարգանում:

Որպես այդ դժվարությունների հետևանք՝ ժողովրդավարական անցման պայամաններում գտնվող ՀՀ-ի քաղաքական մշակույթում ի հայտ է եկել հարաբերական անորոշություն: Սակայն ինչպես նշում է ռուս քաղաքագետ Փելմանը, հիմնական ինստիտուտների կառուցվածքային վազքի և քաղաքական սոցիալացման փուլերի անորոշության հետ բախվել են հետխորհրդային բոլոր համրապետությունները [8]: Ոչ վաղ անցյալում սոցիալականացման գործընթացի դերակատարումն ստանձնել էին խորհրդային կրթական համակարգը, ՀամԼԿԵՄ-ը, ԽՄԿԿ-ն: Իրենց տարբերություններով հանդերձ՝ նրանք շատ ընդհանուր բան ունեին՝ ենթակայություն գոյություն ունեցող հիերարխիային, հարկադրանքի մեթոդների օգտագործում, գիտակցության մեջ մարքսիզմ-լենինիզմի ներդրում՝ որպես միակ ճշմարիտ քաղաքական «մեծ ուսմունք»: Ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում խզվեցին վարչական կապերը քաղաքական սոցիալացման այդ ձևերի միջև, լուծարվեց նպատակային ուղղվածությունը և իրենց նշանակությունը կորցրած կառույցները: Խզմանը զուգահեռ առաջարկված նորը՝ իր սոցիալական բեռնվածությամբ, տրոհված արժեքային համակարգով, դեռևս չի նպաստում քաղաքացիական մշակույթի ձևավորմանը և զարգացմանը: Ուստի քաղաքական սոցիալականացման նոր ինստիտուցիոնալ ուղիների ստեղծումը տեղի կունենա իշխանական հարաբերությունների և՛ ուղղահայացով, և՛ հորիզոնականով:

ՀՀ-ում քաղաքացիական մշակույթի չզարգացվածության պատճառով կառավարող ընտրանու վարքաբանությունում այսօր սկսել են վճռորոշ դեր խաղալ հետևյալ գործոնները.

1. **Ազգայնականություն (նացիոնալիզմ) կամ աշխարհաքաղաքացիություն (կոսմոպոլիտիզմ)**, որոնք փորձում են դառնալ անհատի սոցիալական նույնականացման գլխավոր միջոց: ՀՀ և՛ ազգայնական, և՛ կոսմոպոլիտ կառավարող ընտրանու խմբերն օգտագործում են մարզինալ շերտերի անլիարժեքության բարդույթը և նրանց ներգրավում իրենց քաղաքական կուսակցությունների և շարժումների ուղեծրում:

2. **Սոցիալական հովանավորչության պահանջմունքի աճ**: Օգտվելով էլիտար խմբերի աջակցությունից՝ խարիզմատիկ գործիչները բնակչության հիմնական զանգվածի և քաղաքական որոշումների ընդունման ոլորտի միջև, սոցիալական ներկայացուցչության (ընտրական համակարգ և ճնշման խմբեր) համակարգի բացակայության պայմաններում իրականացնում են յուրօրինակ հաղորդակցական գործառույթներ:

3. **Սոցիալական հիշողություն, այսինքն՝ ազգի պատմական փորձ**: ՀՀ սոցիալական հիշողությունն արտացոլում է հայկական մշա-

կութային ոլորտի հարաբերական անկախությունը և համարվում է քաղաքական զարգացման սոցիալական պայմանների համակարգի առավել էական բաղադրիչներից մեկը: Այն դրսևորվում է մշակութային նորմերի միջոցով, որոնք հասարակությունը երբեմն չի էլ գիտակցում: Անձերի տիպերը, անհատականացման աստիճանը, սոցիալական կապերի կառուցվածքը և մարդու ձևավորումը՝ այս ամենի վրա իր դրոշմն են դրել դարերով ձևավորված նորմերը և արժեքները՝ ամրագրված լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, սովորույթներում: Ժողովրդավարացման գործընթացը չպետք է հասկանալ որպես պայքար բնակչության ավանդույթների և սոցիալական հիշողության դեմ: «Անորակ ժողովրդավարության» պատճառներն ավանդույթներում չեն, որպես այդպիսիք, այլ նրանում, որ որոշ հանրույթների մոտ գերիշխում է նրանցից մեկը՝ պետականապաշտության ավանդույթը (օր.՝ Թուրքիա), որը մերժում է արժեքների, կյանքի ոճերի և մտածողության բազմազանությունը և կողմնակից է զոհողության, հնազանդության, ենթարկվելուն, մյուսներին ճնշելուն՝ հասարակությանը զրկելով հոգևոր հոգնականությունից և հանդուրժողականության մթնոլորտից:

ՀՀ-ում նույնականացման հիմնահարցի լուծման համար ընդունելի է երկու հիմնական ճանապարհ՝

1. Խարիզմատիկ լիդերները, օգտվելով կառավարող ընտրանու աջակցությունից, հնարավորություն են ստանում զանգվածներին ուղղորդել դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհով՝ մարգինալացնելով և մանիպուլյացնելով նրանց գիտակցությունը: Սակայն այդ ուղին փակուղային է և ենթադրում է խարիզմատիկ լիդերների կերպափոխում դեպի ռացիոնալ - իրավական (լեզալ) լեգիտիմություն:

2. Նույնականացման զգացողությունն իրատեսությամբ օժտելու համար ենթադրվում է մարդկանց վրա ազդելու պակաս դրամատիկ և համեմատաբար արդյունավետ կառուցակարգ, որն էլ առաջարկում է կառավարող ընտրանու ուժերի կենտրոնացում մասնագիտական ուսուցման և կառավարման արդյունավետության բարձրացման վրա:

ՀՀ սոցիալական բևեռվածությունը կառավարող ընտրանուն հնարավորություն չի տալիս աջակցելու հստակ երաշխիքներ առաջարկել քաղաքական ուժերին, որոնք, մինչև նույն է, ձգտում են սոցիալական փոփոխությունների: Նման աջակցության համար կառավարող ընտրանուն անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիներին ապացուցել անհատական սոցիալական շարժունակության հնարավորությունների իրական լինելը, ստեղծել հաղորդակցման արդյունավետ ուղիներ և արարողակարգային մակարդակում գործնականորեն ցույց տալ իշխանության նկատմամբ սեփական հավակնությունների հիմնավորվածությունը:

ՀՀ ժողովրդավարական անցման սկզբնական փուլում, երբ հանրային կյանքի նկատմամբ ամբողջատիրական վերահսկողության հանգույցները խզվեցին, իսկ քաղաքացիական հասարակությունն ու իրավական պետությունը դեռ գտնվում են կայացման փուլում, անհրաժեշտ է, որ զանգվածների կառավարումն ստանձնած ընտրանին կա-



րողանա իրատեսորեն հիմնավորել իր հավակնությունները: Այսօր արդեն ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացի արդյունքում ձևավորվել են արժեքային առունով ազատականության հիմքի վրա տրոհված ընտրախավեր, որոնք, շահագրգռված լինելով տնտեսական գերիշխանությամբ և շահութաբեր տեխնոլոգիաների ներդրմամբ, իրատես են դարձնում հանրային և պետական կառավարումը:

Այդ իրատեսական ուժերին դիմակայում են ազգային միասնության և փորձի, տեսակի եզակիության պահպանման և ընդդեմ մեխանիկական նույնության պայքարի կողմնակիցները: Եթե առաջինը ենթադրում է համահարթեցման տանող տնտեսավարում և անդամություն տրանսազգային ընկերություններին, ապա երկրորդը՝ դեպի քաղաքական չեզոքության և ազգային միասնության տանող կառավարում:

ՀՀ ավանդական ընտրանու դիմակայությունը պայմանավորված է նաև սոցիալական շարժունակության և քաղաքական ինստիտուցիոնալացման խզումով, որը, ըստ անցումագետների, անհրաժեշտ է, որպեսզի քաղաքական համակարգն ադապտացվի ազատական արժեքների վրա հիմնված համագործակցման ձևերին ու սոցիալական պահանջներին համապատասխանող պաշարների բաշխմանը [9, էջ 7-8]: Առկա է նաև կուտակված բարիքների բաշխումից և քաղաքական որոշումների իրական հետևանքների անհամապատասխանությունից ծագող անբավարարվածության աճը: Վերը նշված գործոնները ՀՀ-ում հանգեցրել են քաղաքական զարգացման հինգ ճգնաժամերի նույնականության, լեգիտիմության, շարժունակության, ներթափանցման և բաշխման:

Այս ճգնաժամերը, ժողովրդավարական անցումով պայմանավորված թույլ զարգացած համագործակցման մշակույթի և քաղաքական որոշումների ընդունման գործընթացում «խոցելի խմբերի» շահերի անտեսման արդյունք են: Միաժամանակ նշենք, որ ժողովրդավարական անցման երկրներում վերոհիշյալ ճգնաժամերի հաղթահարման համար կառավարող ընտրանին՝ որպես քաղաքական մշակույթի մարմնավորող պետք է հաշվի առնի հետևյալ հիմնախնդիրները.

- ժողովրդավարական քաղաքական մշակույթի համապարփակ բնույթի ընդունում և քաղաքական գործունեության սահմանների ու հնարավորությունների մշակում.

- ավանդույթների նկատմամբ վերաբերմունքի հստակեցում, քանի որ բացառելով իր անցյալը, քաղաքական համակարգը չի կարող հեռանկարային կանխատեսումներ կատարել.

- խոսքի մշակույթը բարելավելու, ազգային ինքնությունը կարևորելու և ընդդիմախոսների գործնական առաջարկությունները չթերագնահատելու անհրաժեշտություն.

- քաղաքական համակարգում գոյություն ունեցող դերերն արդյունավետ օգտագործելու հարցում անվստահության հաղթահարում:

Հանրագումարենք: Քաղաքական մշակույթն իր բազմաչափությամբ որոշակի սոցիալական և էթնիկական արժեքային համակարգերի

արտահայտություն է: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել արևելյան և արևմտյան քաղաքական մշակույթների ազդեցությունը գլոբալ կառավարման ընդհանուր կառուցակարգերի հաստատման վրա: Ժողովրդավարական քաղաքական մշակույթը ենթադրում է լեգիտիմության ձգտող կառավարող ընտրանու առկայություն, որի համար որոշիչ է հասարակության քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացում պոլիարխիկ արժեքների ներդրումը հասրակական գիտակցություն: Կարևորելով ՀՀ-ում ժողովրդավարական քաղաքական մշակույթի հաստատումը՝ անհրաժեշտ է պայմաններ ստեղծել քաղաքական համակարգի բնականոն կերպափոխման համար: Հեղափոխական, կոռումպացված, մարզինալացված մթնոլորտը չի նպաստում ո՛չ քաղաքացիական, ո՛չ սոցիալական և ո՛չ էլ մշակութային երկխոսությանը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. **Almond G.** The Intellectual History of the Civic Culture Concept // Almond G., Verba S. The Civic Culture Revisited: An analytic study.- Boston, 1980.
2. Political Culture and Democracy in Developing Countries. Edited by Larry Diamond. Lynne Rienner Publishers. Boulder & London. 1993.
3. **Чилкот Р.Х.** Теории сравнительной политологии. В поисках парадигмы / Пер. с англ. – М.: ИНФРА-М, Изд. «Весь мир», 2001.
4. Практикум по политологии: Учебное пособие для вузов / Под ред. **М. А. Василика**. М.: Гардарики, 1999.
5. **Мир политической науки.** Учебник. В 2 Кн. 1. Категории / Отв. ред. А.Ю.Мельвиль. М.: Просвещение, 2004.
6. **Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.** Сравнительная политология сегодня: Мировой обзор. Пер. с англ. / Под ред. М.В.Ильина, А. Ю. Мельвиля. – М.: Аспект Пресс, 2002.
7. **Василенко И.А.** Политическая глобалистика: Учебное пособие для вузов. – М.: Логос, 2000.
8. **Гельман В.** Как выйти из неопределенности? // Pro et Contra, Т.3, №3, 1998.
9. **Капустин Б.Г.** Конец «транзитологии»? О теоретическом осмыслении первого посткоммунистического десятилетия. // Полис, №4, 2001.

**MARIAM MARGARYAN**

*PhD of Philosophy*

**RULING ELITE AS AN INCARNATOR OF  
THE POLITICAL CULTURE**

Political culture in its multidimensional structure is the expression of social and ethnic value system. From this aspect it is necessary to stress the importance impact of eastern and western political cultures on the establishment of the general mechanisms of the global governance. Democratic political culture supposes the presence of ruling elite which strives for legitimacy, and for which it is decisive to implement poliarchic values into the social consciousness during the process of political system transformation. Emphasizing the establishment of democratic political culture in the RA, we have to offer necessary facilities for natural transformation of the political system. Revolutionary, corrupted, marginalized atmosphere does not favour either civil, or social, or cultural dialog.



**ՕԳՏԱԿԱՐ ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՆԿԻՐՎԱԾ  
ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ**

«Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր»\* գրքում ամփոփ ներկայացված են պատմական տարբեր ժամանակահատվածներում հայոց մեծերի կառավարման վերաբերյալ ունեցած պատկերացումները, հայացքները, ինչպես նաև տեսությունները և ուղղությունները: Հեղինակները նախ քննարկում են հինգերորդ դարում հայ կառավարչական մտքի սկզբնավորման հարցերը, մասնավորապես, շեշտը դնելով Եզնիկ Կողբացու («Իշխանավորի վարքականոն»), Փավստոս Բուզանդի («Իշխանական բռնությունը»), Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու աշխատությունների և նրանց հայացքների ուսումնասիրությանը:

Այնուհետև գրքում քննարկվում են հանրային կառավարման տեսական և գործնական հիմնահարցերը՝ հանրային կառավարման էությունը, հանրային կառավարման համակարգը, պետական կառավարման գործառույթները և այլն: Գրքում ներկայացված են նաև պետական կառավարումը Մեծ Հայքում և Կիլիկյան Հայաստանում: Հեղինակների կողմից ներկայացվել են նաև հանրային կառավարման մեթոդանության վերաբերյալ հայ մտածողների (Մխիթար Գոշ «Դատաստանագիրք», Ներսես Շնորհալի «Թուղթ ընդհանրական», և այլոց) մոտեցումները, ինչպես նաև Գրիգոր Տաթևացու կառավարման հիմնախնդիրների վերաբերյալ ունեցած հայացքները:

\* Մուվարյան Յու. Մ., Սարինյան Ռ. Ն., Միրզոյան Վ. Ա., Հովհաննիսյան Կ.Ա., Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր, Եր., «ՏՃտեսագետ», 2005, 320 էջ:

Պատմական հաջորդ ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII դարի 50-60-ական թվականներից մինչև XX դարը: Այս բաժնում հեղինակները հետազոտել են Ստեփանոս Նազարյանի, Գրիգոր Արծրունու (աշխատանքի ռացիոնալացման դրվատանքը), Սողոմոն Եղիազարյանի, Ավետիք Արասխանյանի հայացքները:

Գրքում հանրային կառավարման հիմնախնդիրները XX դարում քննարկվել են Վահան Տոտոնյանցի (կոոպերացիայի տեսաբան), Գարեգին Նժդեհի աշխատությունների հիման վրա: Ինչպես նաև ուսումնասիրվել են կառավարման տեսության զարգացման հարցերը խորհրդային իշխանության տարիներին և հետխորհրդային շրջանում: Գիրքն ընդգրկում է նաև հարցեր կապված Երրորդ հանրապետությունում հանրային կառավարման՝ սահմանադրական հիմքերի, համապետական, ֆունկցիոնալ և ճյուղային կառավարման մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ:

Վերջում ներկայացված են գեղարվեստական գրականության էջերում կառավարման հարցերին առնչվող դրույթները, մասնավորապես, խոսքի միջոցով կառավարման եղանակները:

«Չայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր» գիրքը հասցեագրված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, դասախոսներին, ասպիրանտներին, հանրային կառավարման համակարգի աշխատողներին, ինչպես նաև հայ կառավարչական մտքի պատմությամբ հետաքրքրվողներին:

*Վիլեն Խաչատրյան*

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

**Հոդվածների ներկայացման ձևը**

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափին, ունենա լուսանցքներ՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում՝ կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1 (Single): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը [օրինակ՝ 15.04.2005 թ.]:

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով [օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»]:

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-

կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **նգացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և ամսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:
2. *Шаранова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира. "Наука", М, 1986. с. 105.
3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
4. <http://www@oecd.org/dsti/sti>, March 1, 2001.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

*Խմբագրական խորհուրդ*

Խմբագիր՝	<b>ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱՆ</b>
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝	<b>ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ</b>
Սրբագրիչ՝	<b>ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ</b>
Տեխնիկական խմբագիր՝	<b>ԱՍՅԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ</b>

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
ծավալը՝ **7.25** տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:

---

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ  
Երևան 10, Հանրապետության 65, հեռ. 52-36-80, 52-36-00